

4888

Պուշկին

Կարգադրանքի սրբագրություն

1825

891.71

Պ-97

Ալեքսանդր Բարատյան

1895

0199

20/5/37

Ա. ՊՈՒՇԿԻՆ

891.71

Պ-97

Կ Ա Պ Ի Տ Ա Ն Ի

Ա Ղ Ջ Ի Կ Ը

2003

ԹԱԳՐԱՆՆՑ

ՅԵՐՈՒԹԻՒՆ ԿԵՐԱՊԵՏԵԼՆ



Ա. Ղ. ԲՍԱՆԳՐԱՊՈՒ

ՏՊԱՐԱՆ ԳԵՈՐԳ Ս. ՍԱՆՈՅԱՆՑԻ

пография К. С. Саноянца. Бебутовск. ул., собственн. домъ

1895

36242-42.

Дозволено Цензурою. Тифлисъ, 6 Марта 1895 года.



20081-59 g

ԿԱՊԻՏԱՆԻ ԱՂՋԻԿԸ.

Մանկութիւնից անազարտ պահիր պատիւը
Ա. — Ե.

I

ԹԻՒՆՆՊԱՀ ԶՕՐՔԻ ՍԵՐԹԱՆՏ

Հէնց վաղըն և ևթ հարող էր լինել
Թիկնապահ զօրքում նա մի կապիտան,
„Հարկ չկայ, Թող գեռ զօրքում ծառայէ“
Այ գեղեցիկ խօսք, Թող թիչ ասնջուր...
...
Բայց ո՞ր է նրա հայրը:

Կնէսէին

Իմ հայրս, Անգրեյ Պետրովիչ Գրինեվը, իւր երես֊
տարգուծեան ժամանակ ծառայել է կոմս Մինիխի մօտ և
ծառայութիւնից դուրս է եկել 17.. Թւին պրեմեօր-մայեօրի
աստիճանով: Այնուհետև ապրել է Սիմբիւրսկի նահանգում
գտնուած իւր մի գիւղում, ուր և ամուսնացել է նոյն
տեղի մի աղքատ ազնուականի աղջկայ, Աւգոստա Վասիլև
լեվնա Բ.-ի հետ: Այս ամուսնութիւնից նոքա ունեցել
են ինն սրգիներ: Իմ բոլոր եղբայրներս ու բօյրերս մե
ռել են գեռ մանուկ հասակում: Ես, մեր մօտիկ ազգակից,
Թիկնապահ զօրքի մայեօր իշխան Բ.-ի շնորհով, ընդու

նուած էի Սիմեօնովսկի գնդի մէջ սերժանտի աստիճանով, բայց մինչև ամեն գիտութիւն սովորել պրծնելս, համարուած էի արձակուրդով հեռացած: Այն ժամանակները մենք դաստիարակուած էինք սչ այնպէս, ինչպէս այժմ: Հինգ տարեկան հասակիցս ինձ յանձնած են եղել ձիապան Սովելիչին, որ իւր ժուժկալ բարքի պատճառով արժանացել էր ինձ գաստիարակ նշանակուելու պատուին: Տասներկու տարեկան հասակումս, նրա հսկողութեան տակ, ես արդէն սովորել էի ռուսերէն կարգալ—գրել և կարող էի սուղջ կերպով գատել քերձէ-շան բոլոր յատկութիւնների մասին: Այս ժամանակ հայրս Մոսկուայից ինձ ռուսացի բերել տուեց մի ֆրանսիացի, Բուպրէ, կամ մուսիօ Բուպրէ անունով, որի հետ բերուեց նաև գիտու և ձիթենու իւղի տարեկան պաշար: Նրա գալուստը սաստիկ դուր չեկաւ Սովելիչին:

— Փնօք Աստծոյ, մըրթմըրթում էր նա. տղան մաքուր լուացուած է, սանտրուած ու փորը կուշտ. էլ բնչին էր պէտք աւելորդ փողեր ծախսել ու վարձել մի ինչ որ մուսիւ, կարծես մեզանու՞մ էլ մարդ չկար:

Բուպրէն իւր հայրենիքում եղել էր վարսավիր, յետոյ գինուոր էր մտել Պրուսիայում, ապա եկել էր Ռուսաստան pour être outchitel (ռուսացուցութիւն անելու համար) շատ էլ չհասկանալով այս խօսքերի նշանակութիւնը: Նա լու մարդ էր, բայց քամիզլուխ ու չափազանց անառակ էր: Նրա բնաւորութեան զլխաւոր թուլութիւնն էր—սաստիկ միտումը գէպի գեղեցիկ սեռը. իւր սիրային քնքշութիւնների պատճառով ստէպ նա ստանում էր հարուածներ, որոնցից տքում էր ամբողջ օրեր: Սրանից գատ (ինչպէս ինքն էր ասում) շշի թշնամի էլ չէր, այսինքն (պարզ իս սելով) սիրում էր չափից քիչ աւելի կոնծել: Բայց քա՞ մեր տան մէջ գինի տրոււմ էր միմիայն ճաշերին, այն էլ մի մի բաժակ, և ծառաներն էլ ռուսացին սովորաբար

անուշադիր թողնելով անցնում էին, ուստի և իմ Բուպրէն շատ շուտ բնակացաւ ռուսական պողաջրին և մինչև անգամ սկսեց գերադասել նրան իւր հայրենիքի գինիներից, որպէս ստամոքսի անհամեմատ առաւել օգտակար խմիչք: Մենք շատ շուտով իրար հետ համաձայնութիւն կայացրինք, և թէև պայմանագրի զօրութեամբ նա պարտաւոր էր սովորեցնել ինձ ֆրանսիերէն, գերմաներէն և այլ ամեն գիտութիւններ, բայց նա աւելի նախապատիւ համարեց ինձնից շուտափութ քիչ-միչ ռուսերէն կտորտել սովորիլ, և այնուհետև մեզանից իւրաքանչիւրը զբաղուած էր արդէն իւր գործով: Մենք ապրում էինք հաշտութեամբ ու սիրով: Ես մի այլ մենտոր ունենալ չէի ցանկանում, բայց բաղդը շուտով մեզ անջատեց և ահա ինչ առիթով:

Լուացարար Պայաշան, գիրուկ ու չեչաւ մի աղջիկ, և միակնանի կովտած Ակոյկան մի անգամ, ինչպէս է լինում, որոշում են միաժամանակ ընկնել մօրս ստքերը, խոստովանելով իւրեանց լանցաւոր թուլութիւնը, և արտառքն աչքերին գանգատուած են իւրեանց անփորձութիւնը հրապուրող մուսիօյի վրայ: Մայրս այս տեսակ գործերի մէջ կատակ անել չէր սիրում, ուստի գանգատուած է հօրս: Հօրս դատավճիռը կտրուկ էր: Նա իսկոյն հրամայեց կանչել վառշուէր ֆրանսիացուն: Իմաց տուին, որ մուսիօն ինձ դաս է տալիս: Հայրս եկաւ իմ սենեակը: Այդ պահուն Բուպրէն անմեղ կերպով քնած էր մահճակալի վրայ: Ես գործով էի զբաղուած: Պէտք է ասել, որ Մոսկուայից ինձ համար բերել էր տրուած աշխարհագրական մի քարտէզ: Այդ քարտէզը երկար ժամանակ առանց գործածութեան կախ էր ընկած պատից և գայթակղեցնում էր ինձ իւր լայնութեամբ և թղթի հաստութեամբ: Ես վճռեցի նրանի մի թուուցիկ շինել և Բուպրէի քնելուց օգտուելով, գործի եղաւ: Հայրս ներս մտաւ հէնց այն ժամանակ, երբ ես փսիւթեայ պոչը կապում էի Բարեյուսոյ հրուանդանին:

Աշխարհագրական վարժութիւններս տեսնելով, նա ականջ-
ներս քաշեց, յետոյ շտապեց Բոպրէի մօտ, զարթեցրեց
նրան շատ անգոյշ կերպով և սկսեց խտապէս լանդիմա-
նել: Երջկուած Բոպրէն ուզում էր ոտքի ելնել, բայց չկա-
նուցաւ. խղճալի Փրանսիացին սաստիկ հարբած էր: «Եօ-
թը թշուառութեան մի պատասխան:» Հայրս օձիքից բըռ-
նած վեր հանեց նրան մահճակալի վրայից, դռնից դուրս
հրեց և հէնց նոյն օրը, 'ի մեծ ուրախութիւն Սավելիչի,
տանից էլ բոլորովին քշեց: Գորանով էլ վերջացաւ իմ
կրթութիւնը:

Ես ապրում էի այդպէս թերուս, աղաւնիներ թռցնե-
լով ու մեր ծառաների տղաների հետ «աթտուրմա» խաղա-
լով:

Այն ինչ լրացաւ ասան և վեց տարիս, և իմ վիճակը փո-
խուեց: Մի անգամ աշնանը մայրս հիւրասենեակում մեղրից
քաղցրաւենի էր եփում, իսկ ես, շրթունքներս լիզելով, նա-
յում էի եռացող փրփուրներին: Պատուհանի մօտ հայրս կար-
գում էր «Պալատական օրացոյց», որից ամեն տարի ստանում էր:
Մեծ ազդեցութիւն ունէր նրա վրայ այս գիրքը: Ամեն անգամ
նա վերակարգում էր նրան առանձին մտադիւրութեամբ և
այս ընթերցումը լառաջացնում էր նրա մէջ մաղձի գարմանալի
յուզումն: Մայրս, լաւ ուսումնասիրած լինելով նրա բնաւորու-
թիւնն ու սովորութիւնները, միշտ աշխատում էր այդ չարա-
բաստիկ գիրքը պահել հեռաւոր անկիւններում, և այդպիսով
«Պալատական օրացոյցը» երբեմն ամիսներով չէր ընկնում
նրա աչքին: Սրա փոխարէն, երբ պատահմամբ գտնում էր նրան,
եւրեմն ժամերով այլ ևս ձեռքից վայր չէր ձգում: Այսպէս
ուրեմն, հայրս կարգում էր «Պալատական օրացոյց» երբեմն
ուսերը վեր քաշելով ու կիսաձայն կրկնելով. «Գեներալ պորոն-
չիկ...», նա մի հասարակ սերժանտ էր իմ վաշտում... Ռուսա-
կան գոյգ պատուանշանների ստպէտ... իսկ շատ ժամանակ է
որ մենք...» Վերջապէս հայրս շարտեց «Պալատական օրա-

ցոյցը» բազմոցի վրայ և խորասուզուեց այնպիսի մտախոհու-
թեանց մէջ, որոնք ոչինչ բարի բան չէին խոստանում:

Յանկարծ նա դարձաւ դէպի մայրս.

— Սւգօտեա Վասիլեվնա, քանի՞ տարեկան է մեր Պետ-
րուշան:

— Այ, հիմա 17 տարու մէջն է, պատասխանեց մայրս.
Պետրուշան ծնուել է հէնց այն տարին, երբ մօրաքոյր Նաս-
տասեա Պերասիմովնան զրկուեց մի աչքից և երբ դեռ...

— Բարի, կտրեց հայրս. էլ ժամանակ է նրան ծառայու-
թեան մտնել. հերիք է աղախնասենեակներում քաշ գալ ու
աղաւնետների վրայ մագլցել:

Ինձնից շուտով անջատուելու միտքը այնպէս սարսափեց-
րեց մօրս, որ նա ցած ձգեց գգալը ամանի մէջ և արտասուքի
կաթիլները գլորուեցին նրա երեսի վրայով: Դրան հակառակ,
զժուարէ նկարագրել իմ բերկրութիւնը: Ծառայութեան գա-
ղափարը իմ մէջ միախառնուում էր ազատութեան ու Պետեր-
բուրգի կեանքի մասին ունեցած մտքերի հետ: Ես ինձ երեւա-
կայում էի արդէն թիկնապահ զօրքի սպայ, որը, իմ կար-
ծիքով, մարդկային բարօրութեան գաղաթնակէտն էր:

Հայրս ոչ իւր որոշումները փոխել էր սիրում և ոչ
նոցա իրագործումը լետաձգել: Մեկնելու օրը որոշուեց:
Նախընթաց օրը հայրս լայտնեց, որ դիտաւորութիւն ունի
իմ ձեռքով տանելիք մի նամակ գրելու իմ ապագայ իշխա-
նաւորին, և թուզթ ու գրիչ պահանջեց:

— Անդրէյ Պետրովիչ, ասաց մայրս. մի մոռանար ինձնից
էլ ողջոյն գրելու իշխան Բ.-ին: Գրիբ ես յոյս ունիմ, որ նա
իւր ողորմած աչքը Պետրուշայի վրայից անպակաս կանէ:

— Ի՞նչ դատարկ խօսքեր, թթուելով պատասխանեց հայրս.
Ի՞նչ գործ ունիմ իշխան Բ.-ին գրելու:

— Բայց չէ որ դու ասացիր, թէ բարեհաճում ես Պետ-
րուշայի մեծաւորին գրել:

— Է՛, դրանից ինչ:

— Է', չէ որ Պետրուշայի մեծաւորը իշխան Բ.-ն է: նա նշանակուած է Սեմեօնովսկի գնդի մէջ:

— Նշանակուած է: Իմ թնչ գործն է, որ նա նշանակուած է: Պետրուշան Պետերբուրգ չի գնալ: Ինչ պիտի սովորի նա Պետերբուրգում ծառայելով. վատնել ու ստահակել: Ո՛չ, թող զօրքի մէջ ծառայէ, քաշ տայ ծանր լուծը, թող մի վառօդի հոտն առնի ու իսկական զինուոր դառնայ և ոչ դատարկագորտի մէկը: Ո՛ւր է նրա անցագիրը. բեր այտեղ:

Մայրս գտաւ իմ անցագիրը, որ պահուում էր արկղիկի մէջ այն լաթի հետ, որի մէջ ինձ կնքել էին, և դողդոջուն ձեռքով տուեց հօրս: Հայրս ուշադիր կարգաց, դրեց իւր առաջ սեղանի վրայ ու սկսեց իւր զրուեցիւնը: Հետաքրքրութիւնը տանջում էր ինձ: Հապա ո՛ւր են ուղարկուած ինձ, եթէ՛ ո՛չ Պետերբուրգ: Ես անթարթ նայում էի հօրս գրչին, որը բաւական դանդաղ էր շարժւում: Վերջապէս նա պրծաւ, նամակը անցագրի հետ փակեց մի ծրարի մէջ, վար առաւ ակնոցները, ինձ կանչեց ու ասաց «Ահա քեզ մի նամակ իմ հին ընկեր ու բարեկամ Անդրէյ Կարլովիչ Բ.-ի վրայ: Դու կ'գնաս Օրենբուրգ նրա հրամանատարութեան ներքոյ ծառայելու:»

Այդպէս ուրեմն, իմ բոլոր յոյսերս խորտակուեցին: Պետերբուրգի զուարճալից կեանքի փոխանակ, ինձ սպասում էր տաղտկութիւնը մի հեռաւոր ու խուլ կողմում: Ծառայութիւնը, որի մասին մի քամի բոպէ առաջ մտածում էի այնպիսի ցնծութեամբ, այժմ ինձ պատկերանում էր որպէս մի ծանր գժբաղդութիւն: Բայց հսկառակուիլը աւելորդ էր: Միւս օրը առաւօտեան պատշգամբի մօտ եկաւ ճանապարհորդական սալակը: Նրա մէջ տեղաւորեցին պայուսակս, մի արկղիկ թէյի սարքով, և կապոցներով բլիթներ ու կարկանդակներ — տնային փափկասուն կեանքի նշանայայտ վերջին անուշեղէնները: Ծնողներս օրհնեցին

ինձ: Հայրս ասաց. «Երթու բարով, Պետր: Հաւատարմութեամբ ծառայիր նրան, որին կերգուիս. հնազանդ եղիր հրամանատարներին, նոցա փալփալանքների ետեւից մի վազիր, ծառայակատարութիւնների համար վրայ մի ընկնիր, ծառայութիւնից մի խուսափիր, և լիշեր այն առածը, որ ասում է. պահպանիր շորերդ նոր կարած օրից և պատիւը անաղարտ մանկութիւնից:»

Մայրս, արցունքն աչքերին, ինձ պատուիրում էր առողջութիւնս լաւ պահպանել, իսկ Սովեյիչին, որ ինձ լաւ նայէ: Տակից ինձ հագցրին նապաստակի մորթուց մաշկեակ, իսկ վրայից աղուէտի մորթուց մի մուշտակ: Ես Սովեյիչի հետ սալակ նստայ և ճանապարհ ընկայ, աչքերիցս արտասուք թափելով:

Նոյն գիշերն և եթ ես հասայ Սիմբիրսկ, ուր պիտի մնայի մի գիշերատիւ մի քանի հարկաւոր իրեր գնելու, որ և յանձնուած էր Սովեյիչին: Ես իջայ մի պանդոկ: Սովեյիչը գնաց խանութները: Պատուհանից անմաքուր փողոցը նայելուց ձանձրացած, ես սկսեցի շրջել միւս սենեակները: Բիլեարդի սենեակը ներս մտնելով ես տեսայ խալթ հագած, մօտ երեսուն տարեկան բարձրահասակ մի մարդ, խաղափայտը ձեռքին և ծխամորճը ատամների մէջ: Նա խաղում էր մարկերի հետ, որը տանելիս խմում էր մի բաժակ օղի, իսկ տարուելիս պարտաւոր էր, չորքոտանի ձեւանալով, մտնել բիլեարդի տակ: Ես սկսեցի նայել նոցա խաղին: Որքան խաղը շարունակուած էր, այնքան յաճախ էր կրկնում չորեքոտեայ գրօսանքը բիլեարդի տակ, մինչև որ վերջապէս մարկերը մնաց այտեղ: Պարոնը դամբանականի ձեով արտասանեց նրա վրայ մի քանի կծու դարձուածներ և ինձ խաղալ առաջարկեց: Ես հրաժարուեցի՝ խաղալ չգիտնալս առարկելով: Ըստ երևույթին այս բանը նրան տարօրինակ երևեց. նա մի տեսակ անակցութեամբ նայեց ինձ վրայ: Մենք խօսքի բռնուե-

ցինք: Ես իմացայ, որ նա անուանում է Իվան Իվանիչ Զուրին, հուսարների բոսմիտար է, Սիմբիրսկ է եկած գու-
 գաղներին բնգուներու համար և իջեանած է պանդուխտ:
 Զուրինը ինձ առաջարկեց ճաշել իւր հետ, բաւականանա-
 լով նրանով, ինչ որ սուել է Աստուած, ինչպէս այդ վա-
 յել է գինուարին: Մենք սեղան նստանք: Զուրինը շատ էր
 խմում և ինձ էլ պատիւ էր անում ասելով, թէ պէտք է
 ծառայութեան վարժուիլ: Նա ինձ պատմում էր գինու-
 բաւան անեկդատներ, որոնց լսելով, ես թուլանում էի ծի-
 ծաղելուց: Սեղանից վեր կացանք կատարեալ բարեկամներ
 դարձած: Նա ինքը առաջարկեց ինձ բիլլեարդ խաղալ սո-
 վորեցնել: «Մեզ, ծառայողներս համար, այդ անհրաժեշտ
 է, ասում էր նա: Օրինակ, պատերազմի ժամանակ գալիս ես
 մի աւան. ինչ բանով զբաղուիլ կհրամայես. խօս միշտ
 ջհուգներ ծեծելով չախաթ անցնես օրերդ: Սկսածայ կզնաս
 պանդուխտ և կսկսես բիլլեարդ խաղալ. իսկ դրա համար պէտք է
 խաղալ գիտնալ:» Ես կատարելապէս համոզուեցի և մեծ
 եռանդով սկսեցի իմ խաղի դասը: Զուրինը բարձրաձայն
 բաջալերում էր ինձ, զարմանում էր իմ լաջողութեան
 դով խաղալ, ոչ շահուելու, այլ միայն դատարկ խաղացած
 չլինելու համար, որ, նրա կարծիքով, ամենավատ սովորու-
 թիւն է: Ես այդ բանին էլ համաձայնեցի, իսկ Զուրինը
 հրամայեց փունձ բերել, և ինձ համոզում էր համը տես-
 նել, կրկնելով՝ թէ պէտք է վարժուիլ ծառայութեան.
 իսկ առանց փունձ ինչ ծառայութիւն: Ես ականջ դրի
 նրան: Մեր խաղը շարունակում էր: Որքան փնձից աւե-
 լի ու աւելի էի կլանում, այնքան առաւել բաջարի էի
 դառնում: Գնդակները եզրներից անդադար դուրս էին
 թռչում: Ես տաքանում էի, հայտնում էի մարկերին, որը,
 Աստուած գիտէ, թէ ինչպէս էր համարում, ժամ առ
 ժամ բարդում էի խաղը, մի խօսքով ինձ այնպէս էի պա-

հում, ինչպէս թոկից պրծած մի «գետտա»: Մինչդեռ ժա-
 մանակը աննշմարելի կերպով անցնում էր: Զուրինը նախ
 ժամացուցին, վայր դրեց խաղափայտը և չալանեց, որ ես
 տարուել եմ 100 լուբլի: Այս բանը ինձ քիչ շփոթեց: Իմ
 փողերս Սովետի մօտ էին: Ես սկսեցի ներդառն թիւն խընդ-
 րել: Զուրինը խօսքս կարեց. «Աստուած ոհրես, ամենեւին
 անհանգիստ մի լինիր. ես սպասել կարող եմ: Իսկ առ
 այժմ գնանք Արինուշկայի մօտ:»

Ինչ կհրամայէք: Այդ օրը նոյնքան անկարգ վերջացրի,
 որքան անկարգ սկսել էի: Մենք ընթերցեցինք Արինուշկայի
 մօտ: Բոպէ չէր անցնում, որ Զուրինը չլցնէր իմ բաժակը,
 կրկնելով՝ թէ պէտք է ծառայութեան վարժուիլ: Սեղանից
 վեր կենալիս ես հագիւ էի ոտքի վրայ կանգնում: Կէս
 գիշերուան մօտ Զուրինը տարաւ ինձ պանդուխտ:

Սովետիչը մեզ հանդիպեց պատշգամբի վրայ: Նա բա-
 րացած մնաց, տեսնելով դէպի ծառայութիւնն ունեցածս ե-
 ռանդի անհերքելի նշանները:

— Այս ինչ պատահեց քեզ, պարոն, ասաց նա սղորմա-
 գին ձայնով. այդ սրտեզ ես այդպէս ծանրաբեռնուել: Վայ-
 մէ, Տէր Աստուած, ով էր երբէք այսպիսի պատիժ տեսել:

— Զայնդ, քու թան, կակաղելով պատասխանեցի նրան.
 Երևի դու հարբած ես: Կորիք քնելու... ինձ էլ պառկեցնուր:

Միւս օրը ես զարթնեցի գլխացաւով, սղոտապէս լիշե-
 լով նոտիկն օրուայ անցքերը: Իմ խորհրդածութիւններն
 ընդմիջեց Սովետիչը, որ ներս մտաւ մի քառակ թէլը ձեռ-
 քին:

— Շատ վաղ, Պետր Անդրեյիչ, շատ վաղ սկսեցիք
 զուարճութիւնների ետեւից ընկնել: Եւ մի աստ. սեւ քա-
 շեցիր: Ոչ հայրդ, ոչ պապդ հարբեցող չեն եղել. մայրիկիդ
 մասին խօսելն անգամ աւելորդ է. ծնուած օրից ի վեր,
 բացի կւասից, մի այլ խմիչք բերանն առնել չէ բարեհա-
 ճելու. Իսկ մեղաւորն ով է. — անիծից արմատ մուսիւն: Ել

բան ու գործ չունէր, անգագար վագում էր Անտիպեփնայի մօտ. «Մագամ, ժը վու պրի օղի» (Տիկին, խնդրում եմ, տուէք ինձ օղի): Ա՛յ քեզ ժը վու պրի: Եւ ինչերթս էր պէտք չնչհաւատ դատտիարակը: Կարծես մեր տիրոջ մարդիկ վար էին անցել:

Ես ամաչելուց երեսս շուռ տուի ու ասացի. «Դո՛ւրս գնա, Սավելիչ, ես թէյ չեմ ուզում:» Բայց հեշտ բան չէր Սավելիչին լռեցնել, երբ մի անգամ իւր քարոզներն սկսէր. «Ահա տեսնո՞ւմ ես, Պեօտր Անդրեյիչ. ինչ կնշանակէ գուարձութեան ետեւից ըկնել. գլուխդ էլ ցաւում է, ուտել էլ չէ ուզում: Խմող մարդը մի բանի էլ պէտքը չէ: Փորձիր խմել վարունգի աղաջուր մեղրի հետ միասին, իսկ առաւել լաւ—կէս բաժակ պողաջուր, ոգու ոյժը կտրելու համար: Կհրամայես բերել:»

Նոյն րոպէին ներս մտաւ մի մանուկ և ինձ մի տոմսակ տուեց Ի. Ի. Զուրինից: Ես բաց արի և կարգացի հետեւալը.

«Սիրելի Պեօտր Անդրեյիչ, խնդրեմ այս մանուկի հետ ուղարկէք 100 րուբլի, որ երեկ ինձ տարուեցիք: Ես փողի մեծ կարիք ունիմ:»

Պատրաստ ծառայելու՝

Իվան Զուրին:

Ի՞նչ կարող էի անել: Անտարբեր կերպարանք ընդունելով, ես դարձայ Սավելիչին, որ իմ փողերի, սպիտակեղէնների ու այլ գործերի խնամարկուն էր, ու հրամայեցի 100 րուբլի առ մանուկին:

— Ի՞նչպէս, ինչո՞ւ, հարցրեց ապշած Սավելիչը:

— Ես նոցա պարտ եմ այդքան, պատասխանեցի ես ամենայն սառնութեամբ:

— Պարտ ես, բացականչեց Սավելիչը, աւելի ու աւելի ապշելով. բայց երբ, պարոն, կարողացար այդքան պարտք անել: Այստեղ մի ինչ որ բան կայ: Ինչպէս կամենաս,

պարոն, բայց ես փող տուողը չեմ:

Ես մտածեցի, որ եթէ սոյն վճուական րոպէին չկոտրեմ ծերունու լամպուլթիւնը, ապագայում՝ էլ դժուար կլինի ազատուիլ նրա խնամքից, ուստի խրոխտաբար վրան նայելով ասացի.

— Ես քո տէրն եմ, իսկ դու իմ ծառան: Փողերը իմն են: Ես տարուել եմ, որովհետեւ այդպէս եմ ուզեցել, իսկ քեզ հիմայ խորհուրդ եմ տալիս խելքիդ զօւ չտալ ու անել այն, ինչ որ քեզ հրամայում են:

Սավելիչը այնպէս սարսափահար եղաւ իմ խօսքերից, որ ձեռքերը թափահարեց ու քար կտրած մնաց:

— Ի՞նչ ես տնկուել, գոչեցի ես բարկութեամբ:

Սավելիչը սկսեց լալ:

— Տէր իմ, Պեօտր Անդրեյիչ, արտասանեց նա զողորշուն ձայնով. մի տանջիր ինձ ցաւերով: Աչքիս լոյս, ահանջ դիր ծերունուս. գրիր այդ աւագակին, որ դու կատակ ես արել, որ այդքան փող մեր մօտ ամենեւին չէ էլ լինում: 100 րուբլի՛, Տէր ողորմած Աստուած: Ասան, որ ծնոյներդ խստապէս արգելել են քեզ կադին խաղալուց գտա, մի այլ խաղ: ...

— Հերիք դուրս տաս, կտրեցի ես խստութեամբ. բեր փողերը, թէ ոչ վզիդ խփելով դուրս կանեմ:

Սավելիչը խորին ցաւով նայեց ինձ վրայ ու գնաց պարտքս բերելու: Ես ավստուսում էի խեղճ ծերուկին, բայց ուզում էի ազատուիլ խնամքի ամեն կապանքներից և ցոյց տալ, որ էլ երեխայ չեմ:

Փողերը ուղարկուեցան Զուրինին: Սավելիչը շտապում էր շուտով դուրս բերել ինձ անիծեալ պանդուկից: Նա լայտնեց, որ ձիերը պատրաստ են: Սիմբիբսկից դուրս եկայ անհանգիստ խղճով և լուռ գղջումով, մինչև անգամ մնաս բարով չասելով իմ ուսուցիչն և միտք էլ չունենալով երբ և իցէ տեսնուիլ նրա հետ:

II

ՈՒՂԵՑՈՅՑ

Արքայն զու. երկիր, անձանո՞թ. երկիր,
Իմ կամքով չեկայ ես քեզ, ա՛յլ երկիր,
Կայտառ ձև չբերեց ինձ այս կողմերը:
Քաջորդի աղևոս բերել է այստեղ
Կրակը, աւելնը պատանեկական
Եւ գորգշէքն ու հոտը օդեամբն:
Հի՛նք էրք.

Նանապարհին ինձ գբաղեցնում էին անհաճոյ մտածու-
թիւններ: Տարուածս փողի գումարը, այն ժամանակի համար,
չնչին չէր կարելի համարել: Ես չէի կարողանում չիստառ-
վանել ի ներքուստ, որ իմ վարմունքը Սիմբիրսկի պանդո-
կում լիմարական էր, և ինձ մեղաւոր էի գգում Սովետիչի
առաջ: Ծերուկը երեսը ինձնից դարձրած, մռայլադէմ նըս-
տած էր սպիտակ վրայ և լուռ էր. միայն երբեմն ինչ որ
փրնթփրնթում էր: Ես ուզում էի անպատճառ հաշտուիլ
նրա հետ, բայց չգիտէի, ինչպէս սկսեմ: Աերջայէս ես ա-
սացի.

— Ե՛, է, Սովետիչ, բաւական է, հաշտուի՛նք: Ես մե-
ղաւոր եմ, ինքս տեսնում եմ, որ մեղաւոր եմ: Ես երէկ
օյիներ հանեցի ու քեզ իզուր տեղը նեղացրի: Խոստանում
եմ այսուհետեւ աւելի խելօք լինել և քեզ ականջ գնել:
Պէ՛, մի բարկանար ու եկ հաշտուի՛նք:
— Ե՛յ տէր իմ, Պետր Անդրեյիչ, պատասխանեց նա,

խոր ոգոց հոնելով. ես այս ինձ վրայ եմ բարկանում.
Չուրջ ինքս եմ մեղաւորը: Ի՞նչպէս ես քեզ մենակ թողի
պանդոկում: Բայց ի՛նչ արած: Իմ մեղքից, խելքիս փչեց
սարկաւազուհուն երթալ, սանամօրս հետ տեսնուիլ: Այդպէս
ահա, գնացի սանամօրս տուն ու փակուեցի ինչպէս բանդում:
Փորձանք էր, էլի: Եւ ինչպէս երևիմ ես իմ տէրերի աչ-
քին: Ի՞նչ կասեն, թէ իմանան, որ երեխան խմում է ու խաղում:

Խղճուկ Սովետիչին սիտիելու համար, ես խօսք տուի
այլ ևս մի կողէկ անգամ չծախսել, առանց նրա համա-
ձայնութեան: Նա կամաց կամաց հանգստացաւ, թէև դեռ
էլի գլուխը տարուբերելով երբեմն փրնթփրնթում էր. «100
րուբլի՛, ի՛նչ հեշտ է ասել»:

Ես մօտենում էի իմ ծառայութեանս նշանակուած տե-
ղին: Իմ շուրջս տարածում էին տիրատեսիլ հարթավայ-
րեր, բլուրներով ու ձորերով կարտուած: Ամեն ինչ ծած-
կուած էր ձիւնով: Արեգակը մայր էր մտնում: Սպիտակը
գնում էր նեղլիկ ուղիով կամ, աւելի ճիշտ ասած, գիւ-
ղական սահնակների թողած հետքերով: Յանկարծ սալա-
պանը աչքը տնկեց մի կողմ և վերջայէս գլխարկը հանելով
դարձաւ ինձ ու ասաց.

— Պարոն, չէ՞ք հրամայիլ վերադառնալ:

— Ա՛յ քեզ բան: Ի՞նչ պատճառով:

— Եղանակը անյուսալի է. թեթև բարձրանում է ար-
դէն քամին, տես ինչպէս քշում է նա մանրիկ ձիւնը:

— Ե՛, ի՛նչ անենք:

— Իսկ այնտեղ տեսնում ես:

Կառապանը մտրակով ցոյց տուեց արևելքը:

— Ես ոչինչ չեմ տեսնում, բացի սպիտակ հարթավայ-
րից ու կապոյտ երկնքից:

— Իսկ այ՛, այ՛. այն ամպիկը:

Յիրաւի, հորիզոնի մօտ ես տեսայ սպիտակ ամպի մի
կտոր, որը սկզբում հեռաւոր բլրի տեղ էի ընդունել: Սալ-

լսականը բացատրեց ինձ, որ ամպիկը բքի նախանիշն է:

Ես լսել էի այդ տեղի փոթորկայույց բքերի մասին, և գիտէի, որ ամբողջ սալլախմբեր ծածկուել — թաղուել են նրանց մէջ: Սավելիչը, սալլապանին համակարծիք, ինձ խորհուրդ էր տալիս լետ դառնալ: Բայց քամին ինձ չնչին երևեց. ես յոյս ունէի կանխապէս հետևեալ իջևանը հասնել, ուստի հրամայեցի աւելի արագ գնալ:

Սալլապանը բշեց ձիերին, բայց շարունակ նայում էր դէպի արևելք: Ձիերը վազում էին միահամուռ: Ամպիկը փոխարկուեց սպիտակ մի ամպի, որ ծանր ծանր բարձրանում էր, մեծանում և աստիճանաբար պարփակում էր երկինքը: Ձիւնը վրայ արաւ սկիզբը մտնը, սպա մեծ մեծ քուլաներով: Քամին ուռնաց մռնչելով, բուքն սկսուեց: Մի վայրկենում մթապատ երկինքը խառնուեց ձիւնալից դաշտերի հետ: Ամեն ինչ կորաւ աչքիցս:

— Դէհ, պարոն, գոչեց սալլապանը. բաներս բուսաւ, բնւք է անում....

Ես գուրս նայեցի սալլակից: Չորս կողմը տիրում էին խաւարն ու փոթորիկը: Քամին մռնչում էր այնպիսի կատաղի ելևէջներով, որ շնչաւորի նմանութիւն էր բերում: Ձիւնը ծածկեց ինձ ու Սավելիչին: Ձիերը գնում էին քալլ առ քալլ և շուտով կանգնեցին:

— Ինչո՞ւ չես գնում, անհանրերութեամբ հարցրի սալլապանին:

— Էլ թնջ գնալ, պատասխանեց նա, սալլիտից վայր իջնելով. առանց այն էլ, Աստուած գիտէ, թէ ո՞ւր ենք եկել: Ճանապարհ չկայ և խաւարած է չորս կողմը:

Ես ուզում էի բարկանալ նրա վրայ: Սավելիչը տէր ելաւ նրան: «Ի՞նչ կլինէր ականջ գնէիր», ասում էր. նա բարկացած, վերագառնայիւր իջևանը, թէյ անուշ անէիր ու հանգիստ քնէիր մինչև առաւօտ: Փոթորիկը կգազարէր ու մենք կգնայինք մեր ճանապարհը: Եւ ինչո՞ւ շտապել:

Ո՛ւր է, թէ հարսանիք գնալիս լինէինք:» Սավելիչը իրաւունք ունէր, բայց էլ թնջ արած: Ձիւնը թափուում էր ու թափուում: Սալլակի մօտ մի զանգուած կազմուեց: Ձիերը գլուխները քաշ արած, կանգնել էին և երբեմն սարսուում էին: Սալլապանը պտոյտ էր գալիս սալլակի շուրջը և անգործութիւնից ձիերի սարքն էր ուղղոտում: Սավելիչը փընթփընթում էր: Ես աչքերս դարձնում էի չորս կողմ՝ ճանապարհի կամ բնակութեան մի նշան տեսնելու յուսով, բայց բուքի խաւարային ոլորապտոյտներից զատ, ուրիշ ոչինչ տեսնել չկարողացայ:

Յանկարծ աչքիս ընկաւ սևագոյն մի բան:

— Է՛յ, սալլապան, կանչեցի ես. նայիր թնջ է այնտեղ սևին տալիս:

Սալլապանը գիտել սկսեց:

— Ո՛վ է իմանում, պարոն, ասաց նա իւր տեղը նըստելով. սալլ ասես — սալլ չէ, ծառ ասես — ծառ չէ, բայց կարծես շարժուում է: Կամ գալլ է երևի կամ մարդ:

Ես հրամայեցի գնալ դէպի անձանօթ առարկան, որը և իսկոյն սկսեց շարժուիլ դէպի մեզ: Երկու րոպէ լետոյ մեզ մօտ կանգ առաւ մի մարդ:

— Է՛յ, բարի մարդ, կանչեց նրան սալլապանը. չգիտես ուր է ճանապարհը:

— Ճանապարհն այնտեղ է, ես կանգնած եմ հաստատուն շերտի վրայ, պատասխանեց անցորդը. բայց դրանից թնջ օգուտ:

— Ինձ լսիր, գեղջուկդ, ասացի ես նրան. ծանօթ ես դու այս կողմերին. լանձն չէս առնիլ արգեօք ինձ մինչև իջևանը առաջնորդել:

— Ծանօթը, ծանօթ ենք, պատասխանեց անցորդը. փնւք Աստուծոյ, երկայնութեամբ ու լայնութեամբ չափել չափչփել ենք. բայց տեսնում ես ինչ եղանակ է: Հեշտութեամբ կարելի է մոլորուիլ ճանապարհից: Լաւ է այնտեղ կանգնել ու սպասել. գոթի հանդարտի ու երկին:

200 81 - 55



քը պարզէ, այն ժամանակ աստղերով կգտնենք ճանապարհը:

Նրա սառնարիւնութիւնը քաջալերեց ինձ: Ես արդէն որոշում էի, Աստուած ապաւինելով, գիշերել դաշտի մէջ, երբ լանկարձ անցորդը հասցնեցով նստաւ սալլիտի վրայ ու ասաց սալլապանին.

— Է՛հ, փնռք Աստուծոյ, բնակութիւնը հեռու չէ. դարձրո՛ւ գէպի աջ ու գնա՛:

— Իսկ ինչո՞ւ աջ գնամ, անբաւականութեամբ հարցրեց սալլապանը: Եւ որտեղից տեսար ճանապարհը: Չը լինի՞, մտածում ես. լուծը ուրիշի, ձիերն օտարի. քշի՛ր, որքան որ քո սիրտը ուզի:

Սալլապանը ինձ իրաւացի թուեց:

— Իրա՛ւ որ, ասացի ես. ինչո՞ւ դու կարծում ես, որ բնակութիւնը հեռու չէ:

— Այն պատճառով, որ քամին այն կողմից փչեց, պատասխանեց անցորդը, և ես ծխի հոտ եմ առնում. կնշանակէ գիւղը մօտ է:

Նրա խոհունակութիւնն ու հոտառութեան նրբութիւնը ինձ զարմացրին: Ես հրամայեցի սալլապանին երթալ: Ձիերը ծանրաքալ ընթանում էին խոր ձեան միջով: Գանդաղ յառաջանում էր սալլակը, երբեմն ձեան հիւսերի վրայ բարձրանալով, երբեմն գլորուելով փոսերի մէջ և շարունակ այս ու այն կողմ ատանուելով, որով շատ նմանում էր ալէճուփ ծովի վրայ լողացող մի նաւակի: Սովելիչը անգազար իմ կողքերիս գիպչելով, ախ ու վախ էր անում: Ես քաշեցի փսիաթեայ ծածկոցը, փաթաթութեան մուշտակիս մէջ և նիրհեցի, սալլակի հանգարտ գնացքի տարուբերելով ու մրրկի երաժշտութեամբ օրօրուած:

Ես տեսայ մի երազ, որը երբէք չկարողացայ մոռանալ և որի մէջ մինչև հիմա էլ նկատում եմ մի ինչ որ մարգարէական իմաստ, երբ նրան կշռագատում եմ իմ կեանքի

արտասովոր պատահարների հետ: Ընթերցողը թող ներէ ինձ, վստան գի ինքն էլ երևի փորձով գիտէ, թէ ինչպէս յատուկ է մարդուն սնտոխապաշտութիւնների ետևից ընկնել, թէև սրտով արհամարելիս էլ լինի ամեն մի նախապաշարմունք:

Ես գտնուում էի զգացմունքների և հոգու այն դրութեան մէջ, երբ էութիւնը, տեղի տալով պատրանքին, նորաքնի աղօտաջահ տեսիլներում խառնուում է նրա հետ: Թուում էր ինձ, թէ բուքը դեռ շահատուկում էր կատաղութեամբ և մենք դեռ շրջում էինք մոլորական՝ ձիւնապատ հարթավայրում: Յանկարձ ես տեսայ դարպասներ ու ներս մտայ մեր կալուածատան սրահը: Առաջին զգացմունքը, որ ծագեց իմ մէջ, էր երկիւղը, թէ չլինի հայրս բարկանայ ծնողական լարկի տակ իմ ակամայ վերադարձիս և այս չհամարէ որպէս մի նախամտածած անհնազանդութիւն: Անհանգստութեամբ ես դուրս թուայ սալլակից և տեսնում եմ— մայրս գիմաւորում է ինձ պատշգամբի մօտ՝ դէմքի վրայ խորին վշտի արտայայտութեամբ: «Հանդարտ, ստում է նա. հայրդ մերձիմահ հիւանդ է և ուզում է քեզ իւր վերջին հրաժեշտը տալ:» Ահից սարսափած, ես նրա ետևից գնում եմ ննջարան: Տեսնում եմ— աղօտ լուսաւորուած է սենեակը, տխրադէմ մարդիկ կանգնած են մահճի մօտ: Ես մեղմիկ մօտենում եմ անկողնուն: Մայրս բարձրացնում է վարագույրը ու ասում է. «Անգրէյ Պետրովիչ, Պետրուշան եկել է. նա վերադարձել է, լսելով քո հիւանդութիւնը. օրհնիր նրան:» Ես ծունկ չօքեցի և աչքերս ուղղեցի հիւանդի վրայ և թնչ... Տեսնում եմ, հօրս փոխարէն անկողնի մէջ պառկած է սև մօրուքով մի գեղջուկ և ուրախ-ուրախ ինձ է նայում: Տարակուսած ես զառնում եմ մօրս ու ասում. «Ի՞նչ կնշանակէ այս. սա հայրս չէ: Ի՞նչ պատճառով ես պէտք է մի գեղջուկի օրհնութիւնը խնդրեմ:»— Միևնույն է, Պետրուշա, պատաս-

խանում է մայրս. սա քո հոգևոր հայրդ է, համբուրի քեզ
 քր, թող նա քեզ օրհնէ...: Ես չէի համաձայնում: Այն
 ժամանակ գեղջուկը վեր թռաւ անկողնուց, կռնատակից
 դուրս քաշեց կացինը և սկսեց թափահարել ամեն կողմ:
 Ես ուզում էի փախչել... բայց չկարողացայ: Սենեակը
 լցուեց դիակներով: Ոտքերս դէմ էին առնում մարգկալին
 մարմիններին և ես սայթաքում էի արիւնի լճակներում... :
 Ահաւելի գեղջուկը կանչում էր ինձ քնքշօրէն ու ասում.
 «Մի վախենար, եկ ա՛ռ իմ օրհնութիւնը...»: Սարսափն
 ու տատամսութիւնը ինձ պատել էին... Հէնց այդ բո-
 պէին զարթնեցի: Զիերը կանգնած էին: Սովելիչը ձեռքս
 բռնած ասում էր.

— Դու՛րս եկ, պարօն, հասել ենք:

— Ո՛ւր ենք հասել, հարցրի ես աչքերս տրորելով:

— Իջևանը: Ատուած օգնեց, ուղիղ ցանկապատի դէմ
 եկանք: Ա՛ւր իջիր շուտով, պարօն, ու տաքացիր:

Ես դուրս եկայ սալակից: Բուքը դեռ շարունակում
 էր, թէև պակաս ուժգնութեամբ: Անհնարին խաւար էր
 տիրում չորս կողմում: Իջևանատէրը լապտերը վէշի տակ
 բռնած, դռների մօտ դիմաւորեց մեզ և ինձ ներս տարաւ
 մի նեղիկ, բայց բաւականին մաքուր սենեակ, որ լու-
 սաւորում էր մարիի լուսով: Պատից կախուած էր մի
 հրացան և կողակի մի բարձրագիւր գլխարկ: Իջևանատէրը,
 ծագումով ետիցիկ կողակ, վաթսուս տարեկան մի գեղ-
 ջուկ էր, դեռևս թարմ ու առօրգ մարմնով: Սովելիչը
 իմ ետևից ներս բերեց արկղիկը, կրակ պահանջեց թէյ
 պատրաստելու համար, որը երբէք ինձ այնպէս անհա-
 ժեշտ չէր թուացել: Իջևանատէրը դուրս գնաց հարկաւո-
 րը հոգալու:

— Ո՛ւր է ուղեցոյցը, հարցրի ես Սովելիչին:

— Այստեղ եմ, Զերդ ազնուութիւն, լուսեց վերևից մի
 ձայն:

Ես վեր նայեցի և տախտի վրայ տեսայ մի սև մօրուք
 և երկու փալտակոյ աչքեր:

— Հը, եղբայր, երևի մըսել ես:

— Ի՛նչպէս չմըսել միմիակ ցանցառ բաճկոնով: Մի
 մուշտակ ունէի, բայց մեղքս ի՛նչ պահեմ, երեկ դրաւ
 դրի օղեվաճառի մօտ. սառնամանիքն ինձ չնչին երևեց:

Նոյն պահուն ներս մտաւ իջևանատէրը՝ եփած ինքնա-
 յեռը ձեռքին: Ես ուղեցոյցիս առաջարկեցի մի բաժակ թէյ
 խմել: Նա վար իջաւ տախտի վրայից: Նրա արտաքինը ինձ
 նշանաւոր երևեց: Քառասուն տարեկան էր նա, նիհար,
 ուռածիջակ ու թիկնեղ: Նրա մօրուքը ակխառն էր ար-
 դէն, մեծ կենդանի աչքերը պսպղալով խաղում էին երե-
 սի վրայ: Դէմքի արտայայտութիւնը հաճելի էր, բայց
 խարդաւանական: Մազերը կտրուած էին բոլորակաձև: Հա-
 ղին ունէր պատառտած մի բաճկոն և թաթարական
 վարտիք: Ես տուի նրան մի բաժակ թէյ. նա համին նա-
 յեց ու երեսը թթուեցրեց. «Զերդ ազնուութիւն, մի լու-
 սութիւն արէք. հրամայեցէք տալ ինձ մի բաժակ դինի-
 թէյը կողակի յարմար խմիչք չէ:» Ես լոժարութեամբ
 կատարեցի նրա ցանկութիւնը: Իջևանատէրը հանեց ան-
 թից շնչն ու բաժակը, մօտեցաւ նրան ու երեսին նայելով
 «Է՛հ, ասաց. էլի՛ մեր կողմերն ընկար, ուստի է զայլուսող:»
 Ուղեցոյցս խորանիշ կերպով աչքով արաւ ու ասացուածքի
 ձևով պատասխանեց. «Բանջարանոցում թռչում, կանեփ
 էի կացում. մամիկս քար թալեց, բայց չդ՛պաւ: Է՛, ձե-
 րօնք ինչպէս են:» — Մերօնք ինչ պիտի լինին, պատասխա-
 նեց իջևանատէրը՝ սլաքանական սճը շարունակելով. ու-
 զում էին զանգ զարկել իրիկուայ ժամի, բայց իրիցկինը
 չէ հրամայում. ակէր բաբան հիւր է գնացել, դեերը
 շրջում են գերեզմանատանը:

— Լուիր, պտպի, վրայ բերեց իմ թափառաշրջիկը. թէ
 անձրև լինի, սուսկ էլ կլինի, իսկ թէ սուսկ լինի, զամ-

բիւլ էլ կլինի. իսկ այժմ (նա կրկին աչքով արաւ) կայինը
զօտիդ խրիբ, անտառապահը գալիս է: Զեր կենացը, Զեր
ազնուութիւն:»

Սոյն խօսքերն ասելով, նա վերցրեց բաժակը, երեսը
խաչակնքեց ու մի ուժայով խմեց. լետոյ ինձ գլուխ տուեց
ու հեռացաւ իւր տեղը: Այն ժամանակ ես ոչինչ չկարողա-
ցայ հասկանալ այս աւազակային խօսակցութիւնից, բայց
լետոյ գլխի ընկալ, որ խօսքը ետիցկի զօրքերի մասին էր,
որոնք նոր էին խաղաղեցրած 1772-ի խռովութիւնից լետոյ:
Մեծ տհաճութեամբ ականջ էր դնում նոցա Սովելիչը:
Կասկածանքով նայում էր նա երբեմն իջևանատիրոջ, եր-
բեմն ուղեցոյցի վրայ: Իջևանը, կամ աեղացի բարբառով
«ուժետը» ընկած էր ճանապարհից դուրս, հարթավայրի
մէջ, գիւղերից հեռու, և աւելի աւազակային սրջի էր
նմանում, բայց թնջ արած: Ճանապարհը շարունակելու մա-
սին մտածել անգամ չէր կարելի: Ինձ շատ էր զուար-
ճացնում Սովելիչի անհանգստութիւնը: Ես պատրաստուե-
ցի այդտեղ գիշերելու և պառկեցի տախտի վրայ: Սովելի-
չը վառարանի վրայ բարձրանալ որոշեց: Իջևանատէրը
պառկեց յատակի վրայ: Շուտով ողջ խրճիթը խրմփայրեց
և ես քնեցի խոր քնով: Առաւօտեան բաւականին ուշ
գարթներով ես տեսայ, որ բուքը գազարել էր: Արեգակը
շողշողում էր: Պսպղուն սփռոցի հանգունակ՝ ձիւնը պառ-
կել էր անյաւ հարթավայրի վրայ: Զիերը լծուած էին:
Ես վճարեցի իջևանատիրոջը, որը այնպիսի մի չափաւոր
պահանջ ցոյց տուեց, որ մինչև իսկ Սովելիչը նրա հետ
վէճի չմտաւ և ըստ իւր սովորութեան սակարկութիւն
չսկսեց ու առաջին օրուայ կասկածներն էլ իսպառ փարա-
տուեցին նրա մտքից: Ես կանչեցի ուղեցոյցին, շնորհակալ
եղայ ցոյց տուած օգնութեան համար ու Սովելիչին պա-
տուիրեցի ընծայել նրան 50 կոպէկ: Սովելիչը չօնքերը
կիտեց:

— Յիսուն կոպէկ ընծայ, ասաց նա. այդ ինչի՞ համար:
Արդեօք նրա համար, որ ինքդ բարեհաճեցիր քո սալա-
կով նրան իջևան հասցնել: Ինչպէս կամենաս, պարոն,
մենք աւելւորդ յիսուն կոպէկներ չունինք: Ամեն պատա-
հողի որ ընծաներ տանք, մենք ինքներս քաղցած կը
մնանք:

Սովելիչին հակառակուիլ ես չէի կարող. իմ խոստման
համաձայն փողերը լիովին նրա տրամադրութեան տակ
պիտի լինէին: Սակայն իմ գալրոյթս էր գալիս, որ չկարո-
ղացայ շնորհակալ լինել այն մարդուց, որը ինձ, եթէ ոչ
աղէտից, գոնէ շատ անախորժ գրութիւնից ազատեց:

— Լաւ, ասացի ես սառնարիւն կերպով. եթէ չես
ուզում յիսուն կոպէկ տալ, տո՛ւր նրան իմ շորերից մէկը:
Նա շատ թեթեւ է հագնուած: Տո՛ւր նրան նապաստակի
մորթուց մաշկեակս:

— Ի սէր Աստծոյ, սիրելի՛ Պետր Անդրեյիչ, ասաց
Սովելիչը. թնջին է հարկաւոր քո նապաստակի մաշկեակը:
Առաջին օղետանն իսկ կձախէ ու կլիմէ, անիծուածը:

— Էդ, ծերուկդ, քո գլխի ցաւը չէ, ասաց իմ թափա-
ռաշըջիկը. կիսմեմ թէ ոչ: Նորին ազնուութիւնը իւր սեփա-
կան մաշկեակը ընծայում է ինձ — այդ նրա ազնուական
կամեցողութիւնն է: Իսկ քեզ, ճորտիդ, վայել է հնազանդիլ
ու չհակառակուիլ:

— Աստծուց չես վախենում, գո՞ղ — աւազակ, բար-
կութեամբ պատասխանեց Սովելիչը: Տեսնում ես, որ ե-
րեխայի խելքը չէ կտրում, ուզում ես կողոպտել նրան,
նրա միամտութիւնից օգտուելով: Ախր ինչի՞դ է պէտք ա-
ղայական մաշկեակը: Քո անիծեալ թիկունքդ նրա մէջ չի
էլ տեղաւորուիլ:

— Խնդրեմ խելք մի թափիր, ասացի ես դաստիարա-
կիս. բէր այստեղ մաշկեակը իսկոյն և եթ:

— Տէր ողորմած Աստուած, հեծծեց Սովելիչը. նա-

պատակի մաշկեակը գրեթէ նիւթ - նոր է: Գեռ. սր է, թէ մի կարգին մարդու տալիր, ալ ոչ թէ այս գծուծ հարբեցողին:

Սակայն մաշկեակը բերուեց: Գեղջուկը իսկոյն և եթ սկսեց չափել իւր վրայ: Իրաւ որ մաշկեակը, որը ինձ հա. մար էլ արդէն փոքր էր, նրա վրայ նեղ էր գալիս, բայց նա այդ անյարմարութեանն էլ չաղթեց մի կերպով՝ ու հազաւ, կարերի տեղերը պատառելով: Թելերի ճրկճրկոյցը լսելով, Սավելիչը քիչ մնաց լացակոծուէր: Թափառաշրջիկը չափազանց գոհ էր իմ տուած ընծայով: Նա ինձ ուղեկցեց մինչև սալակը և խոնարհ գլուխ տալով ասաց. «Շնորհակալ եմ, Ձերդ ազնուութիւն: Թող Աստուած վարձատրէ Ձեր առաքինութիւնը: Յաւիտեան չեմ մոռնալ Ձեր ինձ արած բարիքները:» Նա դնաց իւր ճանապարհով, ես էլ շարունակեցի իմս, ուշք չգործնելով Սավելիչի վրայ և շուտով մոռացայ թէ առաջին օրուայ բուքը, թէ ուղեցուցիս և թէ մաշկեակը:

Օրենբուրգ հասնելուս պէս իսկոյն ներկայացայ գեներալին: Ես տեսայ բարձրահասակ մի տղամարդ, որ արդէն կրճուել էր ծերութիւնից: Նրա երկայն մազերը իսպառ սպիտակած էին: Հին, գոյնը թափած նշանազգեստը լիշտեցում էր Սեննա Իվանովնայի ժամանակուայ զինուորներին, իսկ նրա խօսակցութեան մէջ խիստ զգալի էր գերմանական արտաստնութիւնը: «Պոժէ մոյ (Աստուած իմ) ասաց նա, երեկ միւսօրն էր, որ Անդրեյ Պետրովիչը քո հասակին էր, իսկ այժմ տես ի՞նչ պարման տղայ ունի: Ախ, շամանակ, շամանակ!» Նա քանդեց ծրարի կնիքը և սկսեց կիսաձայն կարդալ, նա հեան էլ իւր նկատողութիւններն անելով. «Ողորմած պարսն, Անդրեյ Կարլովիչ, յոյս ունիմ, որ Ձերդ պայծառափայլութիւնը...» Այս քիչ ձևականութիւն: Փո՛ւ, քնչպէս չէ ամաչում: Իհարկէ, կարգապահութիւնը ամենից գլուխը, բայց այսպէս են գրում միթէ հին կամրատին (ընկերին) .

«Ձերդ պայծառափայլութիւնը չէ մոռացել...» Հըմ... «Երբ. . հանգուցեալ Ֆելքմարչալ Մինիխի... պատերազմի... նոյնպէս և... Կարդինկին . .» Է՛խ, բը՛նգեր (եղբայր), ուրեմն նա դեռ լիշտ է մեր հին խեռութիւններ: «Այժմ խօսինք գործի մասին... Ձեզ մօտ իմ ստահակին. .» Հը՛մ... «Միսը քեզ, ոսկորն ինձ...» Ի՞նչ կը նշանակէ միսը քեզ, ոսկորն ինձ: Երևի ուռուտական մի առած է: Ի՞նչ կնշանակէ այդ, կրկնեց նա հարցը, ինձ դիմելով:

— Այդ կնշանակէ, պատասխանեցի ես հնարաւոր եղածի չափ անմեղ կերպարանքով, որ քաղցր վարուէք ինձ հետ, խստութիւն գործ չդնէք, ազատութիւնս չճնշէք. սոյ ինչ է «միսը քեզ, ոսկորն ինձ»-ի միտքը:

— Հըմ, հասկանում եմ... «Նաև երես չտալ...» Ո՛չ, երևում է միսը քեզ, ոսկորն ինձ, այդ չէ նշանակում... «ընդ սմին ... նրա անցազերը ...» Ո՛ւր է: Հո՛ւ, այստեղ է... «Յալտնել Սեմեոնովսկի . .» Եատ լաւ, ամեն ինչ կանենք. . «Պատուաստիճանները մի կողմ, թող տուր գըրկախառնել քեզ և. . հին ընկեր ու բարեկամ...» Ահա՛, վերջապէս միտքն ընկաւ... և այլն և այլն...

— Դէ՛հ, իմ սիրելի, ասաց նա նամակը կարդալուց ու անցազերս մի կողմ դնելուց լետոյ. ամեն ինչ կ'կարգադրենք. դու սպայ կնշանակուիս ***գնում և սրպէս զի ժամանակը իզուր չկորցնես, հէնց վաղը գնա Բելոգորսկի ժամանակը իզուր չկորցնես, հէնց վաղը գնա Բելոգորսկի բերքը, ուր կճառաչես կապիտան Միրոնովի, մի բարի ու ազնիւ մարդու գորտիմբի մէջ: Այնտեղ դու իսկական ծառայութեան միջ կլինիս և կարգապահութեան կտուրիս: Օրենբուրգում այնպիսի գործ չկայ. մտացրութիւնը վնասակար է երիտասարդ մարդուն: Իսկ այսօր շնորհ բերէք մեզ մօտ ճաշի:

«Ժամ առ ժամ գործս աւելի վատանում է, մտածում էի ինքնիրենս. թնչ օգուտ, որ դեռ մօրս արգանտում գվար-

զիպի սերժանտ էի համարուած: Դրա հետեանքն ինչ ե-
 դաւ: Այն, որ ես ընկայ *** գունդը, մի խուլ բերդի մէջ,
 Կիրգիզ — Կայսակ հարթավայրերի սահմանի վրայ:» Ճաշե-
 ցինք երեքով միասին: Անգրեյ Կարլովիչը, նրա ազիւտան-
 տը և ես: Գերմանական խիստ չափաւորութիւնը տիրում
 էր նրա սեղանին, և ես կարծում եմ, որ բերդապահ զօրքի
 մէջ իմ շուտափոյթ ուղարկուելը մասամբ հետեանք էր
 իւր ո՛չ փարթամ սեղանի վրայ երբեմն աւելորդ հիւր
 ունենալու վախին: Միւս օրը մնաս բարով ասացի զենե-
 րալին և ուղևորուեցի իմ նշանակուած տեղը:



III

Բ Ե Ր Դ Ը

Մէկը ապրում ենք ամբողջով,
 Չուր ենք խմում ու հաց ուտում:
 Ես և իմ կողմով թշնամին
 Գայ աչք ձգէ մեր հայրեն,
 Նրան կընդունենք երբ ու սրբելով,
 Թնդանովը կըյնենք մանրազնեւով:

Չիտաւորան երէ:

Բելոգորսկի բերդը գտնւում էր Օրենբուրգից 40 վերստ
 հեռաւորութեան վրայ: Ճանապարհը ձգւում էր Եաիկի
 զառիվայր ավերի վրայով: Գետը դեռ չէր պատած սառու-
 ցով և նրա կապարագոյն, տխրատեսիլ կոհակները սևին
 էին տալիս ձիւնածածք, միատեսակ եզրների մէջ: Նոցա
 այն կողմը տարածւում էին Կիրգիզ հարթավայրերը: Ես
 խորասուզուած էի մեծ մասամբ տխրայուզ մտածութիւն-
 ների մէջ: Քիչ գրաւչութիւն ունէր ինձ համար բերդա-
 պահ զինուորի կեանքը: Ես աշխատում էի պատկերացնել
 ինձ իմ ապագայ հրամանատար կապիտան Միքոնովին և
 երևակայում էի նրան օրպէս մի խիստ, զայրացկոտ ծե-
 րունի, որ բացի ծառայական դորձերից ուրիշ ոչինչ չգի-
 տէ, և որ ամեն չնչին բանի համար պատրաստ է մարդու
 բանդարգելութեան ենթարկել, լոկ հացով ու ջրով օրերն
 անցնելու դատապարտելով: Մինչդեռ մութն ընկնում էր:

Մենք գնում էինք բաւականին արագ:

— Շատ է մնում բերդին, հարցրի ես սալապանին:

— Շատ չէ մնում, պատասխանեց նա. այ, արդէն Երևում է:

Ես նայում էի չորս կողմս, ահարկու ամբարտակներ, աշտարակներ ու պարիսպներ տեսնելու, բայց գերանի պատնէշով շրջապատուած մի գիւղից զատ, ուրիշ ոչինչ չտեսայ: Մի կողմից բարձրանում էին երեք, չորս խոտի դէզեր, կիսով չափ ձիւնով ծածկուած, միւս կողմից մի կողմ թեքուած մի հողմաղաց, յուլաբար կախ ընկած կեղեկայ թևերով:

— Հապա ո՞ւր է բերդը, հարցրի ես զարմացած:

— Ս. ՚յ, այս է, ասաց սալապանը, գիւղը մտանացոյց անելով և այս խօսքերի վրայ մենք մտանք գիւղ: Գրանդի մօտ ես տեսայ չուգունեայ մի հին թնդանօթ: Փողոցները նեղլիկ էին և ծուռուժուռ, խրճիթները ցածլիկ և մասամբ ծղնոտով ծածկուած: Ես հրամայեցի բերդապետի մօտ գնալ: Մի րոպէից լստոյ սալակը կանգ առաւ մի փայտաշէն տնակի առաջ, որ շինուած էր բարձրադիր տեղում, նոյնախի փայտաշէն մի եկեղեցու մօտ: Ոչ ոք չհանդիպեց ինձ: Ես մտայ բակը և բացի նախասենեակի դուռը: Աթոռի վրայ նստած մի հին զինուոր Կանաչ նշանազգեստի արմուկին կարում էր մի կապտագոյն կարկատան: Ես հրամայեցի զեկուցանել իմ մտին:

— Ներս մտէք, պարոն, մերոնք տանն են, պատասխանեց հին զինուորը:

Ես մտայ հին ձևով կահաւորուած մի կոկիկ սենեակ: Անկիւնում դրուած էր ամանեղէնների պահարան: Պատի վրայ, շրջանակի մէջ, ապակէծածք կախուած էր սպալի մի մրցանակադիր: Նրա մօտ աչքի էին ընկնում վարնոց պատկերներ, որոնք ներկայացնում էին Կիստրինի և Օչակովի առումները նա՝ հարսնացուի ընտրութիւնը և կատուի

թաղումը: Պատուհանի մօտ, բաճկոնակը հագին և տղուխը գլուխը կապած, նստած էր մի պառաւ: Նա թել էր դուրս տալիս, որի կաժը ձեռքերին ձգած բռնում էր միակնանի մի ծերուկ՝ սպալի նշանազգեստով:

— Ի՞նչ էք ուզում, սիրելի պարոն, հարցրեց պառաւը, իւր զբաղմունքը շարունակելով:

Ես պատասխանեցի, որ եկել եմ ծառայութեան և կամենում եմ ներկայանալ պարոն կապիտանին ծառայական պարտաւորութեամբ և այն է, ուզում էի դիմել միակնանի ծերունուն, նրան կապիտանի տեղ ընդունելով, երբ տանտիկինը կորեց իմ բերան սերտած ճառը:

— Իվան Կուզմիչը տանը չէ, նա հիւր է գնացել հայր Գերասիմի մօտ. բայց բոլորը մէկ է, սիրելի պարոն, ես նրա տանտիկինն եմ, խնդրեմ ծանօթանաք: Համեցէք, նստեցէք:

Նա ձայն տուեց աղախնուն և հրամայեց կանչել ուրեաղնիկին: Ծերուկը իւր միմիակ աչքով հետաքրքրութեամբ նայում էր ինձ վրայ: «Համարձակու՞մ եմ հարցնել, ասաց նա. դուք ո՞ր գնդի մէջ բարեհաճում էիք ծառայել:» Ես բաւականութիւն տուի նրա հետաքրքրութեանը: «Բայց ինչո՞ւ բարեհաճեցիք, համարձակու՞մ եմ հարցնել, թիկնապահ զօրքից պահակազօրաց մէջ մտնել:» Ես պատասխանեցի, որ այդպէս էր իշխանութեան կամքը: «Ննթագրել կարելի է, որ թիկնապահ զօրաց սպային անվայել վարմունքների համար» շարունակում էր անխոնջ հարցասէրը: «Հերիք է դատարկ խօսիս, ասաց նրան կապիտանի կինը. տեսնումես երկոտասարդը յոգնած է ճանապարհից, նա քո գլուխ չունի... ձեռքերդ ուղիղ բռնիր... իսկ դու, սիրելի պարոն, ինձ դառնալով շարունակեց նա. մի տրխրիք, որ քեզ քշեցին մեր խուլ անկիւնը: Ոչ առաջինն ես դու և ոչ վերջինը: Կմնաս, կ'ընտելանաս: Շվաբրին Ալեքսէյ Իվանիչը արդէն հինգ տարի է, որ այստեղ է տեղափոխուած մարդասպանութեան պատճառով: Աստուած գիտէ,

Թէ ինչ մեղք է խելքն առել. նա, կբարեհաճիք լսել, մի պորուչիկի հետ գնում է քաղաքից դուրս, ու վերցնում են իրանց հետ սրեր և տուր որ կտաս - սկում են իրար ծակտակել: Ալեքսէյ Իվանիչն էլ սպանում է պորուչիկին, այն էլ երկու վիաների առաջ: Ինչ կհրամայես. ամեն մարդ մեղանչական է:»

Նոյն բոպէին ներս մտաւ ուրեազնիկը, մի նորատի ու վայելչակազմ կողակ:

— Մաքսիմիչ, տոսց նրան կապիտանի կինը, պարոն սպայի համար մի մաքուր բնակարան գտիր:

— Աչքիս վրայ, Վասիլիսա Եգորովնա, պատասխանեց ուրեազնիկը. նորին ազնուութեանը չտեղաւորեմ Իվան Պոլեժակովի տանը:

— Զուր ես խօսում, Մաքսիմիչ, տոսց կապիտանի կինը. Պոլեժակովի տանը առանց այն էլ նեղուածք է. բացի գրանից նա իմ բաւորն է և չէ մոռանում, որ մենք նրա մեծաւորներն ենք: Պարոն սպային... ինչպէս է ձեր տունը, սիրելի պարոն:

— Պետր Անդրեյիչ:

— Պետր Անդրեյիչին տար Սեմեօն Կուզովի տունը: Այն աւազակը իւր ձին իմ բանջարանոցն էր բաց թողել: Ի՛, ինչ կայ, Մակսիմիչ, ամեն ինչ բարեյաջող է:

— Փնօք Աստժոյ, հանդարտութիւն է, պատասխանեց կողակը. միայն Կապրալ Պրոխորովը մի թաս տաք ջրի համար բաղանիքի մէջ կուռել է Ուստինա Նեգուլիւայի հետ:

— Իվան Իգնատիչ, տոսց կապիտանի կինը միակնանի ծերունուն. քննիր Պրոխորովին ու Ուստինային, տես սով է արդար, սով մեղաւոր, ու երկուսին էլ պատժիր: Տէ, Մաքսիմիչ, Աստուած հետգ, գնա: Պետր Անդրեյիչ, Մաքսիմիչը Զեզ կտանի Զեր բնակարանը:

Ես գլուխ տուի ու դուրս եկայ:

Ուրեազնիկը տարաւ ինձ բերդի ծայրում, գետի դաբաւանդ ափի վրայ կանգնած մի խրճիթ: Խրճիթի կէսը բռնել էր Սեմեօն Կուզովի ընտանիքը, միւս կէսը յատկացրին ինձ: Այդ մի բաւականին մաքրատեսիլ սրսկապան էր, միջնորմով երկու մաս բաժանուած: Սովելիչը տեղաւորուիլ սկսեց: Ես դուրս էի նայում նեղլիկ լուսամուտից: Իմ առաջ տարածուած էր տխրամած դաշտավայրը: Մի կողմի վրայ թեքուած՝ կանգնած էին միքանի խրճիթներ, փողոցի մէջ շրջում էին մի քանի հաւեր: Տաշտը ձեռքին մի պառաւ, պատռգամբի վրայ կանգնած, կանչոտում էր խոզերին, որոնք պատասխանում էին նրան միահամուռ խանչիւնով: Եւ ահա Բնչպիսի տեղում գատապարտուած էի ես անցնել իմ երիտասարդութիւնս: Վիշտը հոգիս ընկաւ: Ես հեռացայ լուսամուտից և քնելու պառկեցի առանց ընթերլու, ախանջ չգնելով Սովելիչի յորդորներին, որ կրկնում էր ցաւագին. «Տէր երկնաւոր Աստուած, ոչինչ ուտել չէ բարեհաճում: Ինչ կասէ տիկինը, եթէ որդին տկարանայ:» Միւս օր առաւօտեան, ես, այն է, սկսել էի հագնուիլ, երբ դուռը բացուեց և սենեակս մտաւ մի միջահասակ երիտասարդ սպայ, թխագոյն և առանձնապէս տգեղ՝ բայց կենսալից դէմքով. «Ներեցէք ինձ, տոսց նա ֆրանսիերէն, որ ես առանց ձեռնալուծեան եկայ Զեզ հետ ծանօթանալու: Վերջապէս մարդու երես տեսնելու ցանկութիւնն այնպէս տիրապետեց ինձ, որ էլ չկարողացայ հանդուրժել: Դուք այդ կհասկանաք, երբ մի քանի ժամանակ այտեղ սպրիք:» Ես հասկացայ, որ նա մենամարտի պատճառով թիկնապահ զօրքից հեռացրած սպան է: Մենք խկոյն և եթ ծանօթացանք. Շվաբրինը բաւական խելացի էր: Նրա խօսակցութիւնը սրիմաստ էր ու զբաղեցնող: Նա ուրախ - ուրախ նկարագրեց կապիտանի ընտանիքը, նրան շրջապատող հասարակութիւնը և այն կողմերը, ուր ձգել էր ինձ բաղդը: Ես սրտանց ծիծաղում էի,

երբ ներս մտաւ բերդապետի նախասենեակում նշանազգեստ կարկատող ծեր գինուորը և Վասիլիսա Եգորովնայի կողմից ինձ ճաշի հրաւիրեց: Եվաբրինը պատրաստականութիւն յայտնեց ինձ հետ միասին գնալու:

Բերդապետի տանը մօտենալով, հրապարակի վրայ կարգ կանգնած տեսանք քսանի չափ հին գինուորներ, երկար հիւսերով ու եռանկիւնի գլխարկներով: Առաջներին կանգնած էր մի առույգ ու բարձրահասակ ծերունի, սրածայր գգակը գլխին ու խալածը հագին: Մեզ տեսնելով, նա մօտեցաւ, մի քանի քաղցր խօսքեր ասաց ինձ և նորից սկսեց հրամանատրել (КОМАНДОВАТЬ) իւր գինուորներին: Մենք ուզում էինք կանգնել — նայել մարզանքներին, բայց նա խնդրեց մեզ գնալ Վասիլիսա Եգորովնայի մօտ. «Իսկ այստեղ, աւելացրեց նա, ձեզ նայելու բան չկայ:»

Վասիլիսա Եգորովնան մեզ ընդունեց սիրալիր պարզութեամբ և ինձ հետ վարուում էր այնպէս, կարճես տարիներով իրար հետ ծանօթ էինք: Ծերուկ գինուորն ու Պալաշան պատրաստեցին սեզանք: «Ի՞նչ է աչօր իմ Իվան Կուզմիչը մարզանքներին անձնատուր եղել, սոսց կապիտանի կինը. Պալաշկա, պարոնին ճաշի կանչիր: Այս սուր է Մաշան:» Նույն րոպէին ներս մտաւ բոլորակերես, կարմրաթուշ, շիկահեր, մազերը՝ կրակի նման բորբոքուող տկանջ ների ետև սանտրած, տասնևութը տարու մի աղջիկ: Առաջին տեսքից նա ինձ շատ դուր չեկաւ: Ես նախապաշարուածը էի նայում նրա վրայ: Եվաբրինը ինձ նկարագրել էր Մաշային, կապիտանի աղջկան, որպէս մի լիմտրամիտ աղջիկ: Մարիա Իվանովնան նստեց մի անկիւն և սկսեց կարանել: Սեղանի վրայ բերուեց շշին (ПИВ): Վասիլիսա Եգորովնան ամուսնուն չտեսնելով, Պալաշկային երկրորդ անգամ զրկեց նրա ետևից. «Աստ պարոնին, հիւրերն սպասում են, շշին կ'պապի: Փնփն Աստծոյ, մարզանքները փախչելու բաներ չեն, իսկ կոկորդը ցաւեցնելու չափ բղաւելու:

Ժամանակ շատ կունենայ:» Եուտով եկաւ կապիտանը, միակնանի ծերունու հետ միասին:

— Էս քնչ բան է, այ մարդ, որ կերակուրը վաղուց բերուած է, իսկ դու չկաս ու չկաս:

— Ի՞նձ լսիր, Վասիլիսա Եգորովնա, պատասխանեց Իվան Կուզմիչը. ծառայութեամբ էի զբաղուած, գինուորներիս էի մարզում:

— Ե՛հ, թող է, պատասխանեց տիկինը. անո՛ւն է, թէ գինուոր ես մարզում: Ոչ նոցա գլխի բանն է ծառայութիւնը և ոչ դու նրանից մի բան հասկանում ես: Տո՛ւն նստէիր, փնփն տայիր Աստծոյ, էդ աւելի լաւ կլինէր: Թանկագին հիւրեր, խնդրեմ սեղան նստէք:

Մենք նստանք ճաշելու: Վասիլիսա Եգորովնան մի րոպէ էլ լուռ չէր մնում ու հարցեր էր, որ տալիս էր ինձ. սովքեր են իմ ծնողներս, կենդանի են արդեօք, սրտեղ են ապրում, քնչ կարողութեան տէր են: Լսելով, որ հայրս երեք հարիւր զիւղացի ունի, «Հեշտ է ասելը, բացականչեց նա. իրաւ որ հարուստ մարդիկ կան եղել աշխարհում: Իսկ մենք, սիրելի պարոն, ունինք չունինք մի աղախին, Պալաշկան, բայց, փնփն Աստծոյ, ապրում ենք մեզ համար: Մէկ ցաւ միայն ունինք. Մաշայի մարդու գնալու ժամանակն է, բայց սուր է օժիտ. մի նօսր սանտր, մի փրնջաւել (ВѢЖКА) ու 15 կոպէկ փող (Տէր Աստուած, դու չբարկանաս) բաղանիք գնալու համար: Լաւ է, թէ մի բարի մարդ գտնուի, թէ ոչ լաւիտեան նշանուելու աղջիկ էլ կեցիր:» Ես նայեցի Մարիա Իվանովնային. նա սաստիկ շիկնել էր և մինչև անգամ արտասուքի կաթիլներ ընկան նրա ափսէի մէջ: Ես ափսոսացի նրան և շտապեցի փոխել խօսակցութիւնը:

— Լսեցի, որ բաշկիրները պատրաստուում են ձեր բերդի վրայ յարձակում գործել, տոսցի ես բաւականին անճահ կերպով:

— Ուժքց ես բարեհաճել լսել այդ լուրը, հարցրեց
Իվան Կուզմիչը

— Սյգպէս ասացին ինձ Սրենբուրգում, պատասխանեցի
ես:

— Գատարկ խօսքեր են, ասաց բերդապետը. այստեղ
վաղուց է ոչինչ չէ լսուած: Բաշկիրները աչքը վախեցած
է, կիրգիզներն էլ առած դասերը դեռ չեն մոռացել: Մի
վախենար չեն վրայ տալ: Իսկ թէ վրայ տուին, այնպիսի
մի սարսափ կազդեմ նոցա, որ ասան տարի հերիք լինի:

— Եւ դուք չէք վախենում, շարունակեցի ես՝ դառնա-
լով կապիտանի կնոջը, մնալ այսպիսի վտանգների ենթա-
կալ բերգում:

— Սովորել ենք, իմ սիրելիս, պատասխանեց նա. քսան
տարի սրանից յառաջ զօրագնդից մեզ այստեղ տեղափոխե-
ցին և Աստուած միայն գիտէ, թէ ինչպէս էի վախենում
այդ անիծեալ անհաւատներից: Որ չէի տեսնում քաւ-
թառի մորթու գտակը ու լսում նոցա ճիչը, հաւատում
ես, սիրելիս, սիրտս մարէմբում էր: Իսկ հիմալ այնպէս
ընտելացել եմ, որ տեղիցս էլ չեմ շարժուիլ, եթէ գան
տան, որ չարագործները բերդի չորս կողմը չափչփում են:

— Վասիլիսա Եգօրովնան ամենաքաջսիրտ կին է, ծան-
րութեամբ նկատեց Շվարբինը. Իվան Կուզմիչը կարող է
այդ վկայել:

— Հն, ինձ լսիր, ասաց Իվան Կուզմիչը. վախկոտ տե-
սակի կանանցից չէ:

— Իսկ Մարիա Իվանովնան, հարցրի ես. նա էլ Ձեզ
նման սրտոտ է, թէ ոչ:

— Սրտոտ, պատասխանեց մայրը. ոչ, նա վախկոտ է:
Մինչև հիմալ հրացանի թնդիւնը առանց սարսափի լսել
չէ կարող. իսկոյն գողգողում է: Իսկ երբ սրանից երկու
տարի յառաջ, իմ տօնի օրը, Իվան Կուզմիչի խելքին փչեց
արձակել մեր թնդանօթը, իմ խեղճ հոգեակս քիչ մնաց

վախից միւս աշխարհը փոխուէր: Այն ժամանակու-
նից հետէ, էլ չենք կրակում անիծեալ թնդանօթը:

Մենք սեղանից վեր կեցանք: Կապիտանը իւր կնոջ
հետ զնաց ննջելու, իսկ ես զնացի Շվարբինի մօտ, որի
հետ և անցրի ամբողջ երեկոն:

IV

Մ Ե Ն Ա Մ Ա Ր Տ

Դէ՛հ, հրամայել, կանգնել դու կարգին,
Կանանկ ինչպէս ծակեմքս մարմնս:

Կաւաքան:

Անցաւ մի քանի շաբաթ և իմ կեանքը Բելոգօրսկիյ
բերդի մէջ ոչ միայն տանելի, այլ և դուրեկան դարձաւ:
Բերդապետի տանը ինձ ընդունում էին, որպէս մի ազգա-
կից-բարեկամ: Այր և կին ամենալարգոյ մարդիկ էին: Զի-
նուորի մի որդի, սպայի աստիճանի հասած, Իվան Կուզմի-
չը, թէև անկիրթ ու հասարակ, բայց ամենաազնիւ ու բա-
րի մի մարդ էր: Կինը, համաձայն նրա անհոգ բնաւորու-
թեան, իշխում էր նրա վրայ: Վասիլիսա Եգօրովնան ծա-
ռայական գործերի վրայ ևս նայում էր այնպէս, ինչպէս
իւր տնական գործերի վրայ, և ինչպէս իւր անակը, կա-
ռավարում էր նոյնպէս և բերդը: Մարիա Իվանովնան շու-
տով էլ չէր քաշուում ինձնից: Մենք ծանօթացանք: Նա

մի խոհեմ ու զգայուն աղջիկ էր: Աննկատելի կերպով ես կապուեցի այդ բարի ընտանիքին, մինչև անգամ պահակազօր պորուչիկ միակնանի Իվան Իգնատիչին, որի մասին Շվաբրինը հնարել էր, որպէս թէ նա աններելի կապեր ունէր Վասիլիսա Եգօրովնայի հետ, որի մէջ սակայն ճշմարտութեան նշույլ անգամ չկար: Բայց Շվաբրինի համար այդ միևնոյն էր: Ես ստացայ սպայի աստիճան: Ծառայութիւնը ինձ չէր ծանրաբեռնում: Աստուածախնամ բերդի մէջ ոչ զննուեք (ОСМОТРЕ) կար, ոչ մարզանք, ոչ պահնորդութիւն: Բերդապետը իւր ցանկացած ժամանակ երբեմն մարդում էր զինուորներին, բայց դեռ չէր կարողացել հասնել այն կէտին, որ նոքա բոլորն էլ զանազանէին թէ որն է աջ կողմը, որը ձախը: Շվաբրինը ունէր մի քանի ֆրանսիերէն գրքեր: Ես սկսեցի կարդալ և իմ մէջ ծագեց սէր դէպի գրականութիւնը: Առաւօտները ես կարդում էի, վարժուում էի թարգմանութեան, երբեմն և ուսանաւոր գրելու մէջ, ճաշում էի համարեա միշտ բերդապետի տանը, ուր և անցնում էի օրուայ մնացորդը: Այնտեղ երբեմն գալիս էր և հայր Գերասիմը իւր կնոջ, Ակուլինա Պանֆիլովնայի հետ, որ շրջականների առաջին համբաւաբերն էր: Ալեքսէյ Իվանիչ Շվաբրինի հետ ես, Իհարկէ, տեսնում էի ամեն օր, բայց նրա խօսակցութիւնը քանի գնում, այնքան անգուր էր դառնում ինձ: Նրա մշտական կատակաբանութիւնները բերդապետի ընտանիքի վրայ՝ ինձ չէին դուր գալիս, ևս առաւել՝ Մարիա Իվանովնայի մասին արած կծու նկատողութիւնները: Ուրիշ շրջան չկար բերդի մէջ և ես չէի էլ ցանկանում մի այլը:

Նախագուշակութիւնների հակառակ, բաշկիրները խռովութիւն չէին բարձրացնում: Հանդարտութիւնը թագաւորում էր մեր բերդի չորս կողմը, բայց խաղաղութիւնը խանգարուեց ներքին յանկարծակի երկպառակութեամբ:

Ես արդէն ասացի, որ գրականութեամբ էի պարա-

պում: Իմ առաջին փորձերը այն ժամանակուայ համար բաւական յաջող էին և Ալեքսանդր Պետրովիչ Սոււարովը մի քանի տարի լետոյ շատ գովում էր նրանց: Մի անգամ ինձ յաջողուեց դրել մի ոտանաւոր, որին ես հաւանում էի: Յայտնի է, որ հեղինակները, երբեմն իւրեանց գրուածների մասին խորհուրդ հարցնելու պատրուակով, իսկապէս բարեհաճ ունկնդիր են օրոնում: Ես արտագրեցի իմ ոտանաւորը ու տարայ Շվաբրինին, սր բերդում եղածների մէջ միայն և եթ կարող է գնահատել քերթողի երկը: Փոքրիկ յառաջաբանից լետոյ ես գրպանիցս հանեցի տետրակս ու կարգացի հետևեալ տողերը.

Սիրային միտքը ոչընչացնելով,
Զգտում եմ մոռնալ ես գեղեցկուհուն,
Եւ, անի, Մաշայից հեռու փախչելով,
Ազատ կեանք ստանալ եմ նորից յուսում:

Բայց այն աչքերը, որ ինձ գրաւեցին,
Ամեն մի ըուպէ իմ առաջին են.
Նոքա խռովեցին իմ անդորր հոգին,
Խաղաղութիւնս ոչընչացրին:

Դժբաղդութեանս տեղեակ լինելով՝
Խղճա՛, ո՛վ Մաշա, իմ մատաղ կեանքին.
Դառն վիճակս անտես չառնելով,
Նոյնպէս, որ ես եմ քո սիրոյդ գերին:

— Ի՞նչպէս ես գտնում, հարցրի ես Շվաբրինին, սպասելով գովասանք լսել, որին արժանի լինելուս մասին չէի կասկածում: Բայց ի մեծ զայրոյթ սրտիս, սովորաբար ներողամիտ Շվաբրինը վճռական կերպով յայտնեց, որ իմ դրածը ոչինչ բանի պէտքը չէ:

— Ինչո՞ւ, հարցրի ես, զայրոյթս թագցնելով:

— Արովհեան, պատասխանեց նա, այդպիսի ստանաւոր-
ները վայել են իմ ուսուցիչ Վասիլից Կիրիլովիչ Տրեանա-
կովսկուն և ինձ լաւ լիշեցնում են նրա սիրային կտորները:

Այնուհետեւ նա վեր առաւ տետրակս և սկսեց իւրա-
քանչիւր տող, իւրաքանչիւր բառ անողորմաբար քննու-
թեան ենթարկել, ինձ ամենադաժան կերպով ծաղրելով:
Ես չկարողացայ համբերել, խլեցի նրա ձեռքից տետրակս
և ասացի, որ էլ յաւիտեան չեմ ցոյց տալ նրան իմ եր-
կերը: Եվաբրինը այս սպառնալիքիս վրայ էլ ծիծաղեց:

— Տեսնենք, կ'կարողանան խօսքդ պահել: Ոտանաւոր
թխողներին նոյնքան անհրաժեշտ է ունկնդիրը, որքան
Իվան Կուզմիչին մի շիշ օղին ճաշից յառաջ: Իսկ ո՞վ է
այդ Մաշան, որին յայտնում ես քո քնքոյշ զգացմունք-
ներդ ու սիրային վշտերդ: Չլինի՞ Մարիա Իվանովնան է:

— Քո գործը չէ, ով է այդ Մաշան, խոժուռագէմ
պատասխանեցի ես. ոչ քո կարծիքն է ինձ հարկաւոր և
ոչ քո ենթադրութիւնները:

— Օհ, անձնասէր ստանաւոր թխող և հեղաբարձ
տարփածու, շարունակում էր Եվաբրինը, առաւել ու առա-
ւել ինձ զայրացնելով. միայն ականջ դիր իմ բարեկամական
խորհրդին. եթէ ուզում ես յաջողութիւն ունենալ, խոր-
հուրդ եմ տալիս միայն ստանաւորներով չգործել:

— Ի՞նչ կ'նշանակէ այդ, պարոն, խնդրեմ բացատրէք:

— Համեցէք: Այդ կ'նշանակէ, որ եթէ ուզում ես Մա-
րիա Իվանովնան երեկոներին մթնելիս քեզ մօտ գալ,
բընքշիկ ստանաւորների տեղ բնծայիր նրան մի գոյգ օղ:

Արիւնս եռ եկաւ:

— Իսկ ի՞նչ պատճառով դու այդ կարծիքին ես նրա
մասին, հարցրի ես, հազիւ զսպելով իմ զայրոյթն ու ան-
բաւականութիւնը:

— Այն պատճառով, պատասխանեց նա զժոխային ծաղ-
րածութեամբ, որ փորձով գիտեմ նրա բարքն ու սովորու-

թիւնները:

— Սուտ ես խօսում. լիբրդ դու, գոչեցի ես կատաղու-
թեամբ. ամենանամօթ կերպով սուտ ես խօսում:

— Ես այդ խօսքերը քեզ չեմ ուտեցնիլ, ասաց նա,
ձեռքս ճմլելով. Դուք ինձ սատիսֆակցիա (բաւականու-
թիւն) կտաք:

— Պատրաստ եմ, երբ կամենաս, յուրախութեամբ պա-
տասխանեցի ես:

Նոյն ըսպէինք ես պատրաստ էի նրան պատառ պատառ
անելու: Ես խօսյն գնացի Իվան Իգնատիչի մօտ և գտայ
նրան ասեղը ձեռքին աշխատելիս: Բերդապետուհու պա-
տուէրի համաձայն, նա թելի վրայ սոկոններ էր շարում
ձմրան համար չորացնելու:

— Սա, Պետր Անդրելիչ, ասաց նա, ինձ տեսնելով.
բարի եկաք: Ո՞ր կտաչիցն է, ի՞նչ գործով, հարցնել համար-
ձակուում եմ:

Կարճ խօսքերով յայտնեցի նրան, որ ես կուռել եմ Ա-
լեքսէյ Իվանիչի հետ, իսկ իրան, Իվան Իգնատիչին, խընդ-
րում եմ իմ մարտավան լինել: Իվան Իգնատիչը իւր միակ
աչքը ինձ վրայ չռած, ուշադիր լսում էր ինձ:

— Դուք բարեհաճում էք ասել, պատասխանեց նա, որ
ուզում էք Ալեքսէյ Իվանիչին սրտխողխող անել և ցան-
կանում էք, որ ես այդ բանին վկայ լինիմ: Այդպէս է մի,
հարցնել համարձակուում եմ:

— Իսկ և իսկ այդպէս:

— Ի ոէր Աստծոյ, Պետր Անդրելիչ, ինչ օրիններ էք
սարքում. Դուք և Ալեքսէյ Իվանիչը նախատական խօսքեր
էք ասել իրար: Տեսար գժբաղդութիւնը: Նախատինքը
էք ասել իրար: Նա Ձեզ նախատել է, Դուք էլ հայտ-
նեցէք նրան. նա Ձեր երեսին է խփել. Դուք նրա ական-
ջին կպցրէք մէկ, երկու, երեք անգամ, յետոյ գործերիդ
գնացէք. իսկ մենք կհաշտեցնենք ձեզ: Թէ ոչ, ինչ մի

բարի գործ է իւր մերձաւորին սրախողխող անել, հարցնել համարձակու՞մ եմ: Դեռ ո՞ւր է, թէ Դուք նրան խողխողէիք. գլուխը քարը, ես ինքս էլ Ալեքսէյ Իվանիչին շատ սիրողներէցը չեմ: Բայց եթէ նա՛ Զեզ սրի բաժին անէ, ինչք՞ նման կլինի այդ, հարցնել համարձակու՞մ եմ:

Խելահաս պորուչիկի դատողութիւնները չխախտեցին իմ որոշումը: Իմ դիտաւորութիւնը մնաց նոյնը:

— Ինչպէս Զեր կամքն է, ասաց Իվան Իգնատիչը. արէք, ինչպէս կամենաք: Ել ես ինչո՞ւ այդտեղ վկայ լինեմ: Ի՞նչ կայ. երկու մարդ կու՞ում են. թէ մի չտեսնուած բան է, հարցնել համարձակու՞մ եմ: Փառք Աստծոյ, շվեդացւոց վրայ էլ ենք գնացել, թուրքերի վրայ էլ, ամեն բան էլ տեսել ենք աշխարհում:

Ես փորձեցի մի կերպով բացատրել նրան մարտավկայի պաշտօնը, բայց Իվան Իգնատիչը բոլորովին չկարողացաւ հասկանալ ինձ:

— Դուք գիտէք, ասաց նա. բայց եթէ ես այդ գործի մէջ խառնուելու լինիմ, ապա այսպէս միայն, որ երթամ Իվան Կուզմիչի մօտ ու, որպէս ծառայական պարտք, յայտարարեմ նրան, թէ բերդի մէջ նիւթու՞մ է չարագործութիւն, որ հակառակ է պետութեան շահերին. չի՞ բարեհաճիլ արդեօք պարոն բերդապետը հարկաւոր միջոցներ ձեռք առնել.....:

Ես վախեցայ ու սկսեցի խնդրել Իվան Իգնատիչին, որ բերդապետին ոչինչ չյայտնէ և հազիւ համոզեցի նրան: Նա խօսք տուեց լռելու և ես վճռեցի ձեռք քաշել նրանից:

Սովորութեանս համաձայն երեկոն ես անցրի բերդապետի տանը: Ես աշխատում էի ուրախ ու անտարբեր երեւիլ, որպէս զի ոչ կասկածի և ոչ ձանձրալի հարցութիւններ տեղիք տամ, բայց խոստովանում եմ, որ ես չունէի այն սառնարիւնութիւնը, որով միշտ պարծենում են իմ

դրութեան մէջ եղածները: Այդ երեկոյ ես հակուած էի քնքշութեան ու գորովի: Մարիա Իվանովնան սովորականից աւելի էր դուր գալիս ինձ: Այն միտքը, որ նրան գուցէ վերջին անգամ էի տեսնում, խանդաղատանքով լըցնում էր սիրտս դէպի նա: Եկաւ նոյնպէս և Շվաբրինը: Ես նրան մի կողմ տարայ ու յայտնեցի Իվան Իգնատիչի հետ ունեցածս խօսակցութիւնը: «Ինչերի՞ս է պէտք մարտավկան, չոր-չոր ասաց նա. առանց նրան էլ կտեսնենք մեր գործը:» Պայման դրինք մենամարտել բերդի մօտ գտնուող դէզերի ետև, հետևեալ օրը առաւօտեան եօթը ժամին: Մենք խօսակցում էինք ըստ երևոյթին այնպէս բարեկամաբար, որ Իվան Իգնատիչը ուրախութիւնից ակամայ գոչեց. «Վաղուց պէտք էիք այդ արած, գոհ դէմքով ասաց նա ինձ. վատ խաղաղութիւնը գերագանց է լաւագոյն կուռից. իսկ եթէ պատուաբեր էլ չէ, գոնէ աւելի առողջարար է:»

— Ի՞նչ, թէնչ, Իվան Իգնատիչ, ասաց բերդապետուհին, որ մի անկիւնում խաղաթղթերով վիճակ էր բաց անում. ես լաւ չլսեցի:

Իվան Իգնատիչը ինձ վրայ դժգոհութեան նշաններ տեսնելով ու լիշէլով իւր տուած խոստումը, շփոթուեց ու չգիտէր ինչ պատասխանել: Շվաբրինը նրան օգնութեան հասաւ:

— Իվան Իգնատիչը, ասաց նա, իւր հաւանութիւնն է յայտնում մեր հաշտութեան վերաբերութեամբ:

— Իսկ այդ ո՞ւմ հետ ես գժտութիւն ունեցել, սիրելի պարոն:

— Մենք բաւական տաք վիճաբանութիւն ունեցանք Պետր Անդրեյիչի հետ:

— Այդ թէնչ պատճառով:

— Ամենաչնչին բանի, Վասիլիսա Եգօրովնա. մի ոտանաւորի պատճառով:

— Բան էք գտել վիճելու, Ոսանաւորի պատճառով ... Այդ ինչպէս պատահեց:

— Այ ինչպէս. Պետր Անդրեւիչը մտաբար մի երգ էր յարինել և աչսոր երգեց ինձ մօտ: Ես էլ սկսեցի իմ սիրելի երգը:

Կապիտանի աղջիկ, զբօսնելու

Մի դուրս գալ կէս զիշերին:

Աններգաշնակութիւն յառաջ եկաւ: Պետր Անդրեւիչը մէկ բարկանալ ուզեց, բայց յետոյ մտածեց հասկացաւ, որ ամեն մարդ ազատ է երգել այն, ինչ ուզենայ: Գործը զրանով էլ վերջացաւ:

Եվաբրինի անամօթութիւնը քիչ մնաց ինձ կատաղեցնէր, բայց ինձնից զատ ոչ ոք չհասկացաւ նրա կապիտ շրջաբանութիւնը:

Գոնէ ոչ ոք նրա վրայ ուշք չդարձրեց: Երգերից՝ խօսակցութիւնը անցաւ ոտանաւոր զրոյնների վրայ և բերդապետը նկատեց, որ նոքա բոլորը անառակ ու արբեցութիւնից աչք չբացող հարբեցողներ են և բարեկամաբար խորհուրդ տուեց ինձ թողնել ոտանաւոր զրոյնը, որպէս ծառայութեան ներհակ ու ոչ մի բարի հետեւանքի չհասցնող մի գործ:

Եվաբրինի ներկայութիւնը անտանելի էր ինձ համար: Ես մնաս բարով ասացի բերդապետին ու նրա ընտանիքին, զնացի տուն, զննեցի սուրս, փորձեցի նրա ծայրի սրութիւնը ու պառկեցի քնելու, հրամայելով Սավելիչին զարթեցնել ինձ ժամը 7-ին:

Միևս օրը նշանակեալ ժամին ես գէգերի ետև սպասում էի իմ ախօլեանին: Ետևով նա էլ եկաւ: «Կարող են վրայ գալ, ասաց նա ինձ. պէտք է շտապել:» Մենք հանեցինք նշանագետներս, մնացինք միայն բաճկոններով ու մերկացրինք սրերս: Նոյն րոպէին վրայ հասաւ Իվան Իգնատիչը հինգ հատ ծերուկ զինուորներով: Նա ստիպմամբ

կանչեց մեզ բերդապետի մօտ: Մենք թէև զայրացանք, բայց հնազանդուեցինք: Զինուորները շրջապատեցին մեզ և մենք հետևեցինք Իվան Իգնատիչին, որը մեզ տանում էր հանդիսաւոր կերպով, առաջից զարմանալի վսեմութեամբ քայլելով:

Մենք ներս մտանք բերդապետի տունը: Իվան Իգնատիչը բացեց դռները ու հանդիսաւոր ձայնով յայտարարեց. «Երբ:» Մեզ գիմաւորեց Վասիլիսա Եգօրովնան: «Ախ, սիրելի պարոններ, ինչք նման է ձեր արածը: Ի՞նչպէս, ինչո՞ւ: Մեր բերդի մէջ մարդասպանութիւն նիւթել: Իվան Կուզմիչ, բանտարկեցէք նոցա: Պետր Անդրեւիչ, Ալեքսէյ Իվանիչ, տուէք այտեղ ձեր սրերը, տուէք, տուէք: Պալաշկա, տնօր այս սրերը նկուղը: Պետր Անդրեւիչ, քեզնից այսպիսի բան չէի սպասում. ինչպէս չես խղճահարւում: Ուրիշ բան է Ալեքսէյ Իվանիչը. նա հէնց մարդասպանութեան համար թիկնապահներ ժիջից հեռացուած է: Նա Սաաճոյ էլ չէ հաւատում, իսկ դո՞ւ ինչ: Դու էլ ուզում ես նրան հետևել:»

Իվան Կուզմիչը բոլորովին համաձայն էր իւր ամուսնու հետ ու ասում էր. «Ինձ լսիր, Վասիլիսա Եգօրովնան իրաւ է ասում մենամարտը օրինական կարգով արգելուած է զինուորական արտիկուլի (պարտագրի) մէջ:» Նոյն միջոցին Պալաշան առաւ մեր սրերը ու տարաւ նկուղը: Ես չկարողացայ ծիծաղս բռնել: Եվաբրինը պահում էր իւր վսեմ կերպարանքը: «Չնայելով իմ խորին յարգանքին դէպի Ձեզ, ասաց նա բերդապետուհուն սառնարիւնութեամբ. չեմ կարող չնկատել, որ Դուք իզուր էք բարեհաճում անհանգիստ լինել, մեզ Ձեր դատաստանին ենթարկելով: Թողէք այդ Իվան Կուզմիչին. այդ նրա գործն է:» — Ախ, սիրելի պարոն, բաց սկանչեց բերդապետուհին. միթէ այր ե կին մի հողի ու մի մարմին չե՞ն: Իվան Կուզմիչ, ինչ ես մոլորակել: Իսկայն փակիր նոցա զանազան անկիւններ:

րում, հրամայիր տալ միայն հաց ու ջուր, որպէս զի այդ անմտութիւնը դուրս գայ գլուխներէրից: Բացի դրանից, հայր Գերասիմը թող նոցա վրայ ապաշխարանք դնէ, որ մեղացի դան Աստծոյ և մարդկանց առաջ զղջան:»

Իվան Կուզմիչը չգիտէր, ինչ որոշում անէր: Մարիա Իվանովնան չափազանց գունաթափ էր: Կամաց կամաց փոթորիկը մեղմացաւ. բերդապետուհին հանդարտուեց և մեզ ստիպեց իրար համբուրելու: Պալաշկան լետ բերեց մեր սրբերը: Մենք բերդապետի տնից դուրս ելանք, առերևույթս հաշտուած: Իվան Իգնատիչը ուղեկցում էր մեզ: «Ի՞նչպէս չամաչեցիք, բարկութեամբ ասացի ես նրան, մոտենել մեզ բերդապետին, երբ խօսք տուիք չանել այդ:» «Վկայ է Աստուած, որ Իվան Կուզմիչին ես ոչինչ չեմ ասել, պատասխանեց նա. Վասիլիսա Եգորովնան դուրս քաշեց ինձնից այդ գաղտնիքը և ամեն բան կարգադրեց առանց բերդա ետի գիտութեան: Սակայն, փառք Աստծոյ, որ բանն այսպէս վերջացաւ:» Այս ասելով, նա տուն դարձաւ: Ես և Շվաբրինը մնացինք միայնակ:

— Մեր գործը սրանով վերջանալ չէ կարող, ասացի ես նրան:

— Իհարկէ, պատասխանեց Շվաբրինը. Դուք Ձեր արիւնով պիտի պատասխան տաք ինձ, Ձեր լանդգնութեան համար: Բայց հաւանական է, որ մեզ վրայ շարունակ հսկեն: Մի քանի օր մեզ հարկաւոր կլինի բարեկամութիւն կեղծել: Յտեսութիւն:

Եւ մենք բաժանուեցինք այնպէս, որպէս թէ ոչինչ չէր պատահած: Վերադառնալով բերդապետի տունը, ես նստայ Մարիա Իվանովնայի մօտ: Իվան Կուզմիչը տանը չէր, Վասիլիսա Եգորովնան զբաղուած էր տնային գործերով: Մենք սկսեցինք ցած ձայնով խօսակցիլ: Մարիա Իվանովնան քնքշաբար լանդիմանում էր ինձ այն անհանգստութեան համար, որ Շվաբրինի հետ ունեցածս զժտութիւնը

պատճառել էր բոլորին էլ:

— Ես սարսափեցի, ասում էր նա, երբ մեզ ասացին, որ պէտք է սրբերով մենամարտիք: Ի՞նչ տարօրինակ են այս տղամարդիկ: Միմիակ խօսքի պատճառով, որը մի շաբաթ լետոյ անշուշտ կմոռացուէր, նոքա պատրաստ են իրար խողխողել, զոհ բերելով ոչ միայն կեանքերը, այլ և խրդճերը ու բարօրութիւնը այն մարդկանց, որոնք... Բայց ես հաւատացած եմ, որ զժտութեան սկսողը Դուք չէք:

— Իսկ ինչո՞ւ էք Դուք այդպէս կարծում, Մարիա Իվանովնա:

— Ի՞նչ ասեմ... նա այնպիսի ծաղրաբանն է: Ես չեմ սիրում Ալեքսէյ Իվանիչին: Նա ինձ սաստիկ դուր չէ գալիս. բայց, տարօրինակ բան, ես երբէք չէի ցանկանալ, որ ինքս էլ նրան այդպէս դուր չգամ:

— Իսկ ի՞նչ էք կարծում, Մարիա Իվանովնա, դուր գալիս էք Դուք նրան, թէ ոչ:

Մարիա Իվանովնան կակազեց ու կարմրեց:

— Ինձ այդպէս է թւում ասաց նա. ես կարծում եմ, որ դուր գալիս եմ նրան:

— Ինչո՞ւ է Ձեզ այդպէս թւում:

— Որովհետեւ նա ինձ ուզում էր:

— Ուզում էր, նա Ձեզ ուզում էր: Այդ երբ:

— Սնցեալ տարի, Ձեր գալուց երկու ամիս յառաջ:

— Եւ Դուք չուզեցիք նրան առնել:

— Ինչպէս տեսնում էք, այն: Իհարկէ, Ալեքսէյ Իվանիչը խելացի մարդ է, լաւ տոհմից ու հարուստ, բայց երբ մտածում եմ, որ պսակի ժամանակ բոլորի ներկայութեամբ պարտաւորուած կլինիմ համբուրուել նրա հետ... Ո՛չ երբէք, աշխարհային ո՛չ մի բարօրութեան համար:

Մարիա Իվանովնայի խօսքերը բացին իմ աչքերը և բաներ պարզեցին ինձ: Ես հասկացայ պատճառը այն ժամանակ չարախօսութեան, որով Շվաբրինը հալածում էր

նրան: Հաւանական է, որ նա նկատել էր մեր երկուսի փոխադարձ հակուժը և աշխատում էր անջատել մեզ իրարից:

Մեր գոտուժեան պատճառ եղող խօսքերը ինձ այժմ առաւել զգուշելի երևեցին, երբ ես նոցա մէջ, կոպիտ ու անվայել ծաղրի փոխանակ, տեսայ նախամտածած զրպարտութիւն: Յանդուգն լեզուագոսրին պատժելու փափագս առաւել սաստկացաւ և ես անհամբերութեամբ միայն յարմար դէպքի էի սպասում:

Ես երկար չսպասեցի: Հետևեալ օրը, երբ ես եղերեզ գրելու համար նստած, յանգեր որոնելով կրճոտում էի գրիչս, Շվաբրինը ծեծեց լուսամուտս: Ես վայր գրի գրիչս վերցրի սուրս և դուրս եկայ: «Ել ինչո՞ւ բանը լետացնենք, սոսայ ինձ Շվաբրինը. մեր վրայ չեն հսկում: Իջնենք գետի տփը. այնտեղ մեզ ոչոք չի խանգարիլ:» Մենք լուսթեամբ յառաջ գիմեցինք: Չառիվայր նրբուղիով վայր իջանք, կանգ առանք հէնց գետի մօտ ու մերկացրինք սրերս: Շվաբրինը ինձնից աւելի հմուտ էր, բայց ես առաւել ուժեղ էի ու անվեհեր: Մուսիո Բայրէն, որ մի ժամանակ զինուոր էր եղել, սրավարժութեան մի քանի գասեր էր տուել ինձ, որոնցով ես այժմ օգտուում էի: Շվաբրինը չէր կարծում, որ ես այնքան վտանգաւոր հակառակորդ կարող եմ լինել: Երկար ժամանակ մենք իրար ոչ մի վնաս հասցնել չէինք կարողանում: Վերջապէս Շվաբրինի թուլանալը նկատելով, ես սկսեցի եռանդագին յարձակուիլ նրա վրայ: Նրով և քջեցի նրան համարեա նոյն իսկ գետի մէջ: Յանկարծ ես լսեցի, որ մէկը բարձրաձայն տալիս է անունս: Ես լետ նայեցի ու տեսայ Սավելիչին, որ զարաւանդի նրբուղիով վազում էր դէպի ինձ: Հէնց նոյն բոլէին զգացի, որ մի բան սաստիկ ծակեց կուրծքս, աջ ուսիցս նելքե: Ես վայր ընկայ և ուշագնաց եղայ:



V

Ս Է Ր.

Այլ աղջիկ, աղջիկ, գեղանի աղջիկ,
Մի գնար մարդու նորատի, աղջիկ.
Խորհուրդ հարցու դու, աղջիկ, քո հօրդ,
Հօրդ ու մօրդ, ազգակիցներեդ.
Ժողովրդեկ համար, աղջիկ, խելք-շտորհք,
Խելք-շտորհք ժողովրդ, նաև լաւ օճիկ:

Ժողովրդական էրբ

Թէ ինձանկի յար գանես, ինձ կմոռնաս,
Թէ ինձանկի վարս գանես, ինձ կյիշես:

Նոյն

Երբ սթափուեցի, մի քանի ժամանակ չէի կարողանում խելքս ժողովել և չէի հասկանում, թէ ինչ է պատահել ինձ: Ես պառկած էի գարգիծի վրայ, մի անձանօթ սենեակում և ստատիկ թուլութիւն էի զգում: Իմ առաջ, մօմը ձեռքին, կանգնած էր Սավելիչը: Մէկը խնամքով քանդում էր այն կապոցները, որոնցով փաթաթուած էին կուրծքս և ուտս: Կամաց կամաց մտքերս պարզեցին: Ես լիշեցի իմ մենամարտը և գլխի ընկայ, որ վիրաւորուած պիտի լինիմ: Նոյն բոլէին դուռը ճրռճրռաց:

— Հն, ինչպէս է, շրջնջիւնով հարցրեց մի ձայն, որից ես սարսուեցի անբողջապէս:

— Ելի նոյն վիճակին է, նգոյն հանելով պատասխանեց Սավելիչը. ահա հինգերորդ գիշերատիւն է, որ շարունակ ուշաթափ դբութեան մէջ է:

Ես ուզում էի շուռ գալ, բայց չկարողացայ: «Ո՞րտեղ եմ ես, ո՞վ կայ այստեղ» ճիգ անելով ասացի ես: Մարիա Իվանովնան մօտեցաւ դարգիճիս և կռացաւ դէպի ինձ: «Է՛, քնչպէս էք զգում Ձեզ,» ասաց նա: — «Փնռք Աստծոյ, թող ձայնով պատասխանեցի ես. այդ Դո՛ւք էք, Մարիա Իվանովնա: Ասացէք խնդրեմ ...» Ես ոչոք չունէի այլ ևս շարունակելու ու լռեցի: Սավելիչը ցնծութեան մի ճիչ հանեց. ուրախութիւնը փայլեց նրա դէմքի վրայ: «Ուշքի՛ եկաւ, ուշքի՛ եկաւ, կրկնում էր նա. փառք քեզ, Ամենակարո՞ղ Տէր: Է՛, տէր իմ, Պետր Անդրեյիչ, լաւ վախեցրիր ինձ: Հեջտ է ասելը, հինգերորդ գիշերատիւն է...» Մարիա Իվանովնան կտրեց նրա խօսքը: «Շատ մի խօսիր նրա հետ, Սավելիչ, նա դեռ թող է:» Նա դուրս ելաւ և յուշիկ ծածկեց դուռը: Իմ մտքերս այէկոծւում էին: Այդպէս ուրեմն, ես բերդապետի տանն էի. Մարիա Իվանովնան գալիս էր ինձ մօտ: Ես ուզում էի մի քանի հարցեր տալ Սավելիչին, բայց ծերուկը գլուխը թօթուեց ու ահանջները փակեց: Զայրացած ես փակեցի աչքերս ու շուտով խօր քնեցի:

Երբ գարթնեցի, ինձ մօտ կանչեցի Սավելիչին, բայց նրա փոխարէն իմ առաջ տեսայ Մարիա Իվանովնային: Նրա հրեշտակային ձայնը ողջունում էր ինձ: Ձեմ կարող նկարագրել այն քաղցրունակ զգացմունքը, որ տիրապետեց ինձ նոյն րօպէին: Ես բռնեցի նրա ձեռքը, կայրի շրթունքներին, նրան գորովալից արցունքներով ողողելով: Մաշան չէր հեռացնում ձեռքը... և յանկարծ նրա շըրթունքները կպան իմ այտին և ես զգացի նոցա ջերմ ու թարմ համբույրը: Կարծես հուր վազեց երակներովս: «Սիրասուն, բարի Մարեա Իվանովնա, ընդունիր իմ ձեռքս,

համաձայնիր ինձ բաղդաւոր անելու:» Նա սթափուեց: «Ի սէր Աստծոյ, հանգստացէք, ասաց նա, ձեռքը ինձնից հեռացնելով վտանգը դեռ չէ անցել, վերքը կարող է բացուել. պահպանեցէք Ձեզ գոնէ ինձ համար:» Այս ասելով, նա հեռացաւ, թողնելով ինձ խանդաղական բերկրութեան մէջ: Բաղդը վերակենդանացրեց ինձ: Նա Խմս կլինի, նա սիրում է ինձ: Այս միտքը ցնծութեամբ լցնում էր իմ ամբողջ եութիւնը:

Այն օրից սկսած իմ առողջութիւնս ժամ առ ժամ լաւանում էր: Ինձ բժշկում էր զօբագնդի վարսավիրը, որովհետեւ բերդում ուրիշ բժիշկ չկար, և փնռք Աստծոյ, որ խելքին զօք չէր անում: Բնութիւնն ու երիտասարդական հասակս փութացրին իմ առողջութեան վերականգնումը: Բերդապետի ողջ ընտանիքը հոգում էր իմ մասին: Մարիա Իվանովնան ինձնից չէր հեռանում: Իհարկէ, հէնց առաջին պատեհ րօպէին ես նորից սկսեցի ընդմիջուած խօսակցութիւնը և այս անգամ Մարիա Իվանովնան առօրեանից աւելի համբերութեամբ ահանջ դրեց ինձ: Առանց որևէ սեթեւեթանքի նա խոստովանեց, որ սրտով կապուած է ինձ հետ, և ասաց, որ ծնողները իհարկէ ուրախ կլինին իւր բաղդաւորութեան: «Բայց լաւ մտածիր, աւելացրեց նա. արգելք չի լինիլ արդեօք քո ծնողների կողմից:»

Միտքն ինձ առաւ: Մօրս դէպի ինձ ունեցած քնքոյշ սիրով վրայ չէի կասկածում, բայց հօրս բարքն ու մտածողութեան կերպը լաւ գիտնալով, ես զգում էի, որ իմ սէրս շատ էլ չի շարժիլ նրա սիրտը, և որ նա իմ սիրուս վրայ պիտի նայէ, որպէս երիտասարդական մի քմահաճութեան վրայ: Ես պարզօրէն յայտնեցի իմ մտքերս Մարիա Իվանովնային և սակայն վճռեցի հնարաւոր եղածի չափ մի պերճախօս նամակ գրել հօրս, և խնդրել նրա ծնողական օրհնութիւնը: Ես նամակը ցոյց տուի Մարիա Իվանովնային, որը այնքան համողիչ ու սրտաշարժ գտաւ

նրան, որ էլ չէր կասկածում յաջողութեան մասին և այն օրից, երիտասարդութեան ողջ աներկբայութեամբ ու սիրով, անձնատուր եղաւ իւր սրտի քնքոյշ զգացմունքներին:

Եվաբրինի հետ ես հաշտուեցի իմ առողջանալու հէնց առաջին օրերը: Իվան Կուզմիչը մենամարտի համար յանգիմանելով ինձ՝ ասաց. «Ե՛խ, Պետր Անդրեյիչ, պէտք էր քեզ բանդաբեւոյնութեան ենթարկել, բայց դու առանց այն էլ պատժուած ես: Իսկ Ալեքսէյ Իվանիչը դեռ նստում է հացի շտեմարանում պահանջի հսկողութեան տակ, և նրա սուրբ փականքի տակ պահում է Վասիլիսա Եգորովնան: Թող խելքը գլուխը ժողովէ ու զղջայ:»

Ես այնքան երջանիկ էի, որ սրտիս մէջ թշնամական զգացմունք պահել չէի կարող: Ես սկսեցի Եվաբրինի ազատութիւնը հայցել և բարի բերեալեամբ, իւր լծակցի համաձայնութեամբ, որոշեց ազատել նրան: Եվաբրինը եկաւ ինձ մօտ: Նա խորին ցաւակցութիւն յայտնեց մեր մէջ պատահածի վերաբերութեամբ, խոստովանեց, որ մեզուորը ինքն էր գլխավին և խնդրեց ինձնից մոռանալ անցեալը: Ի բնէ անյիշաչար լինելով, ես անկեղծօրէն ներեցի նրան և մեր վէճը և իմ՝ նրանից վէրք ստանալս: Նրա զրպարտութիւնները ես բացատրեցի որպէս հեռանք վերաւորում ինքնասիրութեան ու ժխտում սիրոյ զայլութի և վեհանձնօրէն ներեցի իմ ապաբաղդ ախոյեանին:

Շուտով ես բոլորովին առողջացայ և կարողացայ տեղափոխուիլ իմ բնակարանս: Անհամբերութեամբ սպասում էի ուղարկածս նամակի պատասխանին, յաջողութեան վրայ յուսալ չհամարձակուելով և տխրագին նախազգացումներս ճշդել ջանալով: Վասիլիսա Եգորովնային ու նրա ամուսնուն ես դեռ ոչինչ չէի ասել, բայց իմ առաջարկութիւնը նոյն ես դեռ ոչինչ չէի կարող: Ոչ ես, ոչ Մարիա Իվանովնան մեր զգացմունքները նոցանից թագցնել չէինք աշխատում. մենք նախապէս հաւատացած էինք,

որ նոքա կհամաձայնին:

Վերջապէս մի առաւօտ ներս մտաւ Սափելիչը, ձեռքին մի նամակ բռնած: Ես ցնցուելով առայ նամակը: Հասցէն գրուած էր հօրս ձեռքով: Այս հանգամանքը նախապատրաստում էր ինձ մի ինչ որ կարևորագոյն բանի, պատճառ՝ նամակներ գրում էր ինձ սովորաբար մայրս, իսկ հայրս վերջը աւելացնում էր մի քանի տող: Երկար ժամանակ ես չէի բաց անում ծրարը և կրկին ու կրկին կարդում էի ծանրամեծար մակագրութիւնը. «Ոչգուցն իմոյ, Պետր Անդրեյիչ Գրինեվին, Երեսնուբոցի նահանգում, Բելոգորսկի բերդի մէջ:» Զեռքին նայելով ես աշխատում էի դուշակել նրա հոգու տրամագրութիւնը այն ժամանակ, երբ գրելիս է եղել նամակը: Վերջապէս ես վճռեցի բաց անել ծրարը և հէնց առաջին տողերը կարդալով տեսայ, որ ամեն ինչ կորած է մեզ համար: Նամակի բովանդակութիւնը հետևեալն էր.

«Իմ որդի Պետր: Քո նամակը, որով խնդրում ես մեր ծնողական օրհնութիւնն ու համաձայնութիւնն Մարիա Իվանովնայի, Միրօնովի աղջկայ հետ ամուսնանալու դատին, սոյն ամսոյս 15-ին ստացանք, և ոչ միայն իմ օրհնութիւնն ու համաձայնութիւնն տալու դիտարարութիւն չունիմ, այլ և պատրաստում եմ դալ այդտեղ, քեզ մօտ, և քո ստամբակութիւններից համար, ինչպէս հարկն է, խելքի բերել քեզ, որպէս մի լիմար երեխայի, առ ոչինչ համարելով սպալի աստիճանդ, վասն զի դու արայուցեցիր, որ դեռ անբժան ես սուր կրելու, որը քեզ շնորհուած է հայրենիքի պաշտպանութեան, այլ ոչ թէ քեզ նման ուրիշ լպտածների հետ մենամարտելու համար: Անյապաղ գրութեամբ պիտի խնդրեմ Անդրեյ Կարլովիչին Բելոգորսկի բերդից քեզ մի այլ, հեռավոր տեղ փոխել, ուր ցնորքը գլխիցդ դուրս գայ: Մայրդ մենամաշտիգ ու վերաւորուելու դատին տեղեկանալով, վշտից հեռանալու

և այժմ պառկած է: Ի՞նչ կլինի քո վերջը: Աղօթում եմ առ Աստուած, որ դու ուղղուես, թէև չեմ համարձակում յուսալ նրա անչափ ողորմութեան վրայ:»

«Բա հայր Ա. Գ.»

Սույն նամակի ընթերցումը իմ մէջ զանազան զգացումներ զարթեցրեց: Խոստից դարձուածները, որ հայրս այնպէս առատօրէն շուայել էր, խոր կերպով վիրաւորեցին ինձ: Այն արհամարական ձևը, որով նա լիշում էր Մարիա Իվանովնային, ինձ երևեց նույնքան անվայել, որքան և անարդար: Բելագորսկի բերդից տեղափոխուելու միտքը սարսափեցնում էր ինձ, բայց ամենից աւելի ինձ վշտացնում էր մօրս հիւանդանալու լուրը: Ես մտքիս մէջ զայրանում էի Սավելիչի վրայ՝ ամենևին չ'երկբայելով, որ իմ մենամարտը ծնողներիս ականջն է հասել նրա միջոցով: Նեղիկ սենեակիս մէջ լեռ ու յառաջ քայլելով, ես կանգ առայ նրա հանդէպ ու խոժոռագէմ երեսին նայելով ասացի.

— Երևի դեռ չես բաւականացել, որ քո շնորհով վիրաւորուեցի և մի ամբողջ ամիս կանգնած էի գերեզմանիս դռանը. դու մօրս էլ ուզում ես սպանել:

Սավելիչը կայծակնահարի նման սարսափեց:

— Ի սէր Աստծոյ, պարոն, համարեա արտասուտիսուն ձայնով ասաց նա. այդ թնչ էք բարեհաճում ասել: Ե՞ս քո վիրաւորուելուդ պատճառն եմ եղել: Աստուած գիտէ, որ ես գալիս էի Ալեքսէյ Իվանիչի սրից քեզ իմ կրծքով պաշտպանելու: Անիծեալ ծերութիւնը արդեւք եղաւ: Իսկ քո մօրն ի՞նչ եմ արել ես:

— Ինչ ես արել, պատասխանեցի ես. ո՞վ քեզ խնդրեց ինձ վրայ մատնութիւններ գրել: Մի՞թէ լրատես ես կարդուած ինձ մօտ:

— Ես քեզ վրայ մատնութիւններ եմ գրել, արտասուտիսուն պատասխանեց Սավելիչը. ո՞վ Տէր Աստուած: Գէհ,

որ այդպէս է, համեցէք կարդա, թէ ինչ է գրուի ինձ Պարոնը. կտեսնես ինչպէս եմ մատնել քեզ:

Նա գրպանից հանեց մի նամակ և կարգաց հետեւեալը.

«Ամօթ է քեզ, հին գամբու, որ դու, ուշք չդարձնելով իմ խիտ հրամանների վրայ, տեղեկութիւն չտուիր ինձ իմ որդի Պետր Անդրեյիչի մասին, ուստի և կողմնակի մարդիկ ստիպուած են յայտնել ինձ նրա ստամբակութիւնները: Այդպէս ես կատարում դու քո պարտաւորութիւնը և տիրական կամքը: Ես քեզ, հին գամբուիդ, ճշմարտութիւնը պահելուդ ու դէպի երիտասարդն ունեցածդ հաճոյակատար վարմունքներիդ համար, խոզեր արածացնելու կ'ուղարկեմ: Սույն գիրս ստանալուդ պէս հրամայում եմ անյապաղ գրել ինձ, թէ ինչպէս է այժմ նրա առողջութիւնը, որի մասին դրում են ինձ, թէ վերականգնել է, և իսկապէս որտեղն էր նա վերք ստացել, և արդեօք լաւ առողջացրին վերքը:»

Ակնյայտնի էր, որ Սավելիչը անմեղ էր և ես իմ կասկածով ու արածս յանդիմանութեամբ իզուր վիրաւորեցի նրան: Ես նրանից ներողութիւն խնդրեցի, բայց ձերուկը իմ խօսքերից չէր մխիթարում:

— Ահա ի՞նչ օրեր տեսնելու արժանացայ, կրկնում էր նա. ահա ի՞նչ վարձատրութիւն եմ ստանում իմ տէրերից՝ երկարամեայ ծառայութիւններիս փոխարէն: Ես թէ հին գամբու եմ, թէ խոզարած, և թէ նաև ես եմ պատճառը քո վիրաւորուելուդ, Ո՛չ, տէր իմ, Պետր Անդրեյիչ, ճառը քո վիրաւորուելուդ, նա էր, որ ո՞չ ես, այլ անիծեալ մուսիսն է մեղաւորը. նա էր, որ քեզ երկաթէ շամփուրներով ծակծկուելու ու ոտքերով դեռ տինը դոփել սովորեցրեց. կարծես ծակոտելով ու դոփելով ազատուել կարելի է չար մարդուց: Ինչերթո էր պէտք մուսիս վարձել ու աւելորդ փողեր ծախսել:

Բայց ո՞վ էր այն մարդը, որ լանձն էր առել իմ վար-

մունքների մասին հօրս տեղեկութիւն տալու դժուարութիւնը: Միթէ գեներալը: Բայց նա, բոտ երևոյթին, շատ էլ չէր հոգում իմ մասին: Իսկ Իվան Կուզմիչը հարկաւոր չհամարեց ծանուցազրել նրան իմ մենամարտը: Ենթագրութիւններ էր, որ անում էի: Վերջապէս իմ կասկածներն եկան կանգ առան Շվաբրինի վրայ: Միայն նա շահ ունէր մատնութիւններ գրելու իմ մասին, որի հետեւանքը կարող էր լինել իմ հեռանալը բերդից և բերդապետի ընտանիքից անջատուիլը: Ես գնացի ամեն բան Մարիա Իվանովնային յայտնելու: Նա ինձ հանդիպեց պատշգամբի վրայ: «Ինչ է եղել Ձեզ, ասաց նա՝ ինձ տեսնելով. ինչպէս գուցե ստուա՞ծ էք:» — «Ամեն ինչ վերջացած է,» պատասխանեցի ես և տուի նրան հօրս նամակը: Նա նոյնպէս գոչնը թօցրեց: Կարգալուց յետոյ նա երերուն ձեռքով յետ տուեց ինձ նամակը ու դողդոջուն ձայնով ասաց.

— Երևի այդպէս է իմ ճակատագիրս ... քո ծնողներդ չեն ուզում ընդունել ինձ իւրեանց ընտանիքի մէջ: Թող ամեն բանում Աստուծոյ կամքը լինի: Աստուած մեզնից լաւ գիտէ, թէ ինչ է հարկաւոր մեզ: Էլ ինչ արած, Պետր Անդրեյիչ, գոնէ Գուք երջանիկ եղէք...»

— Ո՛չ երբէք, գոչեցի ես, բռնելով նրա ձեռքը. դու սիրո՞ւմ ես ինձ, ես ամեն բանի պատրաստ եմ: Գնանք ընկնենք քո ծնազների ոտքերը. նոքա պարզ մարդիկ են և ոչ խստասիրտ գոռոզամիտներ... Նոքա կ'օրհնեն մեզ, մենք կ'պսակուինք... Իսկ այնուհետև ժամանակին, ես հաւատացած եմ, պաղատանքով կշարժենք իմ հօր գուժը: Մայրս մեր կողմից կլինի և հայրս կներէ ինձ:

— Ոչ, Պետր Անդրեյիչ, պատասխանեց Մաշան. առանց քո ծնողների օրհնութեան ես քեզ ամուսին չեմ լինիլ: Առանց նոցա օրհնութեան դու բաղդաւոր լինել չես կարող: Հնազանդուինք Աստուծոյ կամքին: Եթէ նոր հաւանաբու գտնես, եթէ ուրիշին սիրես, գուն ու քո Աստուածդ,

իսկ ես ձեր երկուսիդ համար էլ...:

Նա լացեց ու հեռացաւ ինձնից: Ես ուզում էի նրա ետեւից սենեակը մտնել, բայց զգում էի, որ ինքս ինձ տիրապետել չպիտի կարողանայի, ուստի և տուն դարձայ:

Ես նստել էի մտահոգութիւնների մէջ խորատուզուած, երբ Սավելիչը յանկարծ ընդհատեց իմ խորհրդածութիւնները: «Ահա, պարոն, ասաց նա, գրոտած թղթի մի թերթ տալով. նայիր տես, մատնիչ եմ ես իմ տիրոջ և կամ աշխատում եմ հայր ու որդի իրար ձգել:»

Եւ առայ նրա ձեռքից թուղթը: Այդ իւր ստացած նամակի պատասխանն էր: Ահա այդ պատասխանը բո՛ւ առ բո՛ւ:

«Մեծարգոյ և ողորմած Տէր մեր, Անդրեյ Պետրովիչ:»

«Ստացայ Ձեր ողորմած գրութիւնը, որի մէջ շնորհ ես անում բարկանալ ինձ, քո ճորտի վրայ, ի մասին թէ ամօթ է ինձ տիրական հրամաններ չկատարելս: Եւ ես հին դամբա չեմ, այլ ձեր հաւատարիմ ծառան, տիրական հրամաններին հնազանդուում եմ և միշտ սրտանց Ձեզ ծառայել եմ և հասել եմ այս ծերութեան հասակիս: Նաև Պետր Անդրեյիչի վերջի մասին չգրեցի, իզուր տեղը ձեզ չվսիւեցնելու մտքով, և լսում ենք, մեր տիրուհին, առանց այն էլ, վտից հիւանդացել է և նրա առողջութեան համար պիտի ազօթք անեմ առ Աստուած: Իսկ Պետր Անդրեյիչը վերք էր ստացել աջ ուսի տակ, մի վերշոկ ու կէս խորութեամբ և պառկում էր բերդապետի տանը, ուր բերինք նրան գետեզրից և բժշկում էր նրան տեղիս վարսովի Ստեփան Պարամոնովը և այժմ Պետր Անդրեյիչը, փառք Աստուծոյ, ողջ առողջ է և նրա լուութեան մասին միայն կարելի է գրել և այլ ոչինչ: Ասում են, որ հրամանատարները գոհ են նրանից, իսկ Վասիլիսա Եգորովնան հարազատ աղի պէս սիրում է նրան: Իսկ թէ նրան այնպիսի մի փորձանք պատահեց, այդ էլ երիտասարդին

երեսճեճանք անել չէ կարելի. ձին չորս ոտք ունի, բայց էլի սոյթաքում է: Նաև բարեհաճում էք գրել, որ ինձ խողեր արածացնելու կ'ուղարկէք և այդ էլ Ձեր իշխանական կամքը գիտէ: Վերջացնելով գրութիւնս, ամենախոնարհորար բարեւում եմ Ձեզ:

«Ձեր հաւատարիմ ճորտ»

Արխիպ Սավելեւ:

Բարի ծերունու թուղթը կարգալիս ես չկարողացայ մի քանի անգամ չժպտալ: Հորս պատասխան գրել ես անկարող էի, իսկ մօրս հանգստացնելու համար Սավելիչի նամակը ինձ բաւական թուեց:

Այդ ժամանակից իմ դրութիւնս փոխուեց: Մարիա Իվանովնան ինձ հետ համարեա չէր խօսում և ամեն կերպ աշխատում էր խօյս տալ ինձնից: Բերդապետի տունը կորցրեց ինձ համար իւր գրաւչութիւնը: Սակաւ առ սակաւ ես ընտելացայ տան միայնակ նստողական կեանքին: Այս բանի համար սկիզբը Վասիլիսա Եգօրովնան յանգիմանում էր ինձ, բայց տեսնելով իմ յամառութիւնը, էլ հանգիստ թողեց ինձ: Իվան Աուզմիչի հետ տեսնում էի միմիայն այն ժամանակ, երբ այդ պահանջում էր ծառայութիւնը: Եվարրիին հանդիպում էի ակամայ և հազիւ երբեմն, մասաւանդ այն պատճառով, որ նրա մէջ նկատում էի ծածուկ թշնամութիւն զէպի ինձ, և այս բանը առաւել ևս հաստատում էր ինձ իմ կատկածանքների մէջ:

Անտանելի գործաւ ինձ իմ կեանքը: Ես անձնատուր եղայ տխրայույզ մասճութիւնների, որոնք աւելի բորբոքում էին անգարճութիւնից ու միայնութիւնից: Իմ սէրս միայնութեան մէջ առաւել ևս հրահրւում էր և քանի գնում, այնքան առաւել ծանրաբերձ էր գառնում ինձ համար: Ես կորցրի զէպի ընթերցումն ու գպրութիւնն ունեցածս սէրը և թուլացայ հոգեպէս: Ես վախե-

նում էի կամ խելագարուիլ, կամ անաշակութեան անձնատուր լինել: Իմ ամբողջ կեանքի վրայ մեծ ազդեցութիւն ունեցող անսպասելի պատահարներ յանկարծ ուժգին ու բարեբար կերպով ցնցեցին հոգիս:

IV

П У Г А Ч Е В Ш И Н А

Իւր, նորատի աղէքը, լսեցէք, ինչ որ մենք, ծերուկներս, պետի պատմենք: Երէ:

Նախ քան իմ աչքի առաջ կատարուած տարօրինակ պատահարները նկարագրելու, ես պարտաւորուած եմ մի քանի խօսք ասել այն մասին, թէ ինչ դրութեան էր Օրենբուրգի նահանգը 1773 թւականի վերջերին:

Սոյն ընդարձակ ու հարուստ նահանգը բնակաւորուած էր բազմաթիւ կիսավայրենի ցեղերով, որոնք դեռ նոր էին ընդունել ռուսական թագաւորների գերիշխանութիւնը: Նոցա անընդհատ ապստամբութիւնները, օրէնքների ու քաղաքական կեանքի անընտել բարքը, թեթեամտութիւնն ու խտաբարոյութիւնը՝ կառավարութեանը ստիպում էին անխոնջ հսկողութիւն ունենալ նոցա հնազանգութեան մէջ պահելու համար: Բերդերը շինուած

էին յարմարաւոր համարուած տեղերում և նոցա շուրջը բնակեցրած էին ետիցկի ափերի հինաւուրց բնիկ կողակներին: Բայց կողակները, փոխանակ սոյն երկրի հանգստութեան ու ապահովութեան գլուխ քաշելու, քանի մի ժամանակից ի վեր իրանք դարձել էին կառավարութեան անհանգիստ ու վտանգաւոր հպատակներ: 1772 թւին նոցա գլխաւոր քաղաքում խռովութիւն տեղի ունեցաւ, գեներալ մայեօր Տրաուբենբերգի՝ զօրքին օրինական հնազանգութեան բերելու համար գործ դրած խիստ միջոցների պատճառով: Խռովութեան հետևանքն եղաւ Տրաուբենբերգի բարբարոսական սպասումը, կառավարչական ձևի ինքնակամ փոփոխումը և վերջապէս մանրագնդերով ու խստագոյն պատիժներով ապստամբութեան ճնշումը:

Այս ամենը կատարուել էր իմ՝ Բելոգորսկիյ բերդը գալուց մի քանի ժամանակ յառաջ: Բերդի շուրջը ամեն տեղ խաղաղութիւն էր տիրում, կամ գոնէ թուում էր, թէ տիրում է: Իշխանութիւնը շատ հեշտութեամբ հաւատաց նենգամիտ խռովարարների աւերելոյթ գղջմանը: Նոքա գաղտնի չորամտութիւններ նիւթելով, անկարգութիւնները վերսկսելու համար յարմար ըռպէի էին սպասում:

Դառնում եմ իմ պատմութեանը:

Մի անգամ երեկոյեան (1773 թւի հոկտեմբերի սկզբներին էր) ես միայնակ տանը նստած, տկանջ էի դնում աշնանային քամու զվուռցին և լուսամուտից դիտում էի լուսնակի մօտով թուշող ամպերը, երբ եկան ու բերդապետի կողմից ինձ կանչեցին: Ես իսկույն գնացի: Բերդապետի մօտ կային Շվաբրինը, Իվան Իգնատիչը և կողակների ուրեաղնիկը: Սենեակում ոչ Վասիլիսա Եգօրովնան կար և ոչ Մարիա Իվանովնան: Բերդապետը ինձ բարևեց մտահոգ դէմքով: Նա փակեց դռները, ամենքին էլ նստեցրեց—բացի ուրեաղնիկից, որ կանգնած մնաց դռան մօտ—գրպանից մի թուղթ հանեց ու ասաց. «Պարոնայք սպաներ, մի կարևոր

նորութիւն. լսեցէք, ինչ է գրում գեներալը:» Նա ակնոցները աչքերին դրեց և կարդաց հետևեալը.

«Բելոգորսկիյ բերդի հրամանատար կապիտան Միրօնովին:

Բաղտնի:

«Սրանով տեղեկացնում եմ Ձեզ, որ պահնորդների հսկողութիւնից փախած Դոնի կողակ՝ աղանդաւոր Էմելեան Պուգաչեվը, աններելի յանդգնութեամբ իւր վրայ առնելով հանգուցեալ կայսր Պետր III-ի անունը, հաւաքել է ոճրագործների մի հրոսակ, խռովութիւն է բարձրացրել ետիցկի գիւղերում և արգէն տիրել ու քանդել է մի քանի բերդեր, ամեն տեղ աւարառութիւն ու սպանութիւններ գործելով: Սոյն պատճառով, այս թուղթը ստանալու պէս, Դուք, պարոն կապիտան, պէտք է անյապաղ կարևոր միջոցներ ձեռք առնէք լիշեալ չարագործին ու ինքնակոչին դէմ դնելու և, եթէ կարելի եղաւ, նաև բոլորովին ոչնչացնելու համար, եթէ նա դիմէ Ձեր խնամատարութեան յանձնուած բերդի վերայ:»

— Կարևոր միջոցներ ձեռք առնել, ասաց բերդապետը, ակնոցները վար առնելով ու թուղթը ծալելով ինձ լսիր, ասելն է հեշտ: Չարագործը, ինչպէս երևում է, գորեղ է, իսկ մենք ունինք ոչ աւելի, քան 130 մարդ, չը հաշուելով կողակներին, որոնց վրայ յոյս դնել չէ կարելի. երեսիդ ասել չլինի, Մաքսիմիչ (ուրեաղնիկը ժպտաց): Բայց ինչ և լինի, պարոն սպաներ, կանոնապահ եղէք, պահնորդներ սև գիշերային խուզակներ նշանակեցէք, յարձակում գործելու դէպքում դռները փակեցէք ու զինուորներին դուրս բերէք: Դու, Մաքսիմիչ, լաւ նայիր. քո կողակների վրայ: Թնդանօթը տեսէք ու մի լաւ մաքրել տուէք: Նա մանաւանդ այս ամենը գաղտնի պահեցէք, որ անժամանակ նրա մասին բերդում ոչ ոք ոչինչ չիմանայ:

Սոյն հրամանները տալուց յետոյ Իվան Կուզմիչը ար-

ձակեց մեզ: Մենք դուրս եկանք Շվաբրինի հետ, լսածներին մասին խորհրդակցելով:

— Ի՞նչ ես կարծում, ինչով կվերջանայ այս բանը, հարցրի ես նրան:

— Ատուած գիտէ, պատասխանեց նա. տեսնենք, առ այժմ նշանաւոր մի բան չկայ, իսկ եթէ ...

Այս տեղ նա մտածութեան մէջ ընկաւ ու ցրուած դրութեամբ սկսեց Ֆրանսիական մի արիտ շոքացնել:

Չնայելով մեր բոլոր նախազգուշութիւններին, Պուզաչեվի երեւոյլու լուրը տարածուեց բերդի միջ: Իվան Կուզմիչի թէև շատ յարգում էր իւր ամուսնուն, բայց ոչ մի կերպ չէր յայտնիլ նրան ծառայական մասով իրան հազարդուած գաղտնիքը: Գեներալից նամակն ստանալուց յետոյ, նա բաւական ճարտարութեամբ անից հեռացրել էր Վասիլիսա Եգորովնային, ասելով նրան, որպէս թէ հայր Գեներալը Օրենբուրգից ստացել է ինչ որ զարմանալի լուրեր, որոնց խիստ գաղտնի է պահուած: Վասիլիսա Եգորովնան իսկոյն ցանկութիւն յայտնեց հիւր գնալ իրիցկնոջ մօտ և իվան Կուզմիչի խորհրդով իւր հետ տարաւ նաև Մաշային, որ տանը միայնակ չտաղտկանայ:

Իվան Կուզմիչը տան մէջ անձնիշխան տէր մնալով, իսկոյն ուղարկում է մեր ետեւից, իսկ Պալաշկային փակում է նկուղի մէջ, որպէս զի նա չկարողանայ մեր խօսակցութեանը գաղտնի ականջ դնել:

Վասիլիսա Եգորովնան տուն է դառնում՝ իրիցկնոջից ոչինչ բան իմանալ չկարողանալով և տեղեկանում է, որ իւր բացակայութեան ժամանակ իվան Կուզմիչի մօտ խորիւր բացակայութեան ժամանակ իվան Կուզմիչի մօտ խորհուրդ է հաւաքուած եղել, իսկ Պալաշկան փականքի տակ է եղել: Նա իսկոյն հասկանում է, որ խաբուել է իւր ամուսնուց և սկսում է հարց ու փորձի ենթարկել նրան: Բայց իվան Կուզմիչը նախապատրաստուած էր այդ յարձակման: Նա առանց շփոթուելու, արիաբար պատասխանում

է իւր հետաքրքիր կենակցին: «Ի՞նչ լսիր, այ կնիկ, մեր պառաւներին խելքին փչել էր վառարանները յարգով վառել և որովհետև դրանից զժբաղդութիւն կարող էր յառաջ գալ, ես խիստ հրաման արձակեցի, չհամարձակուիլ այսուհետև վառարանները յարգով վառել, այլ միայն ցախով ու խուլով:»

— Որ այդպէս է, էլ ինչի՞ց էր հարկաւոր փակել Պալաշկային, հարցնում է բերդապետուհին. Թե՛ս պատճառով խեղճ ազդիկը, մինչև մեր վերագործը, բանտարկուած մնացել է նկուղի մէջ:»

Իվան Կուզմիչը այսպիսի մի հարցի պատասխանելու նախապատրաստուած չէր: Նա կորցնում է ինքն իրան և ինչ որ բոլորովին անոճ մի բան է մըրթմըրթում: Վասիլիսա Եգորովնան տեսնում է իւր ամուսնու նենգաւորութիւնը, բայց լաւ գիտնալով, որ ձեռքը ոչինչ չի ընկնիլ, դադարեցնում է իւր հարց ու փորձը և խօսք է բաց անում ազը դրած վարուստների մասին, որոնց Ակուլինա Պանֆիլովնան բոլորովին մի այլ ձևով էր պատրաստում: Ողջ գիշերը Վասիլիսա Եգորովնան չէր կարողանում քնել: Նա չէր կարողանում հասկանալ, թէ այդ Թե՛ս մի գաղտնիք կար իւր ամուսնու սրտում, որը իրան իմանալ չէր կարելի:

Միևս օրը, պատարագից յետ գալիս, նա տեսնում է, որ իվան Իգնատիչը թնդանօթի բերնից դուրս է տալիս շորի կտորներ, քարեր, տաշեղներ, ճաներ և այլ պէս պէս անպէտք իրեր, որ երեսանները կոխել էին նրա մէջ: «Ի՞նչ կնշանակեն այս պատերազմական պատրաստութիւնները, մտածում էր բերդապետուհին. չլինէ՛ կիրգիզների յարձակման են սպասում: Բայց միթէ այդպիսի մի չնչին բան իվան Կուզմիչը կթագցնէր ինձնից:» Նա ձայն է տալիս իվան Իգնատիչին, հաստատապէս որոշելով դուրս քաշել նրանից այն գաղտնիքը, որ այնպէս տանջում էր նրա տիկնային հետաքրքրութիւնը:

Վասիլիսա Եգորովնան տնտեսութեան վերաբերեալ մի քանի նկատողութիւններ է անում նրան, նման մի դատաւորի, որ քննութիւնը սկսում է կողմնակի հարցմունքներով, որ պէսզի նախ և յառաջ թուլացնէ պատասխանատուի զգուշութիւնը: Ապա քիչ լռութիւն պահելուց յետոյ, նա ծանր ախ է քաշում և գլուխը շարժելով ասում է. «Տէր երկնաւոր Աստուած, ի՞նչ չլսուած նորութիւններ:»

— Է՛հ, սանամայր, պատասխանում է Իվան Իգնատիչը. Աստուած ողորմած է. զինուոր տես, կայ բաւականին, վառօդ շատ ունինք, թնդանօթն էլ մաքրեցի: Գուցէ թէ կարողանանք Պուգաչեվին զիմադրել: Աստծոյ պահած ոչ խարը գայլը չի տանիլ:

— Ո՞վ է, թէ՛նչ մարդ է այդ Պուգաչեվ ասածդ, հարցնում է բերդապետուհին:

Իվան Իգնատիչը նոր նկատում է, որ բերնից խօսք է թռուցել, ու լեզուն կծում է, բայց արդէն ուշ էր: Վասիլիսա Եգորովնան ստիպում է նրան ամեն բան խօստովանել, խօսք տալով ոչ ոքի չասել այդ մասին:

Վասիլիսա Եգորովնան պահեց իւր խօսքը և ոչ ոքի ոչինչ չասաց, բացի իցիցկնօջից, և այն էլ այն պատճառով, որ նրա կովը դեռ շարունակում էր դաշտ գնալ, ուստի և կարող էր չարագործների ձեռքն ընկնել:

Շուտով ամեն տեղ սկսեցին խօսել Պուգաչեվի մասին: Պտրտուող լուրերը շատ տարբեր տարբեր էին: Բերդապետը ուրեաղնիկին զրկեց՝ հարեան գիւղերում ու բերդերում հիմնաւոր տեղեկութիւններ հաւաքելու: Ուրեաղնիկը վերադարձաւ երկու օրից յետոյ ու յայտնեց, որ հարթավայրում, բերդից մօտ վաթսուն վերստ հեռաւորութեամբ, տեսել է բազմաթիւ կրակներ և բաշկիրներից լսել է, որ մօտենում է մի ինչ որ անծանօթ զօրութիւն: Սակայն նա դրական ոչինչ չէր կարող ասել, որովհետեւ աւելի հեռու գնալ վախեցել էր:

Բերդում, կողակների մէջ, նկատուում էր մի անսովոր իրարանցում: Նոքա խումբ—խումբ հաւաքոււմ էին ամեն մի փողոցի վրայ, լռիկ խօսակցում էին միմեանց հետ և ցրոււմ էին, երբ դրագուն կամ բերդապահ զինուոր էին տեսնում: Նոցա մէջ լրտեսներ ուղարկուեցան: Քրիստոնէութիւն ընդունած ու մկրտուած մի կալմիկ, Իւլայ անունով, բերդապետին հազորդեց մի կարևոր տեղեկութիւն: Նրա խօսքերով՝ ուրեաղնիկի ցուցումները բոլորն էլ սուտ էին: Նենգաւոր կողակը վերադառնալով յայտնել էր իւր ընկերներին, որ ինքը եղել է խռովարարների մօտ, ներկայացել է նոցա առաջնորդին, որը թօյլ է տուել նրան համբուրելու իւր ձեռքը և խօսակցել է նրա հետ: Բերդապետը անմիջապէս ձերբակալել տուեց ուրեաղնիկին, և նրա տեղ նշանակեց Իւլային: Այս նորութիւնը կողակները ընդունեցին յայտնի անբաւականութեամբ: Նոքա բարձրաձայն արանջում էին և բերդապետի կարգադրութիւնները գործադրող Իվան Իգնատիչը իւր խիստ ականջներով լսել էր, թէ ինչպէս նոքա ասում էին. «Սպասիր, մենք քո ապուրդ կ'եփենք, բերդի՛ ղու մուկ:» Բերդապետը զիտաւորութիւն ունէր հէնց նոյն օրը հարցաքննել իւր կալանաւորին, բայց նա փախաւ պահնորդների ձեռքից, երևի իւր համախօհների օգնութեամբ:

Մի նոր դէպք սաստկացրեց բերդապետի անհանգստութիւնը: Բռնուեց վրդովեցուցիչ թղթեր տարածող մի բաշկիր: Սոյն դէպքի առիթով, բերդապետը մտածեց նորից ժողովել իւր սպաներին, ուստի և կրկին կամենում էր հեռացնել Վասիլիսա Եգորովնային արժանահաւատ մի պատճառաբանութեամբ, բայց ամենամիամիտ ու ճշմարտասէր մարդ լինելով՝ իւր մի անգամ արդէն գործ դրած միջոցից զատ մի ուրիշ միջոց չգտաւ:

— Ի՛նչ լսիր, Վասիլիսա Եգորովնա, ստահազ անելով ասաց նա կնոջը. հայր Գերասիմը քաղաքից, ասում են,

ստացել է. . .

— Հերիք է ստեր մոկոնես, Իվան Կուզմիչ, խօսքը կտրեց բերդապետուհին. դու երևի ուզում ես խորհուրդ կազմել ու առանց ինձ զրուցել Էմելեան Պուզաչեվի վրայ, բայց ներիր, էլ չես խաբիլ:

Իվան Կուզմիչը աչքերը լայն լայն բաց արեց:

— Ե՛, ա՛յ կնիկ, ասաց նա. եթէ գու արդէն ամեն ինչ գիտես, ինչ արած, մնա՛. մենք քո ներկայութեամբ էլ կարող ենք խօսել:

— Տեսնում ես, ա՛յ մարդ. քո ինչ գործն է խորամանկութիւն բանեցնել: Իէհ, մարդ ուղարկիր սպաների ետեւից:

Մենք կրկին հաւաքուեցինք: Իվան Կուզմիչը իւր կնոջ ներկայութեամբ կարգաց մեզ Պուզաչեվի հրովարտակը, որ գրուած պէտք է լինէր որ և է կիսագրագէտ կողակի ձեռքով: Աւագակը յայտնում էր՝ անմիջապէս մեր բերդի վրայ գալու դիտաւորութիւնը, կոզակներին ու զիւնուորներին հրաւիրում էր իւր հրոսակին միանալ, իսկ հրամանատարներին յորդորում էր դէմ չգնել, հակառակ դէպքում մահուան պատիժ սպառնալով: Հրովարտակը գրուած էր կոպիտ, բայց հուժկու դարձուածներով և հասարակ մարդկանց ուղեղի վրա կարող էր վտանգաւոր ազդեցութիւն ունենալ:

— Ա՛յ քեզ կապ կարած սրիկայ, բացականչեց բերդապետուհին: Իեռ համարձակում է առաջարկութիւններ առնել: Դուրս գալ նրան ընդ առանջ ու ոտքերի տակ դնել դրօշակ. . . Ախ դու, շան գաւակ: Միթէ նա չգիտէ, որ մենք քառասուն տարի է ծառայութեան մէջ ենք և, փնաք Աստծոյ, ամեն բան անցել է գլխներովս: Միթէ եղէ՛ր են այնպիսի հրամանատարներ, որոնք հնազանդուել են աւագակին:

— Պէտք է որ այդպիսիները չլինին, պատասխանեց Իվան Կուզմիչը. բայց ասում են, որ չարագործը արդէն

տիրել է շատ բերդերի:

— Երևի իսկապէս նա զօրեղ է, ասաց Շվարինը:

— Ա՛յ, հէնց հիմա կիմանանք նրա զօրութեան իսկական չափը, ասաց բերդապետը. Վասիլիսա Եգօրովնա, տուր ինձ շտեմարանի բանալին: Իվան Իգնատիչ, բեր այստեղ բաշկիրին, և Իւլային էլ հրամայիր ձաղկոց բերել:

— Սպասիր, Իվան Կուզմիչ, ասաց բերդապետուհին՝ տեղից վեր կենալով. քիչ ժամանակ տուր՝ Մաշային դուրս տանիմ տնից, թէ ոչ աղաչակը կլսէ ու կվախենայ: Ես ինքս էլ քննախուզութիւնների ականատես լինելու շատ սիրահարը չեմ: Մնաք բարով:

Հին ժամանակներում տանջանքի գործադրութիւնը այնպէս էր արմատացած դատաւարական սովորութիւնների մէջ, որ նրան ոչնչացնող բարեբեր հրամանը երկար ժամանակ մնում էր առանց գործադրութեան: Կարծում էին, որ մեղադրեալի սեփական խոստովանութիւնը անհրաժեշտ է նրա յանցաւորութիւնը բացարձակապէս ապացուցանելու համար—մի միտք, որ ոչ միայն անհիմն, այլ և ներհակական է իրաւական աւողջ իմաստի. պատճառ, եթէ մեղադրեալի հերքումը չէ ընդունւում որպէս ապացոյց նրա անմեղութեան, ապա ևս առաւել նրա խոստովանութիւնը չպէտք է համարուի որպէս ապացոյց նրա մեղապարտութեան: Մինչև այժմ էլ դեռ ինձ պատահում է գանգատներ լսել հին դատաւորներից՝ բարբարոսական սովորութեան վերացնելու առիթով: Իսկ մեր ժամանակները տանջանքների անհրաժեշտութեան մասին՝ ոչ ոք չէր կասկածում. ոչ դատաւորները և ոչ մեղադրեալները: Եւ այսպէս, Իվան Կուզմիչի հրամանը մեզնից ոչ ոքի ոչ զարմացրեց և ոչ անհանգստացրեց: Իվան Իգնատիչը գնաց բաշկիրի ետեւից, որը պահուում էր բերդապետուհու փականքի տակ, շտեմարանի մէջ: Մի քանի րոպէից յետոյ բանդարկեալին բերին նախատեսեալը: Բերդապետը հրամայեց բերել նրան

իւր առաջ:

Բաշկիրը դժուարութեամբ ոտքը շէմքից ներս փոխեց (նրա ոտքերը կոճղերի մէջ էին), հանեց բարձրագիր գլխարկը ու կանգնեց դռան մօտ: Ես նայեցի նրա վրայ ու սարսուեցի: Երբէք չեմ մոռանալ ես այն մարդուն: Տարիքով, ըստ երևոյթին, նա եօթանասունից աւել պիտի լինէր: Նա ոչ քիթ ունէր, ոչ ականջներ: Գլուխը սափրած էր, մօրուքի տեղ անկուած էին մի քանի սպիտակած մազեր: Նա փոքրահասակ էր, նիհար ու կուշ եկած, բայց նեղլիկ աչքերը դեռ պսպղում էին կրակի պէս: «Ե՛հ, ասաց բերգապետը, զարհուրելի նշաններից ճանաչելով, որ 1741 թվին պատժուած խռովարարներից մէկն է նա. դու, ծերունի գալլ, ինչպէս երևում է, էլի ես ընկած եղել մեր թակարդը: Անկասկած, առաջին անգամը չէ որ դու մասնակցում ես խռովութեան, եթէ այդպէս յստակ ողորկած է գլուխդ: Հապա՛, մի մօտ արի ու ասա՛, ո՞վ է քեզ ուղարկել:»

Ծերուկ բաշկիրը լռում ու նայում էր բերգապետի վրայ կատարեալ անմտութիւն արտայայտող գէմքով: «Ի՞նչ ես լռում, շարունակեց Իվան Կուզմիչը. թէ՛ ռուսերէնի հոտն անգամ առած չունիս: Իւլայ, հարցրու նրան ձեր լեզուով, թէ ո՞վ է ուղարկել նրան մեր բերդը:» Իւլայը թաթարերէն կրկնեց Իվան Կուզմիչի հարցը, բայց բաշկիրը նայում էր նրա վրայ գէմքի նոյն արտայայտութեամբ և ոչ մի բառ չէր արտասանում:

— Եակշի (լաւ), ասաց բերգապետը. ես քո լեզուդ բաց կանեմ: Տղերք, հանեցէք նրա վրայից անձուռնի շերտաւոր խալաթը ու կռնակին մի լաւ հասցրէք: Քեզ տեսնեմ, Իւլայ, մի լաւ ուտեցնես:

Երկու հին զինուորներ սկսեցին հանուեցնել նրան: Գժբազդի կերպարանքի վրայ անհանգստութեան նշաններ երևեցին: Նա իւր չորս կողմն էր նայում, ինչպէս երեսա-

ների ձեռքն ընկած մի գազանիկ: Իսկ երբ զինուորներից մէկը բռնեց նրա ձեռքերը, բաշեց վզի վրայ ու բարձրացրեց նրան իւր ուսերին և երբ Իւլայը շարժեց իւր մտրակը, բաշկիրը հեկեկաց թողլ, աղերսալից ձայնով և գլուխը թափահարելով, բացեց բերանը, որի մէջ, լեզուի փոխարէն, շարժոււմ էր մտի մի կտոր:

Երբ լիշում եմ, որ այս բանը պատահել է իմ օրերով, և որ ես այժմ հասայ Աղէքսանդր կայսեր հեզաբարոյ թագաւորութեան, չեմ կարող չզարմանալ լուսաւորութեան արագասահ յառաջադիմութեան և մարգասէր օրէնքների տարածման վրայ: Ո՛վ երիտասարդ, եթէ իմ այս գրութիւններն ընկնեն քո ձեռքը, ապա լիշիր, որ ամենալաւ ու ամենահիմնաւոր բարեփոխումները նրանք են, որոնք ծագում են բարքերի ազնուանալուց, առանց որևէ բռնի գործողութեան:

Ամենքս էլ սարսափահար էինք եղած:

— Ե՛հ, ասաց բերգապետը. երևում է, դրանից օգուտ չկայ: Իւլայ, տար բաշկիրին շտեմարանը: Իսկ մենք, պարոններ, դեռ էլի մի քիչ կխօսակցենք:

Մենք սկսեցինք մեր դրութեան մասին խորհրդակցել, երբ յանկարծ ներս մտաւ Վասիլիսա Եգօրովնան շունչը կտրած, և չափազանց այլայլուած գէմքով:

— Ի՞նչ է պատահել քեզ, հարցրեց զարմացած բերգապետը:

— Եղբայրներ, գժբազդութիւն, պատասխանեց Վասիլիսա Եգօրովնան. Նիժնե-աղետոնայա բերդը առնուած է այսօր առաւօտ: Հալը Գերասիմի մշակը հէնց նոր այնտեղից վերադարձաւ: Նա տեսել է, թէ ինչպէս են առել բերդը: Բերգապետն ու բոլոր սպաները կախ են տրուած: Բոլոր զինուորները գերի են առնուած: Խօսք չկայ, որ չարագործներն այստեղ էլ կգան:

Այս անսպասելի լուրը սարսափեցրեց ինձ: Նիժնե-աղետո-

նայա բերդի բերդապետը, մի հանդարտ ու հեզաբարոյ երիտասարդ, ինձ ծանօթ էր: Երկու ամիս յառաջ նա իւր նորատի կնոջ հետ Օրենբուրգից իւր ծառայութեան տեղը գնալիս, իջեանեց Իվան Կուզմիչի մօտ: Նիժնե-ագեօրնայան գտնուում էր մեր բերդից մօտ 25 վերստ հեռավորութեան վրայ: Փամ առ ժամ մենք էլ պիտի սպասէինք Պուգաչեվի յարձակման: Կենդանի կերպով պատկերանում էր ինձ Մարիա Իվանովնայի վիճակը և սիրտս ճըմլուում էր դառնապէս:

— Իվան Կուզմիչ, ասացի ես բերդապետին. մեր պարտքըն է մինչև վերջին շնչերս պաշտպանել բերդը. սրա մասին խօսելն իսկ աւելորդ է: Բայց պէտք է հոգալ կանանց ապահովութեան մասին: Ուղարկեցէք նոցա Օրենբուրգ, եթէ ճանապարհը դեռ բաց է, կամ մի հեռավոր, առաւել յուսալի բերդ, ուր որ չարագործները հնարաւորութիւն չունենան հասնելու:

Իվան Կուզմիչը դարձաւ գէպի իւր կինն ու ասաց.

— Ինձ լսիր, սյ կնիկ, իրաւ որ. լաւ չի՞ լինիլ ձեզ մի հեռավոր տեղ ուղարկեմ, մինչև մենք գլուխ ելնենք խոզվարարների հետ:

— Է՛հ, զուր խօսքեր ես ասում, ասաց բերդապետուհին. կայ արդեօք այնպիսի մի բերդ, ուր գնդակը չհասնի: Ինչո՞վ Բելաբորսկայան պակաս յուսալի է: Փնաւք Աստծոյ, ասաներկուերորդ տարին է, որ ապրում ենք նրա մէջ: ասաներկուերորդ տարին է, որ ապրում ենք նրա մէջ: Բաշկիրներ էլ տեսանք, կերգիզներ էլ: Ո՞վ գիտէ, թերևս Պուգաչեվից էլ գլուխներս ազատենք:

— Դէհ, այ կնիկ, ասաց Իվան Կուզմիչը. մնա՛ այստեղ, եթէ այդպէս յոյս ունիս մեր բերդի վրայ: Բայց Մաշային քննէ անենք: Ո՛ւր է թէ մնանք ու ազատուինք կամ սիկուրս (օգնութիւն) ստանանք: Իսկ եթէ չարագործները տիրեն բերդին...

— Է՛հ, այն ժամանակ...

Այս խօսքերի վրայ Վասիլիսա Եգօրովնայի լեզուն կապ ընկաւ: Նա լուեց և նրա երեսի վրայ երևեցին չափազանց յուզման նշաններ:

— Ոչ, Վասիլիսա Եգօրովնա, շարունակեց բերդապետը, նկատելով, որ, գուցէ առաջին անգամ կեանքի մէջ, իւր խօսքերը ազդեցին նրա վրայ. Մաշայի այստեղ մնալն անկարելի է: Բեր ուղարկենք նրան Օրենբուրգ, իւր քաւորկնոջ մօտ: Այնտեղ զօրք էլ, թնդանօթ էլ շատ կայ ու պարիսպն էլ քարից է: Քեզ էլ խորհուրդ կտայի նրա հետ այնտեղ գնալ: Պառաւր պառաւ ես, բայց տես ինչ կգայ գլուխդ, թէ որ բերդը գրոհմամբ առնեն:

— Բարի է, ասաց բերդապետուհին. թող այդպէս լինի. Մաշային ուղարկենք: Իսկ իմ գնալու մասին բերան էլ մի բանար. ես չեմ գնալ: Ա՛յդ էր պակաս, որ այս ծերութեան հասակիս բաժանուելիմ քեզնից ու գերեզման փնտրեմ մի օտար երկրում: Միասին ապրեցինք, միասին մեռնենք:

— Այդ էլ ճշմարիտ է, ասաց բերդապետը: Դէհ, էլ դանդաղիլ հարկաւոր չէ, գնա պատրաստիր Մաշային ճանապարհ ընկնելու: Վաղը լոյսը բացուելու պէս նրան ճանապարհ կձգենք, և պահնորդ ուղեկիցներ էլ կտանք, թէև աւելորդ զինուորներ չունինք: Այս ո՛ւր է Մաշան:

— Ակուլինա Պանֆիլովնայի մօտ է, պատասխանեց բերդապետուհին. Նիժնե-ագեօրնայա բերդի առնուիլն իմանալով, նա իրան վատ զգաց: Վախենում եմ, մի գուցէ հիւանդանայ: Տէր թագաւոր Աստուած, սյ ինչ օրերի հանդիպեցինք:

Վասիլիսա Եգօրովնան գնաց աղջկայ երթի մասին հոգալու: Խօսակցութիւնը դեռ շարունակուում էր, բայց ես չէի մասնակցում և ոչինչ չէի լսում:

Մարիա Իվանովնան ընթրիքի եկաւ գունատ ու լացակոծուած գէմքով: Մենք ընթրեցինք լուութեամբ, և սո-

վորականից վաղ վեր կացանք սեզանից: Ողջ ընտանիքին հրաժեշտ տալուց յետոյ, մենք ուղևորուեցինք մեր տները: Բայց ես դիտմամբ այնտեղ թողի սուրս և յետ դարձայ նրան վերցնելու: Ես նախագգում էի, որ Մարիա Իվանովնային միայնակ կ'գտնեմ: Եւ յիրաւի, նա հանդիպեց ինձ դռան մէջ ու տուեց ինձ սուրս: «Մնաք բարով, Պետր Անդրեյիչ, ասաց նա արտասուքն աչքերին. ինձ ուղարկում են Օրենբուրգ: Առողջ ու երջանիկ եղէք: Գուցէ Աստուած էլի արժանացնէ մեզ իրար տեսութեան. իսկ եթէ ոչ...» Այստեղ նա հեծկտալ սկսեց: Ես գրկախառնեցի նրան: «Գնաս բարով, իմ հրեշտակ, ասացի ես. գնաս բարով, սիրասունըդ իմ, անձկալի՛ր իմ: Ինչ էլ որ ինձ հետ պատահի, հաւատա, որ վերջին միտքս, վերջին աղօթքս քո մասին, քեզ համար պիտի լինի:» Մաշան կրծքիս փարելով հեկեկում էր: Ես համբուրեցի նրան ջերմաջերմ և արագութեամբ դուրս ելայ սենեակից:



VII

Գլուխ, իմ գլուխ, ծառայական գլուխ.
 Ծառայեց գլուխ երեսուն տարի
 Ու երեք տարի, ու վարձ չստացաւ
 Այ հարստութիւն, ոչ ուրախութիւն,
 Այ բարի մե խօսք, ոչ բարձր աստիճան:
 Լոկ խեղճ՝ գլուխ ընծայ բտացաւ
 Երկու բարձրաբերձ ու ամուր սիւներ,
 Չինարի ծառայ շինուած մըջնասիւն,
 Նաև մի պարան մետարսից հիւսած:
 Ժողովրդան էրք:

Այն գիշերը ես շորերս չհանեցի և չքնեցի: Ես մտա-
 գիր էի արեւծագին գնալ բերդի դռների մօտ, որտեղից
 դուրս գալով պիտի մեկնէր Մարիա Իվանովնան, նրան
 վերջին հրաժեշտ տալու համար: Ես գգում էի իմ մէջ
 մի մեծանիշ փոփոխութիւն: Գեռ մի քանի օր յառաջ սրտիս
 տիրոջ վհատութիւնը ինձ համար աւելի դժուարաբեռն էր,
 քան իմ հոգևոյս ներկայ յուզեալ գրութիւնը: Անջատման
 վշտի հետ, սրտիս մէջ միախառնուում էին նաև աղօտ՝
 բայց քաղցրագին յոյսեր, վտանգի անհամբեր սպասումն և
 աղնուալոյց փառասիրութեան զգացումներ: Անզգալի կեր-
 պով անցաւ գիշերը: Ես, այն է, ուզում էի դուրս գալ
 տնից, երբ ներս մտաւ կապրալը և յայտնեց, որ կողակնե-

ըր գիշերը բերդից դուրս եկել գնացել են, իւրեանց հետ բռնի տանելով նաև Իւլյաին, և որ բերդի շրջակայքում արշաւում են ինչ որ օտարոտի մարդիկ: Ինչ սարսափեցրեց այն միտքը, որ Մարիա Իվանովնան չպիտի կարողանայ հեռանալ բերդից: Ես շտապով մի քանի պատուէրներ տուի կապրալին և խփոյն վազեցի բերդապետի մօտ:

Լոյսը արդէն բացւում էր: Ես սրանում էի փողոցով, երբ լսեցի, որ մէկը կանչում է ինձ: Ես կանգնեցի:

— Ո՛ւր էք գնում, ասաց Իվան Իգնատիչը, ետեկցս հասնելով. Իվան Կուզմիչը ամբարտակի վրայ է և ինձ զըրկեց Ձեր ետեկց: Պուզաչն եկել է:

— Ինձ արդեօք Մարիա Իվանովնան, հարցրի ես՝ սիրտս դող ելած:

— Չկարողացաւ երթալ, պատասխանեց Իվան Իգնատիչը. Օրենբուրգ տանող ճանապարհը կտրուած ու բերդը պաշարուած է: Բանը վատ է գնում, Պետր Անդրեիչ:

Մենք բարձրացանք բնութիւնից կառուցուած ու ցանկապատով ամրացրած ամբարտակի վրայ: Այնտեղ արդէն խռնուած էին բերդի բոլոր բնակիչները: Բերդապահ զօրքը կանգնած էր՝ հրացանը ձեռքին: Թնդանօթը դեռ առաջին օրից քաշ տրուած, բերուած էր: Բերդապետը լետ ու լառաջ ման էր գալիս իւր փոքրաթիւ զինուորաշարքի առաջ: Վտանգի մօտաւորութիւնը մի անսովոր աշխուժով ոգևորել էր հին զինուորականին: Բերդից ոչ հեռու, հարթավայրի վրայ, այս ու այն կողմ արշաւում էին քսանի չափ ձիաւորներ: Թւում էր, թէ նոքա կողակներ էին, բայց նոցա մէջ կային նաև բաշկիրներ, որոնց հեշտութեամբ կարելի էր ճանաչել քաւթառի մորթուց կարած գտակներից, նաև կապարճներից: Բերդապետը շրջում էր իւր զօրքերի մէջ ու ասում. «Իէհ, իմ որդիք, կուուենք այսօր մեր Մայր-թագուհու համար և ցոյց տանք ամբողջ աշխարհին, որ մենք քաջարի ու երդմնապահ մարդիկ

ենք:» Զինուորները եռանդագին արտայայտեցին իւրեանց պատրաստականութիւնը: Եվաբրինը ինձ մօտ կանգնած՝ անթարթ նայում էր թշնամու վրայ: Հարթավայրում ձիարշաւ շրջող մարդիկ բերդի մէջ շարժում նկատելով, հաւաքուեցին մի խմբի մէջ և սկսեցին խօսակցել:

Բերդապետը Իվան Իգնատիչին հրամայեց թնդանօթը ուղղել այդ խուժանի վրայ և ինքը մօտեցրեց պատրուզը: Ռումբը շաչելով թռաւ վերևից, ոչ մի վնաս չպատճառելով նոցա: Զիաւորները ցրուելով՝ արշաւատուր անհետացան և հարթավայրը ամայացաւ:

— Այս ժամանակ ամբարտակի վրայ բարձրացան Վասիլիսա Եգօրովնան ու Մաշան, որը չէր ուզեցել անջատուիլ մօրից:

— Է՛, թնչ կայ, ասաց բերդապետուհին. թնչպէս է գնում բատայիան (կռիւր): Ո՛ւր է թշնամին:

— Թշնամին հեռու չէ, պատասխանեց Իվան Կուզմիչը. Աստծով ամեն ինչ լաւ կերթայ: Ի՞նչպէս ես, Մաշա, վախենում ես:

— Ո՛չ հայր իմ, պատասխանեց Մարիա Իվանովնան, տանը միայնակ աւելի եմ վախենում:

Նա նայեց ինձ վրայ ու ճիգ անելով ժպտաց: Ես տկամայ սեղմեցի սրիս երախակալը, լիշելով, որ դեռ երեկ նրա ձեռքից ստացայ այն՝ գոգցես իմ փարեղուս պաշտպանութեան համար: Սիրտս կրակ էր կտրել: Ես երևակայում էի, որպէս թէ նրա պաշտպան ասպետն եմ: Ես փափաքում էի ապացուցանել, որ արժանի էի նրա վստահութեան և անհամբեր սպասում էի վճռական ընդունելի:

Այդ ժամանակ բերդից կէս վերստ հեռաւորութեան վրայ գտնուած բարձրութեան ետեկց դուրս ելան ձիաւոր նոր խմբեր և շուտով հարթավայրը ծածկուեց տէգերով ու նետ—աղեղներով զինուորուած մարդկանց անհամար բազմութեամբ: Նոցա մէջ, սպիտակ երիվարի վրայ նստած,

գալիս էր մի մարդ, կարծիր վերնազգեստը հագին և մերկացրած սուրը ձեռքին բռնած: Դա ինքը Պուգաչեվն էր: Նա կանգ առաւ: Նրան շրջապատեցին: Ապա, ըստ երևոյթի նրա հրամանով, չորս մարդիկ բաժանուեցին մի սնեւորից և արշաւաստը դիմեցին ուղիղ դէպի բերդը: Դոքս մեր դաւաճաններն էին: Նոյանից մէկը գլխարկի վրայ բռնել էր մի թուղթ, միւսը տէգի վրայ ցցած բերում էր Իւլայի գլուխը, որն և թափահարելով ցանկապատի վրայից ձգեց մեր կողմը: Եղկելի կալմիկի գլուխը ընկաւ բերդապետի ոտքերի առաջ: Դաւաճանները գոչում էին.

— Կրակ մի անէք, դուրս եկէք թագաւորին ընդ առաջ: Թագաւորն այտեղ է:

— Այ՛ ձեր թագաւորն էլ ու դուք էլ, գոչեց Իվան Կուզմիչը. տղերք, կրակ արէք:

Մեր գինուորները միանուազ արձակեցին հրացանները: Նամակը բռնող կողակը տատանուեց ու վայր ընկաւ ձիուց, միւսները փախուստ տուին: Ես նայեցի Մարիա Իվանովնայի վրայ: Իւլայի արիւնաթաթաւ գլխի տեսքից սարսափած, հրացանների թնդիւնից լսողութիւնը ծանրացած, նա կարծես իրան բոլորովին կորցրել էր: Բերդապետը կանչեց կապրալին և հրամայեց բերել սպանուած կողակի ձեռքի թուղթը: Կապրալը դուրս ելաւ զաշտը ու լեռ դարձաւ, երասանակից բռնած՝ բերելով նաև սպանուածի ձին: Նամակը նա յանձնեց բերդապետին: Իվան Կուզմիչը ինքն իրան կարգաց նամակը ու լետոյ կտոր կտոր արաւ: Նոյն ժամանակ խռովայուզները յայտնի պատրաստուում էին գործ սկսելու: Շուտով գնդակները սկսեցին շուշուկ մեր ականջների շուրջը և մի քանի նետեր խրուեցին մեզ մօտ՝ գետնի ու ցանկապատի մէջ: «Վասիլիսա Եգորովնա, սոսայ բերդապետը. այտեղ կնիկ-մարդու գործ չկայ. հեռացուր այտեղից Մաշային: Ձէս տեսնում, որ նա ոչ կենդանի է, ոչ մեռած:»

Վասիլիսա Եգորովնան, որ գնդակների հոսանքի տակ կարծես սակել էր, նայեց դէպի հարթավայրը, ուր ահագին իրարանցում էր տիրում, լետոյ դարձաւ ամուսնուն ու սոսայ. «Իվան Կուզմիչ, կեսնքն ու մահը Աստծոյ ձեռքն է. օրհնիր Մաշային: Մաշա, մօտեցիր հօրդ:»

Մաշան գունատ գէմքով ու զոզոսջոււն մարմնով մօտեցաւ Իվան Կուզմիչին, ծունկ չօքեց նրա առաջ ու խորը զլուխ տուեց: Ծերուկի բերդապետը երեք անգամ խաչակնքեց նրան, լետոյ բարձրացրեց ու համբուրելով, փոփոխուած ձայնով սոսայ.

— Դէ՛հ, Մաշա, բաղդաւոր լինիս: Դիմիր Աստծոյ, նա քեզ չի թողնիլ: Եթէ գտնուի մի բարի մարդ, որ կամենայ կապել քեզ հետ իւր բաղդը, այն ժամանակ Աստուած ձեզ սէր ու համաձայնութիւն տայ: Ապրեցէք այնպէս, ինչպէս ապրեցինք ես ու Վասիլիսա Եգորովնան: Դէ՛հ, գնաս բարով, Մաշա: Վասիլիսա Եգորովնա, ասը նրան շուտով այտեղից:

Մաշան փարուեց նրա վզին ու հեկեկաց:

— Մենք էլ համբուրուենք, լալով սոսայ բերդապետուհին: Մնաս բարով, սիրելի Իվան Կուզմիչ. թէ որեէ բանով նեղացրել եմ քեզ, ներիր ինձ:

— Գնաս բարով, գնաս բարով, այ կնիկ, սոսայ բերդապետը, գրկելով իւր պառաւ կնոջը: Դէ, բաւական է, գնացէք, գնացէք շուտով տուն: Թէ կարողացար, հազցուր Մաշային իւր սարաֆանը:

Բերդապետուհին աղջկայ հետ հեռացաւ: Ես նայում էի Մարիա Իվանովնայի ետեից: Նա լեռ նայեց և զլխի շարժումով ինձ մնաս բարով էր անում: Իվան Կուզմիչը դարձաւ դէպի մեզ և նրա ողջ ուշադրութիւնը կենտրոնացաւ թշնամու վրայ: Խռովաբարները հաւաքուում էին իւրեանց պարագլխի շուրջը: Յանկարծ նոքա սկսեցն իջնել ձիերից: «Այժմ պինդ կացէք, սոսայ բերդապետը.

զրոհն սկսուում է:» Նոյն ըրպէին սարսափելի ճիչ ու աղաղակ բարձրացաւ: Խռովարարները վազէվաղ սրանում էին դէպի բերդը: Մեր թնդանօթը լցուած էր մանրագնդերով: Բերդապետը սպասեց, մինչև խռովարարները բռնորովին մօտեցան և յանկարծ նորից արձակեց: Մանրագունդը խփեց ամբօխի հէնց մէջ տեղը: Խռովարարները երկու կողմ շրջուեցին ու ընկրկեցին: Նոցա առաջ կանգնած մնաց միայն պարագլուխը: Նա շարժում էր սուրը և ըստ երևութին, քաջալերում էր իւր ամբօխին: Մի ըրպէ դադարած ճիչ ու աղաղակը նորից բարձրացան: «Իէհ, իմ քաջեր, ասաց բերդապետը. այժմ բացէք դռները, թմբուկները խփեցէք: Իէպի դուրս, դէպ լառաջ իմ ետևից:»

Բերդապետը, Իվան Իգնատիչը և ես մի ըրպէսու՞մ դուրս թռանք ամբարտակի այն կողմը, բայց վհատած զինուորները տեղից չշարժուեցին: «Ինչո՞ւ էք, իմ սրդիք, կանգնել մնացել, գոչեց բերդապետը. մեռնել, մեռնել. ծառայութիւն է, թնչ անենք:» Նոյն ըրպէին խռովարարները վրայ թափուեցին ու լցուեցին բերդը: Թմբուկի ձայնը կտրուեց, զօրքը վայր ձգեց հրացանները: Քիչ մնաց ինձ գետին գլորէին, բայց ես ոտքի կանգնեցի ու խռովարարների հետ մտալ բերդը: Բերդապետը, գլխի վրայ վերք ստացած, կանգնած էր չարագործների մի խմբի մէջ, որ նրանից պահանջում էր բանալիները: Ես ուզում էի նրան օգնութեան հասնել, բայց մի քանի հուժկու կողակներ բռնեցին ինձ ու գօտիներով կապեցին: «Տեսէք ի՞նչ կ'գայ գլուխներիդ, թագաւորի անհնազանդ հպատակներ», ասում էին նոքա: Մեզ քաշ տուին փողոցներով: Բնակիչները տներից դուրս էին գալիս աղ ու հացով: Զանգակներն սկսեցին խփել: Յանկարծ խուժանի մէջ ձայն ընկաւ, թէ թագաւորը հրապարակի վրայ սպասում է գերեալներին ու հաւատարմութեան երգումն է ընդունում:

Ամբօխը հրոսեց դէպի հրապարակ, Մեզ էլ քաշ տուին, տարան այնտեղ:

Պուգաչեվը նստած էր բազկաթոռի վրայ, բերդապետի տան պատշգամբին: Նա հագած էր կողակի կարմիր վերնազգեստ, ոսկեթել ժապաւէններով դարդարուած: Ոսկեայ փունջերով, բարձրագիր սամուրի գլխարկը քաշել էր իւր փայլատակող աչքերի վրայ: Նրա դէմքը ինձ ծանօթ երևեց: Նրան շրջապատել էին կողակ մեծաւորները: Պատշգամբի մօտ, գունաթափ ու զողզողագին, կանգնած էր հայր Գերասիմը խաչը ձեռքին և կարծես լուելեայն աղաչում էր նրան՝ կատարուելիք գոհերի փրկութեան համար: Հրապարակի վրայ փութով կանգնեցրին կախաղանը: Երբ մենք մօտեցանք, բաշկիրները լեռ քշեցին ամբօխը և մեզ հանեցին Պուգաչեվի առաջ: Զանգահարութիւնը դադարեց, առ ժամանակ տիրապետեց խորին լուսթիւն: «Ո՞րն է բերդապետը», հարցրեց ինքնակոչը: Ամբօխի միջից դուրս եկաւ մեր ուրեագնիկը և ցոյց տուեց Իվան Կուզմիչին: Պուգաչեվը մեծասաստ նայեց ծերունու վրայ ու ասաց. «Ի՞նչպէս համարձակուեցիր հակառակել ինձ, քո թագաւորին:» Ստացած վերքերից ուժասպառ՝ բերդապետը, հաւաքելով իւր վերջին ուժերը, հաստատուն ձայնով պատասխանեց. «Ի՞նչ իմ թագաւորը չես. ինձ լսիր, դու գնդ ես ու ինքնակոչ:» Պուգաչեվը մռայլագին խոժոռեց դէմքը և շարժեց թաշկինակը: Մի քանի կողակներ բռնեցին ծերուկ կապիտանին ու տարան կախաղանի մօտ: Նրա միջնասեան վրայ բարձրացաւ նախընթաց օրը մեր հարցուփորձին ենթարկուած խեղաթիւր բաշկիրը: Զեռքին նա բռնած ունէր մի պարան: Մի ըրպէ լետոյ ես տեսայ թշուառ Իվան Կուզմիչին օգի մէջ կախ տրուած: Յետոյ Պուգաչեվի մօտ բերին Իվան Իգնատիչին: «Երգուիր քո թագաւոր Պետր Գեօղորովիչին», ասաց նրան Պուգաչեվը: «Ի՞նչ մեր թագաւորը չես, իւր կապիտանի խօսքերը կրկնելով, պատասխա-

նեց Իվան Իգնատիչը. դու, քեռի, զող ես ու ինքնակոչ:» Պուգաչեվը նորից շարժեց թաշկինակը և քաջ պորուչիկը կախուեց իւր ծերունի հրամանատարի մօտ:

Հերթն իմն էր: Ես վստահ վստահ նայում էի Պուգաչեվի երեսին, պատրաստուելով կրկնելու իմ մեծահոգի ընկերների պատասխանը: Այդ ժամանակ կոզակների մեծաւուրների մէջ աննկարագրելի զարմանքով փեսայ Եվաբրինին, մագերը բոլորակաձև կարած և կոզակի վերնագգեստ հագած: Նա մօտեցաւ Պուգաչեվին ու նրա ականջին մի քանի խօսք ասաց: «Կախել դրան», ասաց Պուգաչեվը, անգամ չնայելով ինձ վրայ: Վզիս անցրին պարանի օղակը: Ես սկսեցի ինձ ու ինձ աղօթք մրմնջալ, բոլոր գործածս մեղքերի համար անկեղծ գղջմամբ Աստուծոյ գիծելով և աղաչելով իմ սրտին մօտ եղողների փրկութեան համար: Ինձ տարան կախաղանի տակ: «Մի վախենար, մի վախենար», ասում էին ինձ իմ դահիճները, թերևս խկապէս ինձ սիրտ տալ ցանկանալով: Յանկարծ ես մի աղաղակ լսեցի. «Կացէք, թշուռականներ, սպասեցէք:» Դահիճները կանգ առան: Յետ եմ նայում, Սավելիչը ընկած է Պուգաչեվի ոտքերի առաջ: «Ողորմած տէր, ասում էր խեղճ դաստիարակս. թնջ օգուտ քեզ մի իշխանի որդու մահը: Թող նրան. դրա փոխարէն քեզ փրկանք կտան: Իսկ ուրիշներին օրինակ ցոյց տալու ու երկիւղ ազդելու համար, թէ կամենաս, հրամայիր ինձ, ծերուկիս կախել:» Պուգաչեվը նշան արաւ: Իմ կապանքները քանդեցին ու ազատ թողին: «Մեր հայր թագաւորը ներում է քեզ», ասում էին ինձ: Չեմ կարող ասել, որ նոյն բոլակին ես ուրախացայ փրկուելուս համար, բայց չեմ էլ ասիլ, որ ավստեցի: Իմ զգացումները շատ մութն ու անորոշ էին: Ինձ կրկին տարան ինքնակոչի մօտ ու ծունկ չոքեցրին նրա առաջ: Պուգաչեվը դէպի ինձ մեկնեց իւր ջղոտ ձեռքը: «Պագիր ձեռքը, պագիր», ասում էին ինձ շրջապատողները: Բայց ես

նախապատիւ կհամարէի ամենագառն մահը այդպիսի անարգ ստորութեան: «Ճէր իմ, Պետր Անդրեյիչ, ետևս կանգնած ինձ դրդում ու շըշնջում էր Սավելիչը. մի լամառիր: Ի՞նչ դժուարութիւն է քեզ համար: Թքիր, ու պագիր այդ չարագործ... (թո՛ւ), պագիր դրա ձեռքը:» Ես չէի շարժւում: Պուգաչեվը լետ քաշեց ձեռքը ու ժպտալով ասաց. «Նորին ազնուութիւնը, երևի, ուրախութիւնից ցնդուել է: Կանգնեցրէք նրան:» Ինձ վեր հանեցին ու աշատ թողին: Ես սկսեցի սարսափելի կատակերգութեան շարունակութեանը նայել:

Բնակիչները սկսեցին երգուել: Մէկը միւսի ետևից նոքա մօտենում էին խաչելութեան, համբուրում էին, և գլուխ էին տալիս ինքնակոչին: Բերդապահ զօրքն էլ կանգնած էր նոյն տեղ: Վաշտի դերձակը իւր բութ մկրատով կտրում էր նոցա մազերը: Գլուխները ցնցելով՝ նոքա մօտենում, պագում էին Պուգաչեվի ձեռքը, որ նոցա ներումն էր շնորհում և ընդունում էր իւր հրոսակի մէջ: Այդ ամենը տեսց մօտ երեք ժամ: Վերջապէս Պուգաչեվը բազկաթռից վեր ելաւ և իւր մեծաւուրների հետ իջաւ պատշգամբից: Նրա համար բերին փայլուն սարք ու կարգով մի երկվար: Երկու կոզակներ նրա թևերից բռնած, նստեցրին թամբին: Նա յայտնեց հայր Գերասիմին, որ նրա մօտ է ճաշելու: Այդ բոլակին կանացի մի ճիչ լսուեց: Մի քանի ապիրատներ գուրս քաշեցին Վասիլիսա Եզօրովնային պատշգամբի վրայ, մագերը խճճած ու բոլորովին մերկացրած: Նոցանից մէկը արգէն հագել էր նրա բաձկոնակը: Միւսները կրում էին ներքնարկներ, արկղներ, թէյամաններ, սպիտակեղէններ ու տան բոլոր եղած — չեղածը: «Բարի՛ մարդիկ, զօչում էր խեղճ պառաւը. ժամանակ տուէք մեղքերս քուելու: Եղբայրներ, տարէք ինձ Իվան Կուզմիչի մօտ:» Յանկարծ նա աչքը ձգեց կախաղանի վրայ ու ճանաչեց իւր ամուսնուն: «Չարագործներ, բացականչեց

նա սարսափելի յուզեալ դրուժեան մէջ. այդ թնչ էք արել
դուք նրան: Աչքիս լուս, Իվան Կուզմիչ, քաջակորով զինու-
որ, ոչ պրուսական սուխնները և ոչ տաճկի գնդակները
կարողացան քեզ վնասել: Ազնիւ կուռի մէջ չզոհեցիր կեան-
քըդ, այլ մի փախստական, աքսորական ոճրագործի ձեռ-
քից ընկար:»

— Զսպեցէք այդ կախարդին, ասաց Պուգաչեվը:

Մի երիտասարդ կոզակ սրով խփեց նրա գլխին և նա
անշունչ վայր ընկաւ պատշգամբի աստիճանների վրայ: Պու-
գաչեվը հեռացաւ: Ամբոխը վազեց նրա ետեւից:



VIII

ԸՆԿՈՉ ՀԻՒՐ

Մնեղ հիւրը Թամարից էլ վատթար է:
Ռուստիան սասած.

Հրապարակը ամալացաւ: Ես շարունակ կանգնած էի
մի և նոյն տեղը և չէի կարողանում այնպիսի զարհու-
րելի տպաւորութիւններից այլալուծած մտքերս կարգի
բերել:

Ամենից աւելի տանջոււմ էր ինձ Մարիա Իվանովնայի

վիճակի անյայտութիւնը: Ո՞րտեղ է նա, թնչպէս է,
կարողացաւ արդեօք թագչիլ, անվտանգ է արդեօք նրա
սպաստանը. . . Յուզեալ մաքերով լի՝ ես մտայ բերդապե-
տի տունը: Տունը դատարկուած էր. . . Աթուռները, սե-
ղանները, արկղները ջարդոտուած էին, ամանեղէնը կտոր-
տուած, ամեն ինչ աւարի տրուած: Ես վեր վազեցի սրբս.
կապան տանող փոքրիկ սանդուղքով և, կեանքիս մէջ ա-
ռաջին անգամ, մտայ Մարիա Իվանովնայի սենեակը: Ես
տեսայ նրա անկողինը՝ աւազակների ձեռքով քրքրուած,
պահարանը ջարդած ու աւարի տրուած: Կանթեղը դեռ
փայփրում էր սրբի պատկերի դատարկ շրջանակի առաջ:
Մնացել էր նաև պատախորշում կախուած մի հայելի. . . .
Ապա յորտեղ էր այս հեղատես, կուսական խցի տիրուհին:
Զարհուրելի մի միտք փայլեց գլխիս մէջ. երևակայու-
թեանս առաջ այնպէս պատկերացաւ, որպէս թէ նա ըն-
կած է աւազակների ձեռքը. . . Սիրտս կտոր կտոր էր լի-
նում. . . . Ես սկսեցի դառնապէս լաց լինել և բարձր ար-
տասանել իմ անձկալուս անունը. . . . Նոյն բոպէին թեթև
մի աղմուկ լսուեց և պահարանի ետեւից, գողգողալով ու
գունաթափ, դուրս եկաւ Պալաշան:

— Ախ, Պետր Անդրեյիչ, ասաց նա՝ ձեռքերը ծնկնե-
րին խփելով: Ի՞նչ օր է այս, ի՞նչ սարսափ:

— Իսկ Մարիա Իվանովնան, հարցրի ես անհամբերու-
թեամբ. թնչ եղաւ Մարիա Իվանովնան:

— Թրիորդը ողջ առողջ է, պատասխանեց Պալաշան.
նա պահուած է Ակուլինա Պանֆիլովնայի մօտ:

— Իրիցկնոջ մօտ, սարսափած գոչեցի ես: Աստուած իմ,
չէ՞ որ Պուգաչեվը այնտեղ է. . . .

Ես դուրս վազեցի սենեակից, մի վայրկեանում փողոց ե-
լայ ու արտորանօք վազեցի քահանայի տունը, ոչինչ չը
տեսներով ու ոչինչ չզգալով: Այնտեղից ազատակների, ծի-
ծաղի ու երգերի ձայներ էին լսոււմ. . . . Պուգաչեվը խըն-

ջուր էր անում իւր ընկերների հետ: Պալաշան իմ ետեից նոյնպէս եկաւ այնտեղ: Ես նրան ուղարկեցի Ակուլինա Պանֆիլովնային կամացուկ դուրս կանչելու: Մի րոպէ անցած՝ իրիցկինը դուրս եկաւ բակը, դատարկ շտոֆը ձեռքին:

— Ի սէր Աստծոյ, սուր է Մարիա Իվանովնան, անասելի յուզմունքով հարցրի ես:

— Պառկած է հոգեակս այնտեղ, մահճակալիս վրայ, միջնորմի ետեը, պատասխանեց իրիցկինը: Ե՛հ, Պետր Անդրեյիչ, քիչ էր մնում տներս քանդուէր, բայց, փառք Աստծոյ, ամեն բան յաջող անցաւ: Չարագործը նոր էր սեղան նստել, երբ նա, իմ խղճալի որբիկս, զարթնեց ու սկսեց տքալ... Ես ջուր կտրայ. Պուգաչեվը լսեց: «Ա՛յ պառաւ, սիլ է այնտեղ տքում:» Ես՝ գոյ աւազակին գլուխ եմ տալիս ու ասում. եղբորս աղջիկն է, թագաւորն ապրած կենայ, նա հիւանդ է և ահա երկրորդ շաբաթն է, որ պառկած է: «Ըսկ նորատի է եղբորդ աղջիկը:» — Նորատի է, թագաւոր: «Ապա, մի ցոյց տուր ինձ, պառաւ, քո եղբոր աղջիկը:» Սիրտս գոյ ելաւ, բայց ճար չկար: «Համեցէք, թագաւորն ապրած կենայ. միայն աղջիկը ինքը չէ կարող վեր կենալ ու գալ Ձերդ մեծութեան մօտ:»

— «Ոչինչ, այ պառաւ, ես ինքս կգնամ, կնայեմ:» Եւ քննեա կարծում, անիծեալը չ'ենի՞ ու երթայ միջնորմի ետեը, լեա քաշէ վարագոյրը ու իւր բազէի աչքերով չնայէ նրա վրայ: Բայց ոչինչ... Աստուած ազատեց: Սակայն հաւատում ես, ես ու տէրտէրս պատրաստուել էինք մարտիրոսական մահուան: Բարեբաղդաբար իմ հոգեակս չճանաչեց նրան: Տէր Ամենակարող Աստուած, այ թէ լաւ տօնի հանդիպեցինք, էլ խօսք չունի: Խղճուկ Իվան Կուզմիչ, սու մտքից կանցնէր Իսկ Վասիլիսա Եգօրովնան. իսկ Իվան Իգնատիչը... Նրան ինչ պատճառով... Այս քնչպէս Ձեզ ինչպեցին: Իսկ Շվարբինը, Ալեքսեյ Իվանիչը, ինչ հոգի է ե-

ղել . . Մի տեսնէիք, մագերը բոլորակ խուզած, ու այժմ էլ այնտեղ նրանց հետ խնջուք է անում: Ժիր մարդ է, մէկ խօսքով: Հիւանդ եղբորաղջկանս վրայ որ չխօսեցի, հաւատում ես, այնպէս նայեց վրաս, կարծես դռնակով սիրտս ծակեց: Բայց չմատնեց. այդքանի համար էլ շնորհակալ եմ նրանից:

Նոյն րոպէին լսուեցին հարբած հիւրերի ազդակները ու հայր Գերասիմի ձայնը: Հիւրերը զինի էին պահանջում, տէրտէրը կանչում էր իւր կենակցին: Իրիցկինը իրար խռնուեց:

— Գնացէք տուն, Պետր Անդրեյիչ, ասաց նա. Ձեզ այստեղ բան չկայ անելու: Չարագործները հարբեցողութեան ետեից են: Վատ կլինի, թէ հարբած ժամանակներն աչքերին ընկնէք: Մնաք բարով, Պետր Անդրեյիչ: Ինչ որ լինելու է, կլինի: Գուցէ Աստուած մեզ երեսի վրայ չթողնէ:

Իրիցկինը գնաց: Մի քիչ հանգստացած, ես վերադարձայ իմ բնակարանը: Հրապարակով անցնելիս, տեսայ մի քանի բաշկիրներ, որ կախաղանների մօտ խռնուած, հանում էին կախուածների կոշիկները: Գծուարութեամբ կարողացայ զսպել զայրոյթս, միջամտութեանս անօգուտ լինելն զգալով: Աւազակները բերգի մէջ այս ու այն կողմ էին վազում ու կողոպտում էին սպանների տները: Ամեն կողմից լսում էին հարբեցող խռովարարների աղաղակները: Ես հասայ տուն: Սավելիչը ինձ զիմաւորեց շեմքի վրայ:

— Փառք Աստծոյ, գոչեց նա՝ ինձ տեսնելով. ես այն է, մտածում էի, չլինի՞ չարագործները քեզ կրկին բռնեցին: Ե՛, տէր իմ Պետր Անդրեյիչ, հաւատում ես, սրիկաները մեր բոլոր ունեցած չունեցածը կողոպտել տարել են. հագուստները, սպիտակեղէնները, իրերն ու ամանները-ոչինչ չեն թողել: Բայց քննե՛ք արած: Գեռ փառք Աստծոյ, որ

քեզ սղջ առողջ բայ թողին: Շանաչեցի՞ր արգետք, պարոն, առամանին (պարագլուխ):

— Ոչ, չճանաչեցի: Ո՞վ է նա:

— Ի՞նչպէս, տէր իմ, միթէ մոռացել ես այն հարբեցողին, որ իջեանում գուրս քաշեց քեզնից մուշտակը: Նապաստակի մորթուց կարած մուշտակը նիւի-նոր էր, իսկ այն անբանը հազնելով ճղրտեց նրան:

Ես չափազանց զարմացայ: Իրաւ որ, Պուզաչեվի և իմ ուղեցուցի մէջ մեծ նմանութիւն կար:

Ես հաւատարեցայ, որ Պուզաչեվը և իմ ուղեցուցը մի և նոյն անձնաւորութիւնն է և այժմ միայն հասկացայ, թէ ինչո՞ւ նա ինձ խնայեց ու ազատեց մահից: Ես չէի կարողանում չզարմանալ դէպքերի տարօրինակ յարակցութեան վրայ. թափառաշրջիկ մէկին ընծայածս երեխայական մաշկեակը ազատում էր ինձ կախաղանից և իջեանները քաշ եկող մի հարբեցող բերդեր էր պաշարում ու գրգրդեցնում էր մի ամբողջ տէրութիւն:

— Չէս բարեհաճիլ քիչ բան ուտել, հարցրեց՝ իւր սովորութիւնների մէջ անխախտ Սափելիչը: Տանը ոչինչ չկայ, կերթամ այս ու այն կողմ կընկնեմ ու մի բան կպատրաստեմ քեզ համար:

Ես մնացի միայնակ ու խորհրդածութիւնների անձնատուր եղայ: Ի՞նչ անէի: Մնալ չարագործին ենթարկուած բերդում, կամ հետևել նրա հրոսակին, անվայել էր մի սպայի: Իմ պարտքը պահանջում էր, որ ես գնայի այնտեղ, որտեղ իմ ծառայութիւնը կարող էր օգտակար լինել հայրենիքիս՝ ներկայ ծանր հանգամանքներում: Բայց սէրը ուժգին կերպով դրդում էր ինձ մնալ Մարիա Խվանովնայի մօտ, լինել նրա պաշտպանն ու խնամակալը: Թէև ես նախատեսում էի հանգամանքների շուտափոխութիւն ու անկասկած փոփոխութիւնը, այնուամենայնիւ առանց սրտազոգի չէի կարողանում ինձ պատկերացնել նրա դրութեան վտանգաւոր

րութիւնը:

Խորհրդածութիւններս ընդհատեց մի կողակ, որ շտապով ներս վազեց ու յայտնեց, թէ «Մեծագոր թագաւորը պահանջում է քեզ իւր մօտ»:

Ո՞րտեղ է նա, հարցրի ես, պատրաստուելով հնազանդուել նրա հրամանին:

— Բերդապետի տանն է, պատասխանեց կողակը: Ճաշից յետոյ մեր ողորմած տէրը գնաց բաղանիք, իսկ այժմ հանգստանում է: Ե՛հ, Ձերդ տղնութիւն, ամեն բանից երևում է, որ նա մեծատոհմ անձնաւորութիւն է. ճաշին երկու տապակած խոճկորակներ ուտել բարեհաճեց, իսկ բաղանիքում այնպիսի տաքութեան մէջ է նստում, որ Տարաս Անրոչկինն էլ դիմանալ չկարողացաւ. իւր աւելափունջը առեց Փոմկա Բիկբայելին և սառը ջրով հազիւ խելքը գլուխը բերեց: Խօսք չկայ, բոլոր ձևերն էլ մի տեսակ վեհանշան են: Իսկ բաղանիքի մէջ, ինչպէս ասում են, ցոյց է տուել իւր թագաւորական նշանները կրծքի վրայ. մի կողմը երկգլխանի արծիւ, հինգկողէկանոցի մեծութեամբ, միւս կողմը իւր սեփական անձի պատկերը:

Ես հարկաւոր չհամարեցի հերքել կողակի թիւր կարծիքները և նրա հետ միասին գնացի բերդապետի տունը, նախապէս Պուզաչեվի հետ ունենալիք տեսակցութիւնս ինձ պատկերացնելով և նրա հետևանքը գուշակել աշխատելով: Ընթերցողը հեշտութեամբ կհասկանայ, որ ես հոգեպէս լիովին հանգիստ չէի:

Մութն արդէն տարածւում էր, երբ ես հասայ բերդապետի տունը: Կախազանը իւր զօհերով միասին մթնով սևակալած, մտրու գարհուրանք էր ազդում: Թշուառ բերդապետուհու զիսկը գեռ վայր ընկած կենում էր պատշգամբի մօտ, որտեղ երկու կողակներ պահապան էին կանգնած: Ինձ բերդ կողակը գնաց իմ գալուստը յայտնելու և խիօյն վերագառնալով, ներս տարաւ ինձ այն սե-

նեակը, ուր նախընթաց օրը այնպիսի քնքույշ կերպով հրա-
ժեշտ էի տուել Մարիա Իվանովնային:

Իմ առաջ բացուեց տարօրինակ մի պատկեր: Սփռուցով
ծածկած սեղանի չորս կողմը, գինու շշերը առաջներին
շարած, գլխարկներով ու ծաղկաւուն շապիկները հագերին,
նստած էին Պուզաչեվը և տասը կողակ մեծաւորներ: Նո-
քա սաստիկ բորբոքուել էին գինուց. նոցա գէմքերը կար-
մրակել էին և աչքերը փայլատակում էին անսովոր
լուսով: Նոցա մէջ չկային նորրիմայ գաւաճաններից ոչ
Շվարբինը ոչ ուրեաղնիկը: «Ա՛ն, Ձերդ աղնուլթիւն, ա-
սաց Պուզաչեվը՝ ինձ նկատելով. աչքիս վրայ: Խնդրեմ
համեցէք:» Սեղանակիցները ինձ համար տեղ բաց արին:
Ես լուսթեամբ նստայ սեղանի ծայրը: Մօտս նստած վայել-
չակազմ ու զեղեցիկ մի կողակ լցրեց ինձ մի բաժակ հա-
սարակ գինի, սրին ես բոլորովին ձեռք չտուի:

Հետաքրքրութեամբ սկսեցի ես զննել այս խաժամու-
ժը: Վերի գլուխը նստած էր Պուզաչեվը՝ սեղանի վրայ
թիկնած և իւր սև մօրուքը լայնանիստ բռունցքի վրայ
լենած: Նրա գէմքի կանոնաւոր ու հաճելի զծագրութիւ-
նը կատաղի բարքի ոչ մի նշան չէր այտայտուում: Նա
լաճախ խօսակցում էր լիսուն տարեկան մի մարդու հետ,
որին երբեմն կոմս էր անուանում, երբեմն Տիմոֆէյիչ
և երբեմն էլ մեծարում էր հօրեղբայր անուանելով: Ա-
մենքն էլ իրար վերաբերում էին ընկերաբար և առանձին
մի նախապատուութիւն չէին ցոյց տալիս իւրեանց պարա-
զլիին: Խօսում էին առաւօտեան կատարած գրոհման,
ապստամբութեան յաջող յառաջ գնալու և իւրեանց ապա-
գայ գործառնութիւնների մասին: Նոցանից ամեն մէկը
պարծենում էր, առաջարկում էր իւր կարծիքը և ազատօ-
րէն վէճի էր մտնում Պուզաչեվի հետ: Սոյն իսկ գինու-
րական տարօրինակ խորհրդում վճիռ կայացաւ դիմել Օրեն-
բուրգի վրայ -- յանդուգն մի քայլ, որ քիչ էր մնում կորս-

տական յաջողութիւն ունենար: Արշաւանքը պիտի սկսուէր
հետեւեալ օրը: «Դէհ, եղբայրներ, ասաց Պուզաչեվը. իրի-
կուայ քնից յառաջ մի ձգենք իմ սիրած երգը: Չուճակով,
սկսիր:» Իմ հարևանս բարակիկ ձայնով սկսեց բուրլակների
վհատական երգը և միւսները խմբովին ձայնակցեցին:

Մի աղմկիր դու, կանաչ մայր անտառ,

Մի արգելիք ինձ արի քաջորդուս

Հանգիստ մամտալ,

Թէ քնչպէս երթամ, արի քաջորդիս

վաղն առաւօտեան

Անողոք ու խիստ դատաւորի գէմ,

նոյն ինքն արքայի:

Պիտի հարցնէ ինձ թագաւոր արքան.

Աս՛ն, ա՛յ տղայ, ասա ինձ տեսնեմ,

գիւղացու տղայ,

Թէ ո՛ւմ հետ, քնչպէս էիր կողոպտում,

զողութիւն անում,

Եւ էլ շատ ընկեր ունէիր քեզ հետ:

Օ՛, ես քեզ կատեմ, մեր յոյս ապաւէն,

ուղղափառ արքայ,

Ողջ ճշմարտութիւնն, եղելութիւնը

կպատմեմ ես քեզ:

Ընկեր ես ասում, չորս հատ ես ընկեր

ունէի ինձ հետ:

Թ՛առաջինն ասես՝ գիշերն էր խաւար,

Թէ երկրորդն ասես՝ սայրասուր զանակ,

Իսկ թէ երրորդը՝ քաջարի իմ ձին,

Չորրորդ ընկերս էր պնդաձիգն աղեղ,

Հլու ծառաներս՝ պողպատեայ նետեր:

Ու կասէ մեր յոյս ուղղափառ արքան.

Ա.Ֆերիմ տղայ, գիւղացու զաւակ,

Որ թէ կողոպտել, թէ պատասխանել
կարող ես արձակ:

Այդ իսկ պատճառով, քաջորդի տղայ,
ես քեզ կ'ընծայեմ

Բարձրաբերձ ու շէն փայտակերտ մի տուն,
Որ ունի զայգ սիւն ու մի միջնասիւն:

Անկարելի է նկարագրել, թէ ինչ տպաւորութիւն թողեց ինձ վրայ կախողանի մասին յօրինուած ժողովրդական այս երգը, որ երգուում էր կախողանի վիճակուած մարդկանց բերանով: Նոցա ահեղատեսիլ դէմքերը, ներդաշնակ ձայները, այն վհատական արտայայտութիւնը, որ տալիս էին նոքա՝ առանց այն էլ ազդու խօսքերին—այս ամենը ինձ ցնցեց մի տեսակ քերթողական սարսափով:

Հիւրերը մի մի բաժակ և ս դատարկեցին, սեղանից վեր կացան ու մնաս բարով ասացին Պուզաչեվին:

Նս էլ ուզում էի հետեւել նոցա, բայց Պուզաչեվը ասաց ինձ. «Նստիր, ես քեզ հետ խօսել եմ ուզում»: Մենք մնացինք երես առ երես:

Մի քանի րոպէ տիրեց բացարձակ լռութիւն: Պուզաչեվը անթարթ նայում էր երեսինս, երբեմն ծաղրածութեան ու սրիկայութեան զարմանալի արտայայտութեամբ ձախ աչքը կիսախփելով: Վերջապէս նա ծիծաղեց, և այնպիսի անկեղծ բերկրութեամբ, որ ես էլ նրան նայելով, անգիտակցաբար ծիծաղել սկսեցի:

— Խոստովանիր, Ձերդ ազնուութիւն, լաւ վախեցանք, երբ քաջերս պարանը վիզդ անցրին: Կարծում եմ, որ երկինքը աչքիդ ոչխարի մորթու չափ երեցած կլինի: Այ՛ թէ կ'ճօճայիր միջնասեան տակ, եթէ ծառադ չլինէր: Նս քաւթառին իսկոյն ճանաչեցի: Ե՛, մտքիդ կանցնէր, Ձերդ ազնուութիւն, որ քեզ իջևան հասցնողը նոյն ինքը մեծագոր թագաւորն էր: (Այս խօսքերը ասելիս նա ծանր ու խորհրդաւոր կերպարանք ընդունեց:) Գու իմ առաջ

շատ ու շատ մեղաւոր ես, շարունակեց նա, բայց ես ներեցի քեզ քո բարեգործութեանդ համար, որովհետեւ ինձ մի օգնութիւն արիր այն ժամանակ, երբ ես ստիպուած էի թաք կենալ իմ թշնամիներից: Գեռ այդ ինչ է: Այդպէս կվարձատրեմ քեզ, երբ իմ թագաւորութիւնս ստանամ: Խոստանում ես հաւատարմութեամբ ու եռանդով ծառայել ինձ:

Սրիկայի այդ հարցը և նրա լանդգնութիւնը այն ստորիճան ծիծաղելի երևեցին ինձ, որ ես չկարողացայ չծիծաղել:

— Ի՞նչ ես ծիծաղում, յօնքերը պաստելով հարցրեց նա ինձ. թէ դու չես հաւատում, որ ես մեծ թագաւորն եմ: Պատասխանիր ուղղակի:

Ես շփոթուեցի: Թափառաշրջիկ մէկին թագաւոր ճանաչել՝ անկարող էի. այդ ինձ թւում էր մի աններելի փոքրահոգութիւն: Երեսին նրան խաբէբայ անուանել՝ ինձ կորստեան մատնել կնշանակէր, և այն քայլը, որ ես պատրաստ էի անել կախողանի տակ, ողջ բազմութեան աչքի առաջ ու զայրոյթի առաջին րոպէում, այժմ ինձ թւում էր մի անօգուտ պարծենկոտութիւն: Նս երկմտում էի: Պուզաչեվը մտալորէն սպասում էր իմ պատասխանին: Վերջապէս (մինչև այժմ էլ ինքնաբաւականութեամբ լիջում եմ այն րոպէն) պարտքի զգացումը իմ մէջ լազթահարեց մարդկային թուլութեան: Նս պատասխանեցի.

— Թող տուր, ճշմարիտը քեզ ասեմ: Գու ինքդ դատիր, կարող եմ ես քեզ թագաւոր ճանաչել: Գու խելահաս մարդ ես. դու ինքդ կհասկանայիր, որ ես խորամանկութիւն եմ անում:

— Ապա ո՞վ եմ ես քո կարծիքով:
— Աստուած գիտէ, ով ես: Բայց ով և լինիս, դու մի վտանգաւոր խաղ ես սկսել:

Պուզաչեվը մի արագ հայեացք ձգեց ինձ վրայ:

— Ուրեմն դու չես հաւատում, ասաց նա, որ ես Պետր Փետրոսովիչ թագաւորն եմ: Բարի: Բայց միթէ քաջաւորով մարդը յաջողութիւն չպէտք է ունենայ: Միթէ մի ժամանակ չթագաւորեց Գրիշկա Օտրեպելը: Ինչ կարծիք ուզում ես ունեցիր իմ մասին, բայց ինչնից մի հեռանար: Մնացածը քո ինչքդ է հարկաւոր: Ամեն քահանայ Տէր-հայր է: Չշմարիտ սրտով ու հաւատարմութեամբ ծառայիր ինձ, և ես քեզ Ֆելլգմարշալ ու իշխան կգործնեմ: Ի՞նչ ես ասում:

— Ո՛չ, հաստատ ձայնով պատասխանեցի ես: Ես ազնուական եմ ծնուած և հաւատարմութեան երգումն եմ տուել թագուհի-կայսրուհուն. քեզ ծառայել չեմ կարող: Եթէ դու ինձ չիրաւի բարիք ես ցանկանում, թո՛ղ ինձ գնամ Օրենբուրգ:

Պուգաչեվը մտածութեան մէջ ընկաւ:

— Իսկ եթէ քեզ արձակեմ, ասաց նա. խօսք տալիս ես գոնէ չծառայել իմ հակառակորդներին:

— Ի՞նչպէս կարող եմ ես քեզ այդպիսի խօսք տալ, պատասխանեցի ես: Ի՞նչ ինքդ գիտես, որ ես ազատ մարդ չեմ: Կհրամայեն քո դէմ գալ, պիտի դամ. ի՞նչ կարող եմ անել: Ի՞նչ ինքդ այժմ զօրագլուխ ես և քոյիններից հնազանդութիւն ես պահանջում: Ինչի՞ նման կլինի, եթէ ես հրաժարուիմ առայուլթիւնից այն ժամանակ, երբ իմ ծառայութիւնը հարկաւոր լինի: Կեսնքս քո ձեռքին է. թէ բաց թողնես ինձ, շնորհակալ կլինիմ, իսկ եթէ հրամայես սպանել, Աստուած լինի դատաւորդ: Ես քեզ ճշմարտութիւնն ասացի:

Իմ անկեղծութիւնը զարմացրեց Պուգաչեվին:

— Թող այդպէս լինի, ասաց նա, ուսիս խփելով: Պատժել-պատժել, ներել-ներել: Գնա՛, ուր ուզում ես, ու արա՛, ինչ որ կամենում ես: Վաղը եկ ինձ մնաս բարով ասելու, իսկ հիմալ գնա քնիր: Իմ քունն էլ արդէն տա-

նում է:

Ես բաժանուեցի Պուգաչեվից ու դուրս եկայ փողոց: Յրտաշունչ ու հանդարտիկ գիշեր էր: Պայծառ փայլում էին լուսինն և աստղերը և լուսաւորում էին հրապարակն ու կախաղանը: Մութն ու հանգստութիւնը տիրում էին բերդում: Միայն օղետան մէջ վառւում էր կրակը և լլոււում էր ուշացած օղեմոլների աղմուկը: Աչքս ձգեցի քահանայի տան վրայ: Դռներն ու փեղկերը ծածկուած էին: Ըստ երևոյթին, այնտեղ հանգստութիւն էր տիրում:

Ես գնացի իմ բնակարանը, որտեղ Սավելիչը անհանգստութեամբ սպասում էր ինձ: Իմ ազատութեան լուրը անասելի կերպով ուրախացրեց նրան:

— Փնօք քեզ, ամենակարող Աստուած, ասաց նա՛, երեսը խաչակնքելով: Լոյսը բացուելու պէս կերթանք, ուր որ Աստուած յաջողէ: Ես քեզ համար քիչ ուտելու բան եմ պատրաստել. կեր ու հանգիստ քնիր:

Ես հետևեցի նրա խորհրդին և ախորժակով ընթրելուց յետոյ, հոգեպէս ու ֆիզիկապէս յողնած լինելով, պառկեցի չոր յատակի վրայ ու իսկոյն քնեցի:



I X

Բ Ը Փ Ը Ն Ո Ւ Մ Ն

Քաղցր էր ինձ, ո՛վ գեղեցիկուհիդ,
Քեզ մօտենալը քեզ ճանաչել:
Դառն է, դառն է, ինչպէս կեանքից,
Դառն է քեզնից բաժանուել:

Խերտուլ

Առաւօտեան վաղ ինձ զարթեցրեց թմբուկի ձայնը: Ես գնացի ժողովակենտրոնը: Այնտեղ Պուգաչեվի խաժամութ զօրքը կարգ էր կանգնում կախաղանի մօտ, որի վրայ կախուած դեռ մնում էին, երեկուայ զոհերը: Կողակները ձիաւորուած էին, զինուորները կանգնած էին հրացանները ձեռքերին: Կրօշակները հողմահար տարուբերում էին: Մի քանի թնդանօթներ, որոնց մէջ էր նաև մերը, դրուած էին մարտասայլերի վրայ: Բոլոր բնակիչները նոյն տեղ հաւաքուած, սպասում էին ինքնակոչին: Բերդապետի տան պատշգամբի մօտ մի կողակ երասանակից բռնած պահում էր կիրգիղական գեղեցիկ ու սպիտակ մի երիվար: Ես աչքերով որոնում էի բերդապետուհու դիակը. նա հեռացուած էր մի կողմ ու խաիրով ծածկուած: Վերջապէս նախասենեակից դուրս եկաւ Պուգաչեվը: Ժողովուրդը վեր առաւ գտակները: Պուգաչեվը կանգ առաւ պատշգամբի վրայ ու բոլորին էլ բարևեց: Մեծաւորներից մէկը տուեց

նրան սև փողերով լի մի պարկ: Նա սկսեց բռով ցրուել փողը ամբօխի մէջ, որը բղաւոցով ու աղմուկով վրայ էր վազում ժողովելու: Այս շփոթի ու իրարանցումի մէջ շատերը վերքեր ստացան: Պուգաչեվի գլխաւոր համախոհները շրջապատեցին նրան: Նոցա մէջ էր նաև Եվաբրինը: Մեր հայեացքները հանդիպեցին: Իմ հայեացքի մէջ նա կարող էր արհամարանք կարգալ: Նա շուռ տուեց երեսը, որի վրայ պարզ երևում էր ճշմարիտ չարակամութեան և կեղծպատիր ծաղրի արտայայտութիւն: Պուգաչեվը ամբօխի մէջ ինձ տեսնելով թեթեւ բարևեց, կանչեց իւր մօտ ու ասաց. «Իսկոյն ևեթ գնա Օրենբուրգ և իմ կողմից յայտնիր նահանգապետին ու բոլոր գեներալներին, որ պատրաստուին մի շաբաթից յետոյ ինձ ընդունելու: Խորհուրդ տուր նոցա որդիական սիրով ու հնազանդութեամբ ինձ դիմաւորել, ապա թէ ոչ՝ դաժան մահը կլինի նոցա բաժինը: Բարի ճանապարհ, Զերդ ազնուութիւն:» Յետոյ նա դարձաւ դէպի ժողովուրդը ու Եվաբրինին ցոյց տալով ասաց: «Ահա, իմ որդիք, ձեզ նոր հրամանատար. հնազանդ եղէք նրան: Նա իմ առաջ պատասխանատու է ձեր ու բերդի ապահովութեան համար:» Սարսափով լսեցի ես այս խօսքերը: Եվաբրինը նշանակում էր բերդի հրամանատար, Մարիա Իվանովնան մնում էր նրա իշխանութեան տակ: Աստուած իմ, քնչ կլինի նրա վիճակը:

Պուգաչեվը իջաւ պատշգամբի վրայից: Մօտ բերին նրա երիվարը: Նա արագութեամբ ցատկեց թամբի վրայ, առանց սպասելու կողակներին, որոնք կամենում էին նստեցնել նրան:

Այդ բոպէին տեսնում եմ, ամբօխի միջից դուրս է գալիս իմ Սավելիչը, մօտենում է Պուգաչեվին ու տալիս է նրան մի թուղթ: Ես չէի կարողանում ինձ պատկերացնել, թէ ինչ դուրս կգալ դրանից:

— Ի՞նչ բան է այս, ծանրամեծար հարցրեց Պուգաչեվը:

— Կարգած, այն ժամանակ կ'բարեհաճիս իմանալ, պատասխանեց Սավելիչը:

Պուգաչեվը առաւ թուղթը և երկար ժամանակ գննում էր նրան խորաքննին դէմքով:

— Ի՞նչ խրթին ես գրում, ասաց նա վերջապէս: Մեր պայծառ աչքերը այստեղ ոչինչ չեն կարողանում ջոկել: Ո՞ւր է իմ գլխաւոր քարտուղարը:

Երիտասարդ մի տղայ, կապրալի նշանազգեստը հագին, շուտափոյթ վազեց Պուգաչեվի մօտ: «Ա՛ռ, բարձր կարգած» թուղթը նրան տալով ասաց ինքնակոչը: Ես չափազանց հետաքրքրուում էի իմանալ, թէ դաստիարակիս խելքին թնչ էր փչել գրել Պուգաչեվին:

Գլխաւոր քարտուղարը սկսեց կապելով բարձրաձայն կարգալ հետևեալը:

«Երկու խալաթ, մէկը միակալից, միւսը մետաքսից, վեց ըուբլի արժողութեամբ:

— Ի՞նչ կնշանակէ այդ, դէմքը խոժոռելով հարցրեց Պուգաչեվը:

— Հրամայիր շարունակութիւնը կարգալ, պատասխանեց Սավելիչը հանդարտութեամբ:

Գլխաւոր քարտուղարը շարունակեց.

«Մի նշանազգեստ, բարակ կանաչ մահուդից — եօթը ըուբլի:»

«Մի անդրվարտիք, սպիտակ մահուդից — հինգ ըուբլի:»

«Մի արկղիկ, թէյի սարք ու կարգով — երկու ըուբլի ու կէս:»

«Ճասն և երկու հստ հոլլանդական քաթանի շապիկներ՝ թեզանիքներով — տասն ըուբլի...»

— Ի՞նչ է դուրս տալիս, ընդմիջեց Պուգաչեվը. թնչ թէյի սարք ու կարգ, թնչ թեզանիքով վարտիքներ: Ինձ թնչ վերաբերեալ բաներ են դոքա:

Սավելիչը կոկորդային մի ձայն արձակեց ու սկսեց իւր

գրածը պարզաբանել.

— Դա, ողորմած տէր, ցուցակն է իմ տիրոջ ստացուածքի, որ կողոպտեցին չարագործները...

— Ի՞նչ չարագործներ, ահեղաձայն կտրեց Պուգաչեվը:

— Մեղալ Աստծոյ, բերնիցս յանկարծ թռաւ: Չարագործը, չարագործ չէ, այլ քո մարդիկդ, տները քիչ տակն ու վրայ արին ու ձեռքերն ընկածը տարան: Մի բարկանար. ձին չորս ոտք ունի, բայց էլի սայլթաքում է: Հրամայիր կարգալ մինչև վերջը:

— Կարգա վերջացրու, ասաց Պուգաչեվը: Քարտուղարը շարունակեց.

«Մի վերմակ չից և մի հստ էլ կերպասից, բամբակի աստառով — չորս ըուբլի:»

«Մի մուշտակ աղուէսի մորթուց, կարմիր բատին երեսով — քառասուն ըուբլի:»

«Այլ և նապաստակի մորթուց մի մուշտակ, ընծայուած քոյին մեծարգութեանը իջևանատան մէջ — տասն և հինգ ըուբլի:»

— Ա՛յդ ինչ, գոչեց Պուգաչեվը, հրացայտ աչքերը փայլատակելով:

Խոստովանում եմ, որ ես սաստիկ վախեցայ իմ դաստիարակի համար: Նա այն է, էլի ուզում էր բացատրութիւններ սկսել, բայց Պուգաչեվը ընդմիջեց նրան. «Ի՞նչ պէս ես համարձակուում այդպիսի չնչին բաներով ինձ դիմել, գոչեց նա, քարտուղարի ձեռքից թուղթը քաշելով ու Սավելիչի երեսին շարտելով: Յիմար ծերուկ, կողոպտել են նոցա. տեսար դու բանը: Գուր գեռ պէտք է, անմիտ քաւթառ, ինձ ու իմ քաջերի համար աղօթք անես Աստծոյ, որ քո տիրոջ հետ չէք կախուած այստեղ ինձ անհնազանդութիւն ցոյց տուողների հետ միասին... Նապաստակի մորթուց մուշտակ... Ես քեզ ցոյց կտամ նապաստակի մուշտակ: Խսկոյն ևեթ կհրամայեմ ուղ ող կա-

լով՝ ասաց.

— Զերդ ազնուութիւն, մեր հայր-թագաւ որ ընծայում է Զեզ մի ձի և իւր սեփական մուշտակը (քամբին կապած էր ոչխարի մորթուց մի մուշտակ): Նաև... արտասանեց նա կակազելով, նաև ընծայում է Զեզ... 50 կոպէկ փող... բայց ես կորցրի ճանապարհին. ներեցէք ինձ մեծահոգութեամբ:

Սովելիչը ծուռ-ծուռ նայեց նրան ու ասաց.

— Ճանապարհին կորցրի՛: Իսկ այդ թնչ է ճընկճընկում անութիդ տակ, անխիղճ:

— Անութիս տակ ինչ է ճընկճընկում, կրկնեց ուրետդ-նիկը՝ ամենեին չչոփոթուելով: Սատճուց վախեցիր, այժմ ծերուկ, այդ սանձն է ճընկճընկում և ոչ 50 կոպէկը:

— Լաւ, ասացի ես, վէճը ընդմիջելով. շնորհակալութիւնս յայտնիր նրան, ով որ ուղարկել է քեզ, իսկ կորցրածդ 50 կոպէկը աշխատիր ճանապարհին գտնել և վերցրուք քեզ ընծայ:

— Շատ շնորհակալ եմ, Զերդ ազնուութիւն, ասաց նա՝ ձին յետ դարձնելով: Զեզ համար յուշտեան պէտք է աղօթեմ Սատճու:

Այս խօսքերն ասելով, նա արշաւեց, մի ձեռքով անութը բռնելով, և մի րոպէ յետոյ անյայտացաւ:

Ես հազայ մուշտակը և նստայ ձիու վրայ, գաւազին նստեցնելով նաև Սովելիչին: «Տեսնում ես, պարոն, ասաց ծերուկը, որ սրիկային խնդիր տալս իզուր չանցաւ: Գող է, բայց էլի խիղճը տանջել է: Թէև բաշկիրական անճոռնի ու երկարավիզ ձին, ու ոչխարի մորթու մուշտակը կէսն էլ չարժեն այն բոլորի, ինչ որ սրիկաները մեզնից գողացան և ինչ որ դու նրան ընծայել բարեհաճեցիր, բայց էլի բան է. կատարած շնից մի մազ քաշելն էլ օգուտ է:

X

ԲԵՂԵՔԻ ՊԱՇԵՐՈՒՄԸ

Գաշտերն ու լեռներ տիրապետելով,
Որճուի հայկաջբով բարձրից զետում էր
Նա այն քաղաքը, և հրամայեց
Բանակի ետև թմբակներ շինել,
Ու շանթարդները այնտեղ պահելով,
Գիշերայն բերել հանդէպ քաղաքի:

Խեբուհով.

Սրենբուրգի մօտ մենք տեսանք մի խումբ կոճղակիր կալանաւորներ, սափրած գլուխներով ու դահճի ունելիքով ալլանդակուած երեսներով: Բերդապահ հին զինուորների հսկողութեան տակ նոքա աշխատում էին ամբութիւնների մօտ: Մի քանիսը սալակներով կրում էին խրամատների մէջ լցուած աղտոյութիւնքը, միւսները բահերով փորում էին զետիներ: Ամբարտակի վրայ որմնադիրներն աղիւս էին կրում և կարկատում էին քաղաքի պարիսպը: Պահապանները դռների մօտ կանգնեցրին մեզ ու անցազիր պահանջեցին: Հէնց որ սերժանտը լսեց, որ ես գալիս եմ Բելոգորսկայա բերդից, խկոյն տարաւ ինձ գետերալի տուն: Գետերալը իւր պարտիզումն էր: Նա զննում էր աշնան ազդեցութեամբ մերկացած խնձորենիները և ծերուկի մի

պիտն երեսին ասաց. «Պարոն սլրապորշիկ, զինուորական խորհրդների մէջ առաջին ձայները սովորաբար տրուում են յօգուտ յարձակողական շարժման այդ է օրինական կարգը: Շարունակենք ձայներ հաւաքելը: Պարոն կոլլեժսկիյ խորհրդական, ասացէք մեզ Ձեր կարծիքը:»

Գիպակեայ բաճկոնով ծերուկը շտապով դատարկեց իւր ըոմախառն թէյի երրորդ թասը՝ ու պատասխանեց գեներալին.

— Ես կարծում եմ, Ձերդ գերազանցութիւն, որ ոչ յարձակողական միջոցով պէտք է գործել և ոչ պաշտպանողական:

— Այդ քնչպէս, պարոն կոլլեժսկիյ խորհրդական, բացականչեց զարմացած գեներալը. զինուորական արուեստը ուրիշ միջոցներ չէ ցոյց տալիս. յարձակողական կամ պաշտպանողական դիրքը. . .»

— Ձերդ գերազանցութիւն, գործեցէք կաշտառուական միջոցով:

— Հն, հն, հն. Ձեր կարծիքը շատ խելացի է: Կաշտառուական միջոցները զինուորական արուեստով թող տրուում են, և մենք կօգտուենք Ձեր խորհրդով: Այդ դատարկապարտ սրիկայի գլուխը կարելի է... 70, մինչև անգամ... 100 ըուբլիի գնահատել... գաղտնի գումարից:

— Եւ այն ժամանակ, վրայ բերեց մաքսատան վերատեսուչը, թող ես կիրգիգի ոչխար լինիմ և ոչ կոլլեժսկիյ խորհրդական, եթէ այդ աւագակները ձեռք ու ոտքը կապած չլանձնեն մեզ իւրեանց ատամանին:

— Այդ մասին մենք դեռ էլի կմտածենք ու կխօսենք, պատասխանեց գեներալը: Սակայն այնուամենայնիւ հարկաւոր է պատերազմական միջոցներ էլ ձեռք առնել: Պարոնայք, տուէք ձեր ձայները օրինական կարգով:

Բոլոր կարծիքները դուրս եկան հակառակ իմ յայտնածին: Բոլոր աստիճանաւորները մէջ էին բերում զօրքերի

անյուսալ'ութիւնը, յաջողութեան անհաւաստի լինելը, ըգգուշութեան կարևորութիւնը և այլ նոյնանման պատճառներ: Բոլորն էլ ենթադրում էին, որ աւելի լաւ է խոհեմութեամբ քարեայ ամուր պարսպի ետև ու թնդանօթների պաշտպանութեան տակ մնալ, քան թէ բաց դաշտի մէջ գէնքի բաղբը փորձել: Վերջապէս, բոլորի կարծիքը լսելուց յետոյ, գեներալը թափ աուեց իւր ծխամորճի մոխիրը ու արտասանեց հետևեալ խօսքերը.

«Մեծարգոյ պարոնայք իմ, պէտք է յայտնեմ ձեզ, որ ես իմ կողմից բոլորովին համաձայն եմ պարոն սլրապորշիկի յայտնած կարծիքին, որովհետև այդ կարծիքը հիմնուած է առողջամիտ զինուորական արուեստի կանոնների վրայ, որոնք յարձակողական շարժումները միշտ նախադասում են պաշտպանողական շարժումներից:»

Այստեղ նա կանգ առաւ ու սկսեց լցնել ծխամորճը: Իմ ինքնասիրութիւնս բարձրացնում էր իւր գլուխը: Խրոխտաբար եի նայում էի աստիճանաւորների վրայ, որոնք անբաւական ու անհանգիստ գէմքերով շրջնում էին իրար մէջ:

«Բայց, յարգոյ պարոնայք իմ, շալունակեց գեներալը, բերանից խօրը ոգոցի հետ դուրս թողնելով նաև ծխախոտի թանձր ոլորը. ես չեմ համարձակուում ինձ վրայ առնել մի մեծ պատասխանատուութիւն, երբ խնդիրը՝ նորին Կայսերական Մեծութեան, իմ Ամենօրոյմած Թագուհու ինձ յանձնուած գաւառների ապահովութեանն է վերաբերում: Եւ այսպէս՝ ես համաձայնում եմ ձայների մեծամասնութեան վճռի հետ, որ աւելի խելացի ու անվտանգ է քաղաքի մէջ սպասել պաշարման, իսկ թշնամու յարձակումները թնդանօթներով և (եթէ միայն կարելի եղաւ) քաղաքից դուրս գալով յետ մղել:»

Այժմ էլ աստիճանաւորները հեգնօրէն ինձ նայեցին: Խորհուրդը ցրուեց: Ես չէի կարողանում չցաւել յարգոյ

զինուորականի թուլութեան վրայ, որ հակառակ իւր սեփական համոզմունքին, վճռեց հեռեւել անգէտ ու անփորձ մարդկանց կարծիքներին:

Սոյն նշանաւոր խորհրդից մի քանի օր յետոյ մենք լսեցինք, որ Պուգաչեվը, կատարելով իւր տուած խոստումը, մօտենում է Օրենբուրգին: Քաղաքի պարսպի բարձրութեան վրայից ես տեսնում էի խռովարների զօրքը: Ինձ այնպէս էր թւում, թէ զօրքի թիւը, իմ տեսած վերջին գլուհումից յետոյ, տասնապատկուել էր: Նրա հետ կային նաև թնդանօթներ՝ Պուգաչեվի արգէն տիրապետած բերդերից առնուած: Խորհրդի վճիռը միտ բերելով, ես նախատեսում էի երկարաժամանակեայ բանդարկութիւն Օրենբուրգի պարիսպների մէջ, և քիչ էր մնում լաց լինէի գայլոյթից:

Չեմ ուզում նկարագրել Օրենբուրգի պաշարումը, որ աւելի պատմութեան է վերաբերում, քան թէ ընտանեկան չիշտակագրի: Կարճ կերպով միայն ասեմ, որ սոյն պաշարումը, տեղական վարչութեան անզգուշութեան պատճառով, կորստաբեր եղաւ բնակիչների համար, որոնք ենթարկուեցին սովի ու այլ ամենատեսակ թշուառութիւնների: Հեշտ է երևակայելը, որ Օրենբուրգի մէջ կեանքն անտանելի էր: Ամենքը վհատած սպասում էին իւրեանց վիճակի որոշման, ամենքն էլ տանջուում էին թանկութեան պատճառով, որ չիրաւի սարսափելի էր: Բնակիչներն արգէն ընտելացել էին ռումբերի՝ իւրեանց տան բակերը թռչելուն, մինչև անգամ Պուգաչեվի զրոհումներն արգէն չէին գրաւում ընդհանուր հետաքրքրութիւն: Ես մեռնում էի ձանձրոյթից: Օրերն անցնում էին: Բելոգորսկայա բերդից նամակ չէի ստանում: Բոլոր ճանապարհները կտրուած էին: Մարիա Իվանովնայից անջատ մնալս ինձ անտանելի էր դառնում: Նրա վիճակի անորոշութիւնը տանջում էր ինձ: Միմիակ մխիթարութիւնս ձի նստելն էր: Ի շնորհս

Պուգաչեվի, ես ունէի մի լաւ ձի, որի հետ բաժանում էի աղքատիկ կերակուրս և որի վրայ հեծած գնում էի քաղաքից դուրս, Պուգաչեվի ձիաւորների հետ հրահրուելու (перестрѣливаться): Այս հրահրոցների մէջ առաւելութիւնը սովորաբար կուշտ, հարբած ու քաջածի չարագործների կողմն էր: Քաղաքի ուժասպառ այրուձին չէր կարողանում նոցա դէմ դնել: Երբեմն դաշտ էր դուրս գալիս նաև մեր սովալլուկ հետևակազօրը, բայց խորանիստ ձիւնը արգելում էր նրան ցրուած ձիաւորների դէմ յաջողութեամբ գործելու: Թնդանօթները իզուր տեղը որոտում էին ամբարտակների բարձրութիւնից. դաշտում նոքա խրուում էին ձեան մէջ և, ձիերի հիւժման պատճառով, հնար չէր լինում նոցա լառաջ տանել: Ահա այս էր մեր պատերազմական գործողութիւնների պատկերը: Ահա թէ, Օրենբուրգի աստիճանաւորների կարծիքով, ինչ կնշանակէր զգուշութիւն ու խոհեմութիւն:

Մի անգամ, երբ մեզ, այսպէս թէ այնպէս, յաջողուեց բաւական բազմութիւ մի ամբոխ ցրուել ու քշել, ես հասայ յետ մնացած մի կողակի վրայ: Ես արգէն պատրաստուում էի տաճկական սրովս հարուածել նրան, երբ նա յանկարծ գզակը հանեց ու գոչեց. «Բարով, Պետր Անգրեյիչ. ինչպէս է Ձեր առողջութիւնը:»

Ես նայեցի ու մեծ ուրախութեամբ ճանաչեցի մեր ուրեագնիկին:

— Բարով, Մաքսիմիչ, ասացի ես. վաղուց է Բելոգորսկայա բերդից դուրս գալը:

— Վաղուց չէ, իմ պարոն Պետր Անգրեյիչ. երեկ այնտեղից վերագարձայ: Նամակ ունիմ Ձեզ վրայ:

— Ո՞ւր է, գոչեցի ես բորբոքուած.

— Մօտս է, պատասխանեց Մաքսիմիչը՝ ձեռքը անութը տանելով: Պալաշային խոստացայ ինչպէս և իցէ հասցնել Ձեզ:

Նա տուէց ինձ ծալած մի թուղթ ու իսկոյն արշա-
ւեց: Ես բացի նամակը ու սարսուելով կարգացի հետևեալ
տողերը:

«Աստծոյ անհասելի կամքով ես յանկարծ զրկուեցի հօ-
րից և մօրից: Աշխարհիս վրայ չունիմ այլ ևս ոչ ազգա-
կան և ոչ պաշտպան: Դիմում եմ Զեզ գիտնալով, որ Դուք
միշտ բարի էք ցանկացել ինձ և որ Դուք պատրաստ էք ամեն
մարդու օգնելու: Աղաչում եմ Աստծուց, որ այս նամակս մի
կերպով Զեզ հասնի: Մաքսիմիչը խոստացաւ հասցնել Զեզ:
Պալաշան լսել է Մաքսիմիչից, որ նա շատ անգամ հեռուից
տեսնում է Զեզ քաղաքից դուրս յսրձակմունք գործելիս և
որ Դուք բոլորովին չէք պահպանում Զեզ և չէք մտածում
նոյա մասին, որոնք արտասուքն աչքերին Զեզ համար ա-
ղօթք են անում Աստծոյ: Ես երկար ժամանակ հիւանդ
էի, իսկ երբ առողջացայ, Ալեքսէյ Իվանիչը, որ իմ հան-
գուցեալ հօրս տեղ հրամանատար է կարգուած, հայր Գե-
րասիմին, Պուգաչեվի անունով վախեցնելով, ստիպեց յանձ-
նել ինձ իրան: Ես պահապաններն հսկողութեան տակ ապ-
րում եմ մեր տանը: Ալեքսէյ Իվանիչը ստիպում է ինձ
իրան կնուլթեան գնալ: Նա ասում է, որ ազատել է իմ
կեանքս, ծածկելով այն խաբէութիւնը, որ գործ էր գրել
Ակուլինա Պանֆիլովնան, չարագործների մօտ ինձ իւր եղ-
բօր աղջիկը անուանելով: Իսկ ինձ համար աւելի հեշտ
կլինէր մեռնել, քան թէ կին դառնալ մի այնպիսի մարդու,
ինչպէս Ալեքսէյ Իվանիչը: Նա ինձ հետ վարուում է մեծ
խստութեամբ և եթէ միտքս չփոխեմ ու չհամաձայնիմ,
սպառնում է ինձ տանել չարագործի բանակը, ասելով որ
իմ գլխիս էլ կգայ այն, ինչ եկաւ Լիզավետա Խարլովնայի
գլխին: Ես էլ խնդրեցի Ալեքսէյ Իվանիչին ինձ ժամանակ
տալ մտածելու: Նա համաձայնեց երեք օր էլ սպասել,
իսկ եթէ երեք օրից յետոյ չամուսնանամ նրա հետ, էլ այնու-
հետև ինձ չպիտի խնայէ: Պէտքը Անդրէյիչ, Դուք էք

մնացել միակ պաշտպանս: Գլուխ քաշեցէք խղճալուս հա-
մար: Աղաչեցէք գեներալին և բոլոր հրամանատարներին մեզ
շուտով օգնութիւն հասցնելու և ինքներդ էլ եկէք, եթէ
կարող էք: Մնամ Զեր խոնարհ ծառայ և խղճալի որբ՝

Մարիա Միրօնովա:»

Նամակը կարգալուց յետոյ, քիչ էր մնում խելքս թըռ-
ցնէի: Ես իսկոյն դիմեցի քաղաք, անգթաբար խթահարելով
խեղճ ձիուս: Ճանապարհին ինչ միջոցներ ասես, որ չէին
անցնում մտքովս, թշուառ աղջկան ազատելու համար, բայց
ոչ մի հաստատուն միջոց չգտայ: Քաղաք հասնելով, ես
ուղղակի դիմեցի գեներալի տունը և հապճեպ ներս վազե-
ցի նրա սենեակը: Գեներալը սենեակի մէջ լետ ու յառաջ
էր գնում և ծխում էր իւր կաւեայ ծխամոլճը: Ինձ որ
տեսաւ, նա կանգ առաւ: Երևի իմ կերպարանքը զարմա-
ցրեց նրան: Հոգատարութեամբ նա հարցրեց իմ շուտափոյթ
գալու պատճառը:

— Զերդ գերազանցութիւն, ասացի նրան. դիմում
եմ Զեզ որպէս հարազատ հօրս: Ի սէր Աստծոյ, մի մեր-
ժէք խնդիրս, որը իմ ողջ կեանքի երջանկութեան մա-
սին է:

— Ի՞նչ կայ, որդի, հարցրեց զարմացած ծերունին. թնչ
կարող եմ անել քեզ համար, ասան:

— Զերդ գերազանցութիւն. թոյլ տուէք ինձ վեր-
ցնել զինուորների մի վաշտ և 150 կողակ և գնալ Բե-
լոգօրսկայա բերդից հալածել ապստամբներին:

Գեներալը անթարթ նայում էր ինձ վրայ, երևի են-
թադրելով, որ ես խելագարուել եմ (այդ բանում նա հա-
մարեա չէր էլ սխալուում):

— Այդ թնչպէս: Բելոգօրսկայա բերդից հալածել ապ-
ստամբներին, ասաց նա վերջապէս:

— Յաջողութեան մասին ես երաշխաւոր եմ, եռանդագին
պատասխանեցի ես. միայն թոյլ տուէք ինձ գնալ:

— Ո՛չ, երիտասարդ դու, ասաց նա գլուխը շարժելով. այդպիսի մեծ տարածութեան վրայ թշնամին՝ հեշտութեամբ կկարողանայ կտրել կոմմունիկացիան (հաղորդակցութիւն) ռազմական գլխաւոր կենտրոնի հետ և ասնել Ձեր վրայ կատարեալ յաղթութիւն: Կտրուած կոմմունիկացիան...

Ես վախեցայ, տեսնելով որ նա յափշտակվում է զինուորական դատողութիւնների մէջ ընկնելով և շտապեցի ընդմիջել նրան:

— Կապիտան Միրոնովի աղջիկը ինձ նամակ է գրել. ասացի ես. նա օգնութիւն է խնդրում: Շվաբրինը ստիպում է նրան ամուսնանալ իւր հետ:

— Մթթէ: Օ՛, այդ Շվաբրինը ամենամեծ սրիկայ է, և եթէ ձեռքս ընկնի, կհրամայեմ դատել նրան 24 ժամում և մենք նրան հրացանի կռուներք բերդի թմբի վրայ: Բայց առ այժմ հարկաւոր է համբերութիւն ունենալ:

— Համբերութիւն ունենալ, գլուխս կորցրած գոչեցի ես. իսկ նոյն միջոցին նա կամուսնանայ Մարիա Իվանովնայի հետ:

— Օ՛, վրայ բերեց գեներալը. այդ գեռ մի դժբաղդութիւն չէ. առ այժմ նրա համար աւելի լաւ է Շվաբրինի կինը լինել. նա կարող է այժմ նրան պաշտպանել, իսկ երբ նրան հրացանի բռնէնք, այն ժամանակ Մարիա Իվանովնայի համար, Աստծով, փեսացուներ կգտնուին: Սիրուն այրիները կոյս չեն մնալ... այսինքն ես ուզում էի ասել, որ այրի կինը աւելի շուտ կգտնի իւր համար ամուսին, քան այժիկը:

Աւելի շուտ մեռնել կհամաձայնիմ, կատաղած ասացի ես, քանթէ զիջանել նրան Շվաբրինին:

— Պահ, պահ, պահ, ասաց ծերունին: Հիմա հասկանում եմ. դու երևի սիրահարուած ես Մարիա Իվանովնայի վրայ: Այդ ուրիշ բան է: Խեղճ աղայ: Բայց այնուամենայնիւ էս ոչ մի կերպով չեմ կարող տալ քեզ մի վաշտ զի-

նուոր և 150 կողակ: Այդ մի անխոհեմ արշաւանք կլինէր: Ես չեմ կարող նրա պատասխանատուութիւնը ինձ վրայ առնել:

Ես քաջ ձգեցի գլուխս: Յուսահատութիւնը տիրեց ինձ: Յանկարծ գլխիս մէջ մի միտք ծագեց: Թէ ինչ էր այդ միտքը, ընթերցողը կհմանայ հետեւեալ գլխից, ինչպէս ասում են հին վիպասանները:

XI

Նոյն ժամանակին աւելը կուշտ էր, թէև է բնէ կատաղի բարբով. «ինչու շտոր բերել դու իմ անձաւը» Հարցրեց նա սիրով:

Ա. Առհարու:

Ես թողի գեներալին և շտապեցի իմ բնակարանը: Սովետիչը դիմաւորեց ինձ իւր սովորական յորդորով:

«Արժէ գլուխ դնել այդ արբեցող աւազակների հետ. ազնուականի յարմար բան է դա: Աստուած մի արասցէ, մի վտանգ կպատահի: Ո՛ւր է, թէ տաճկի կամ շվեդացու գէմ գնայիր: Իսկ այժմ, մեղք էլ է անունները տալ:»

Ես կտրեցի նրա խօսքը, հարցնելով թէ ո՞րքան է ունեցած-չունեցած փողս: «Քեզ բաւական կլինի, գոհ գէմքով պատասխանեց նա: Սրիկաները որքան էլ որ ամեն-

ինչ տակն ու վրայ արին, այնուամենայնիւ ես կարողացայ էլի թագցնել:» Այս ասելով, նա գրպանից հանեց երկար մի քսակ արծաթով լի:

— Դէհ, Սավելիչ, ասացի ես նրան. տուր ինձ այժմ գրա կէտը, իսկ մնացածը քեզ մնայ: Ես գնում եմ Բելո-գորսկայա բերդը:

— Տէր իմ, Պետր Անդրեյիչ, դողդոջուն ձայնով սասց իմ բարի դաստիարակս: Աստծուց վախեցիր. քնչպէս պէտք է այժմ ճանապարհ գնաս, երբ բոլոր անց ու դարձը բռնուած է աւազակներով: Գոնէ ծնողներիդ խղճա, եթէ քեզ չես խղճում: Ո՛ւր ես գնում, ինչու ես գնում: Սպասիր մի քիչ, զօրքերը կգան, կբռնեն սրիկաններին, այն ժամանակ գնա, ուր ուզում ես:

Բայց իմ գիտաւորութիւնն արդէն հաստատապէս որոշուած էր:

— Հիմայ էլ ուշ է դատողութիւններ անել, պատասխանեցի ես ծերունուն: Ես պէտք է գնամ, ես չեմ կարող չգնայ: Մի վշտանար, Սավելիչ, Աստուած ողորմած է, գուցէ էլի տեսնուինք: Տես, որ չնեղուիս ու ժլատութիւն չանես: Քեզ հարկաւոր եղածը գնիր, թէկուզ երեք-պատիկ թանկ լինի: Այդ փողերը ես քեզ եմ ընծայում: Եթէ երեք օրից յետոյ չվերադառնամ...

— Այդ քնչ ես ասում, պարոն, խօսքս կտրեց Սավելիչը: Ես քեզ միայնակ թողնեմ: Այդ դու երազումդ էլ չես տեսնիր: Եթէ դու արդէն վճռել ես գնալ, ես, թէև հետի, կգամ քո ետևից և քեզ մենակ չեմ թողնիր: Ուզում ես որ առանց քեզ նստեմ այս քարեայ պարսպի ետևը: Ի՞նչ, միթէ խելքս կորցրել եմ: Ինչպէս կամենաս, պարոն, բայց ես քեզնից չեմ բաժանուիր:

Ես գիտէի, որ Սավելիչի հետ վիճելն իզուր էր, ուստի թոյլ տուի նրան պատրաստուիլ ճանապարհի համար: Կէս ժամից յետոյ ես հեծայ իմ քաջիկ ձին, իսկ Սավելիչը իւր

նիհար ու կաղ ձիուկը, որը, քաղաքի բնակիչներից մէկը այլ ևս կերակրելու միջոց չունենալով, ձրի տուեց նրան: Մենք հասանք քաղաքի դռներին: Պահապանները թոյլ տուին անցնելու և մենք դուրս եկանք Օրենբուրգից:

Մութը տարածոււմ էր: Իմ ճանապարհը ընկնում էր Բերդսկիյ աւանի մօտով, որ Պուզաչեվի օթեւանն էր: Ուղիղ ճանապարհը ծածկուած—կորած էր ձիւնի տակ, բայց ողջ դաշտավայրում երևում էին ձիու ոտքերի ամեն օր նորոգուող հետքերը: Ես յառաջ էի գնում սրընթաց: Սավելիչը հեռուից հազիւ էր ինձ հեռեւում և ըստէ առ ըստէ գոչում էր. «Կամաց գնա՛, պարոն, ի սէր Աստծոյ, կամաց: Իմ անիծեալ ձիուկս չէ կարողանում գալ քո երկարատն դիւահարի հետ: Դեռ ո՛ւր էր, թէ խնջոյքի գնալիս լինէինք, իս՛կ այժմ դու այն տես, որ կայնի բաժին չլինինք: Պե՛տրը Անդրեյիչ... Պետր Անդրեյիչ: Տէր Ամենակարող, մի վտանգ կհանդիպի իշխանազուն պատանուն:»

Շուտով մեր առաջ փայլփլեցին Բերդսկիյ աւանի կրակները: Մենք մօտեցանք քաղաքի բնական ամրութիւնները կազմող փոսերին: Սավելիչը իւր գանգատագին աղաչանքները չընդհատելով, յետ չէր մնում ինձնից: Ես յօյս ունէի բարեյաջող կերպով անցնել աւանի մօտով, երբ մթութեան մէջ, ուղիղ իմ դէմ, տեսայ մահակներով զինուորուած հինգ զիւղացիներ: Դոքա Պուզաչեվի օթեւանի նախապահակներն էին: Նոքա ձայն տուին, թէ ովքեր ենք մենք: Պայմանախօսը (пароль) չիմանալով, ես ուզում էի լռութեամբ անցնել, բայց նոքա իսկոյն շրջապատեցին ինձ և նոյանից մէկը բռնեց ձիուս երասանակը: Ես քաշեցի սուրս և հասցրի զիւղացու. գլխին: Գլխարկը փրկեց նորան, բայց նա տատանուեց և ձեռքից բաց թողեց երասանակը: Միւսները շփոթուեցին ու մի կողմ փախան: Սգտուելով այս ըստէից, ես խթահարեցի ձիւս և արշաւեցի:

Վրայ հասնող գիշերուայ մթութիւնը կարող էր ազա-

տել ինձ ամեն տեսակ վտանգներից, բայց յանկարծ ես յետ նայեցի և տեսայ, որ Սավելիչը չկար: Խեղճ ծերուկը իւր կող ձիուկով չէր կարողացել փախչել աւազակների ձեռքից: Ի՞նչ պէտք է անէի: Մի քանի րոպէ էլ սպասելով և համոզուելով, որ նա բռնուած է, ես յետ դարձրի ձիս և գնացի նրան փրկելու:

Փոսին մօտենալով, ես հեռուից լսեցի աղաղակներ և իմ Սավելիչի ձայնը: Ես աւելի շտապ յառաջ գնացի և շուտով մի քանի րոպէ յառաջ իմ ճանապարհը կտրող պահակ գիւղացիների մէջ էի: Սավելիչը նոյնպէս նոցա մէջ էր: Նոքա ծերուկին իջեցրել էին ձիուց և պատրաստուում էին կապտել նրան: Իմ գալը ուրախացրեց նոցա: Աղաղակներով նոքա յարձակուեցին ինձ վրայ և մի ակնթարթում վայր քաշեցին ձիուց: Նոցանից մէկը, ըստ երևույթին գլխաւորը, յայտնեց, որ խկոյն կտանի մեզ թագաւորի մօտ: «Իսկ մեր հայր-թագաւորը, աւելացրեց նա, ինքը գիտէ կհրամայէ այժմ կախ տալ ձեզ, թէ սպասել Աստծոյ լոյսի բացուելուն:» Ես չընդդիմացայ, Սավելիչը հետևեց իմ օրինակին և պահապանները յաղթանակով մեզ յառաջ տարան:

Մենք անցանք փոսով և մտանք աւանը: Բոլոր խրճիթներում վառուում էին կրակները: Ամեն կողմից լսուում էր աղմուկ ու աղաղակ: Փողոցում ես հանդիպեցի շատ մարդկանց, բայց մթուժեան մէջ մեզ ոչ ոք չնկատեց և չիմացաւ, որ ես Օրենբուրգ քաղաքի սպայ եմ: Մեզ տաչիմացաւ, որ ես Օրենբուրգ քաղաքի սպայ եմ: Մեզ տաւրան փողոցաբերանում գտնուող խրճիթը: Դռների մօտ դրուած էին գինու մի քանի տակառներ ու երկու թնդանօթ: «Ահա և արքունիքը, ասաց գիւղացիներից մէկը: Իսկոյն իմաց կտանք ձեր մասին:» Նա մտաւ խրճիթ: Ես նայեցի Սավելիչի վրայ: Ծերուկը խաչակնքուում էր և քթի տակ աղօթք էր ասում. Երկար ժամանակ սպասեցի: Վերջապէս գիւղացին վերադարձաւ ու ասաց ինձ «Գնա՛ ներս. տէր-թագաւորը հրամայեց ներս բերել սպային:»

Ես ներս մտայ խրճիթը, կամ արքունիքը, ինչպէս նրան անուանում էին գիւղացիները: Նա լուսաւորուած էր երկու ճարպի մոմերով: Պատերը ծածկուած էին ոսկեզարդ թղթով: Սակայն նստարանները, սեղանը, պարանով կախ արած լուսցարանը, բեռուից քաշ արած երեսուրբիչը, անկիւնում դէմ արած ունեկին, և վառարանի լայն առաջամասը, վրան շարուած կճուճներով— այս ամենը սովորական խրճիթի տեսք էր տալիս նրան:

Պուգաչեվը նստած էր սրբոց պատկերների տակ, կարմիր բաճկոնակը հագին, բարձրադիր գդակը գլխին և վսեմաբար ձեռքերը կողքին դրած: Նրա մօտ կեղծպատիր յարգանքով կանգնած էին նրա գլխաւոր ընկերներից մի քանիսը: Ակնյայտնի էր, որ խռովարարների մէջ մեծ հետաքրքրութիւն էր զարթեցրել Օրենբուրգից մի սպայի գալուստը և որ նոքա պատրաստուել էին հանդիսաւոր կերպով ընդունել ինձ: Հէնց առաջին հայեացքից Պուգաչեվը ճանաչեց ինձ: Նրա շինծու վսեմութիւնը յանկարծ ի չիք դարձաւ:

— Աա, Ձերդ ազնուութիւն, ասաց նա եռանդագին. ինչպէս ես, որ խաչիցն է այստեղ գալդ:

Ես պատասխանեցի, որ իմ գործով տեղ էի գնում և նրա մարդիկ ինձ բռնեցին:

— Իսկ ի՞նչ գործով, հարցրեց նա ինձ:

Ես չգիտէի ինչ պատասխանեմ: Կարծելով, թէ ես չեմ ուզում վկաների ներկայութեամբ բացատրութիւն տալ, Պուգաչեվը դարձաւ իւր ընկերներին և հրամայեց դուրս գնալ: Բոլորը հնազանդուեցին բացի երկու հոգուց, որոնք տեղերից էլ չջարժուեցին: «Սոցա մօտ վստահ խօսիր, ասաց ինձ Պուգաչեվը. սոցանից ես ոչինչ չեմ ծածկում:» Աչքի ծայրով ես նայեցի ինքնակոչի մտերիմների վրայ: Նոցանից մէկը, թուլակազմ, կզացած, սպիտակ մօրուքով մի ծերունի, ոչինչ մի աչքի ընկնող բան չուներ իւր վրայ, բացի կապտագոյն

ժապաւէնից, ուստիսառն ձգուած հասարակ բտճկոնի վրայով: Բայց յաւիտեան չեմ մոռանալ նրա ընկերին: Նա բարձրահասակ էր, անձեայ ու լայնաթիկունք և ինձ երևեց մօտ 45 տարեկան: Խիտ, կարմրագեղին մօրուքը, մոխրագոյն պսպղուն աչքերը, պնչագուրկ քիթը, ճակատի և այտերի վրայ եղած կարմրագոյն բծերը նրա չեչոտ, լայն երեսին տալիս իէն անպատմելի մի արտայայտութիւն: Հագին ունէր կարմիր շապիկ, կերգիզական խալաթ և կողակի անգրվարտիք: Առաջինը (ինչպէս իմացայ յետոյ) փախստական կապրալ Բելոբորոզովն էր. երկրորդը Աֆանասի Սօկոլովը (մականուանեալ Խլոպուշա), ոճրագործ մի աքսորական, որ երեք անգամ փախել էր Սիբիրիայի հանքերից: Չնայելով ինձ առանձնապէս յուզող զգացումներին, այն շրջանը, որի մէջ ես այնպէս անսպասելի կերպով ընկայ, սաստիկ զբաղեցնում էր իմ երևակայութեանը: Բայց Պուզաչեվը ուշքս վրաս բերեց իւր հարցով. «Աստ տեսնենք, ինչ գործով դուրս եկար Օրենբուրգից»:

Տարօրինակ մի միտք ծագեց գլխիս մէջ: Ինձ այնպէս թուեց, թէ նախախնամութիւնը, որ երկրորդ անգամ բերում էր ինձ Պուզաչեվի մօտ, այժմ միջոց է տալիս ինձ դիտաւորութիւնս գլուխ բերելու: Ես վճռեցի օգտուել դէպքից և, դեռ լաւ չխորհելով իմ վճռիս վրայ, պատասխանեցի.

— Ես գնում եմ Բելոգօրսկայա բերդը ազատելու մի որբի, որին այնտեղ նեղում են:

Պուզաչեվի աչքերը փայլատակեցին:

— Ո՞վ իմ մարդկանցից համարձակում է նեղել որբին, գօչեց նա: Եօթը գլխանի էլ լինի, իմ ձեռքից չի պրծնիլ: Աստ ինձ, ո՞վ է յանցաւորը:

— Յանցաւորը Շվաբրինն է, պատասխանեցի ես. նա բանգարկութեան մէջ է պահում այն աղջկան, որին հիւանդ գրութեամբ դու տեսար իրիցկնոջ մօտ, և բռնութեամբ

ուզում է սմուսնանալ նրա հետ:

— Ես ցոյց կտամ Շվաբրինին, ահեղաբար ասաց Պուզաչեվը: Նա կիմանալ, թէ ինչ կնշանակէ կամայականութիւն գործ դնել և նեղել իմ ժողովրդին: Ես նրան կախել կտամ:

— Հրաման տուր մի խօսք ասել, խուպոտ ձայնով ասաց Խլոպուշան: Գու շտապեցիր, Շվաբրինին հրամանատար նշանակելով, այժմ էլ շտապելով, նրան կախել ես ուզում: Գու կողակներին արդէն վիրաւորել ես, նոցա պէտ նշանակելով մի ազնուական, այժմ էլ մի վախեցնիր ազնուականների. աչքը, հէնց առաջին զբաղրտութեան հիման վրայ նոցա մահուան պատժի ենթարկելով:

— Նոցա ոչ խղճով է պէտք և ոչ երես տալ, ասաց կապուտ ժապաւէն կրող ծերունին: Շվաբրինին կախել կարելի է, բայց վաա չէր լինիլ մի կարգին հարցաքննել նաև պարոն սպային, թէ ինչո՞ւ է բարեհաճել այստեղ գալ: Եթէ նա քեզ թագաւոր չէ ճանաչում, էլ հարկ չկար քո մօտ դատ ու դատաստան որոնելու, իսկ եթէ ճանաչում է, ինչո՞ւ մինչև այժմ նստած էր Օրենբուրգում քո ոստիների հետ միասին: Չէք հրամայիլ արդեօք տանել նրան ատեանը և մի քիչ կրակ պատրաստել... Ինձ թուում է, որ նորին ազնուութիւնը զրկուած է մեզ մօտ Օրենբուրգի հրամանատարների կողմից:

Ծերունի չարագործի տրամաբանութիւնը ինձ բաւականին համոզեցուցիչ երևեց: Սարսուռ անցաւ ողջ մարմնովս, երբ մտածեցի, թէ ում ձեռքում եմ գտնուում: Պուզաչեվը նկատեց իմ շփոթութիւնը: «Ե՛, Զերդ ազնուութիւն, ասաց նա, աչքով անելով. իմ Ֆելդմարշալը կարծես իրաւացի է ասում: Գու ինչ ես կարծում:»

Պուզաչեվի ծաղրը վերագարձրեց ինձ իմ արիութիւնը: Ես հանդարտութեամբ պատասխանեցի, որ գտնուում եմ նրա իշխանութեան տակ և նա ազատ է վարուել ինձ

հետ, ինչպէս կամենայ:

— Լաւ, ասաց Պուգաչեվը. այժմ ասան, թէ ինչ դուրս
թեան է ձեր քաղաքը:

— Փնօք Աստծոյ, պատասխանեցի ես. ամեն ինչ բարե-
յաջող է:

— Բարեյաջող է, կրկնեց Պուգաչեվը. իսկ ժողովուրդը
կոտորուած է սովից:

Ինքնակուշը ճրմարիտ էր ասում, բայց ես. տուածս երդ-
ման պարտքը կատարելով, սկսեցի հաւատացնել, որ այդ բո-
լորը դատարկ լուրեր են և Օրենբուրգի մէջ շատ կան ա-
մեն տեսակ պաշարեղէններ:

— Տեսնում ես, վրայ բերեց ծերունին, որ նա յայտնի
խաբուած է քեզ: Բոլոր փախստականները միաձայն վկայում
են, որ Օրենբուրգում սով է ու ժանտախտ, որ այնտեղ
գէշերով են կերակուրում, դեռ այն էլ փառք է, թէ գըտ-
նուի. իսկ սա հաւատացնում է, թէ ամեն բանի լիութիւն
է: Եթէ դու Շվաբրինին կախել ես ուզում, հէնց նոյն կա-
խաղանից կախ տուր և այս քաջորդուն, որ նախանձի
տեղիք չմնայ:

Անիծեալ ծերունու խօսքերը կարծես ազդեցին Պուգա-
չեվի վրայ: Բարեբաղդաբար Խլոպուշան սկսեց հակաճառել
իւր ընկերին:

— Հերիք է, նստումիչ, ասաց նա ծերունուն. քո խել-
քրդ ու միտքդ հէնց միշտ խեղդելու ու մորթելու վրայ
է: Ախր սրտեղի սկան ես դու: Քիթիցդ բռնեն, հոգիդ կը-
տաս: Մէկ ոտքդ գերեզմանն է, իսկ ուրիշներին մահ էս
նիւթում: Միթէ քիչ մարդու արիւն է ծանրանում քո
խղճի վրայ:

— Դո՛ւ ինչ սուրբ դարձար գլխներիս, վրայ բերեց Բե-
լոբորոզովը. քո այդ խղճահարութիւնը սրտեղից բուսաւ:

— Իհարկէ, ես էլ մեղաւոր եմ, պատասխանեց Խլոպու-
շան. այս ձեռքն էլ (նա սեղմեց իւր ոսկրոտ բռունցքը և

թեւերը քշտելով, բացեց թաւամաղ բազուկը), այս ձեռքն
էլ յանցաւոր է քրիստոնէի արիւն թափելում: Բայց ես
խողիտողում էի ոսոխիս՝ և ոչ հիւրիս. արձակ ճանապարհ-
ների վրայ ու մուխ անտառում՝ և ոչ թէ տանը, վառա-
րանի մօտ նստած. մահակով ու կացնով՝ և ոչ թէ պառա-
ւական զրպարտանքներով:

Ծերունին երեսը դարձրեց ու «կորտուած պնչեր»
մրմռաց:

— Ի՞նչ ես այդտեղ մրմռում, քաւթնա, գոչեց Խլոպու-
շան: Ես քեզ ցոյց կտամ կորտուած պնչեր: Սպասիր, քո
ժամանակն էլ կհասնի, դու էլ ունենլիքի հօտը կառնես:
Իսկ առ այժմ զգուշացիր, որ մօրուքդ չփեռես:

— Պարոն եներալներ, սիգաբար ձայն տուեց Պուգաչե-
վը. թողէք կռիւր: Ցաւ չէ, եթէ Օրենբուրգի բոլոր շները
թափահարէին իւրեանց ոտքերը կախաղանի միջնասեան
տակ. դժբաղդութիւն կլինի, եթէ մեր քերծէները իրար
կրծոտեն: Իէ, հաշտուեցէք:

Խլոպուշան և Բելոբորոզովը ոչ մի խօսք չասացին և
մռայլադէմ իրար նայեցին: Ես տեսայ, որ անհրաժեշտ էր
փոխել խօսակցութիւնը, որ կարող էր ինձ համար շատ
անձեռնտու կերպով վերջանալ, ուստի դառնալով դէպի
Պուգաչեվը՝ ուրախ դէմքով ասացի.

— Ա՛խ, քիչ էր մնում մոռանայի շնորհակալ լինել
քեզնից, ձիու և մուշտակի համար: Եթէ դու չլինէիր, ես
ճանապարհին կա՞ռէի ու քաղաք չէի հասնիլ:

Խորամանկութիւնս յաջողուեց. Պուգաչեվը ուրախացաւ:

— Պարտքը տալով, մեղքը լալով, ասաց նա, աչքերը
քթթելով ու կիսախրելով: Հիմա պատմիր տեսնենք, ինչ
գործ ունիս այն աղջկայ հետ, որին Շվաբրինը նե-
ղում է: Չլինի նա կրակ է գարձել քաջորդուդ սրտին:

— Նա իմ հարսնացուն է, պատասխանեցի ես Պուգա-
չեվին, տեսնելով, որ բանը յաջող է գնում և հարկաւոր

չհամարելով թագոցնել նրանից ճշմարտութիւնը:

— Քո հարսնացուն է, բացականչեց Պուգաչեվը: Ինչու առաջ չասացիր: Մենք քեզ կպսակենք ու մի լաւ խնջոյք էլ կանենք:

Յետոյ դառնալով Բելոբորոզովին, ասաց. «Ասիր, Ֆելդ-մարշալ, մենք նորին ազնուութեան հետ հին բարեկամներ ենք: Նստենք, ընթրիք անենք. առաւօտը երեկոյից իմաստնագոյն է: Վաղը կտեսնենք ինչ անենք նրան:

Ես ուրախութեամբ կհրաժարու էի առաջարկուած պատուից, բայց քնչ արած: Տանուտէր կոզակի երկու նորատի աղջիկները սեղանը ծածկեցին սպիտակ ծածկոցով, բերին հաց, ձկնապուրը և մի քանի շիշ գինի ու գարեջուր, և ես երկրորդ անգամ սեղան նստայ Պուգաչեվի և նրա զարհուրելի ընկերների հետ:

Սանձարձակ կերուխումը, որին ես ակամայ վկայ եղայ, շարունակուեց մինչև խոր գիշեր: Վերջապէս արբեցութիւնը սկսեց լողթահարել սեղանակիցներին: Պուգաչեվը նստած տեղը ներհում էր: Նրա ընկերները վեր կացան և ինձ նշան արին թողնել նրան: Ես նոցա հետ միասին դուրս եկայ սենեակից: Խլուպուշայի կարգադրութեամբ պահնորդը ինձ տարաւ ատենախրճիթը, ուր ես գտայ Սավելիչին և ուր փակեցին ինձ նրա հետ միասին: Գաստիարակս այնպէս ապշել էր բոլոր անցած դարձածի վրայ, որ ինձ չառաջարկեց և ոչ մի հարց: Նա պառկեց մթութեան մէջ և երկար ժամանակ հառաչում ու ախ էր քաշում: Վերջապէս քնեց: Ես անձնատուր եղայ մտածութիւնների, որոնք ողջ գիշերը թույլ չտուին ինձ մի րոպէ անգամ աչքս փակելու:

Առաւօտը եկան, ինձ կանչեցին Պուգաչեվի անունով: Ես գնացի նրա մօտ: Նրա դռների մօտ կանգնած էր թաթարական երեք ձիեր լծած մի սալակ: Ամբոխը խռնում էր փողոցի վրայ: Նախասենեակում հանդիպեցի Պուգաչեվին:

Նա ճանապարհորդական հագուստով էր. մուշտակով ու կիրգիզական գլխարկով: Երեկուայ սեղանակիցները շրջապատել էին նրան հլու հպտակութիւն արտայայտող դէմքերով, որ խիստ հակառակ էր նախընթաց օրը տեսածներին: Պուգաչեվը ուրախ-ուրախ ինձ բարևեց և հրամայեց իւր հետ սալակ նստել: Մենք նստանք:

«Բելոգորսկայա բերդը», ասաց Պուգաչեվը լայնաթիկունք թաթարին, որ լոտնկայս կառավարում էր ձիերին: Սիրտս սկսեց սաստիկ բաբախել: Ձիերը շարժուեցին, զանգակը զընդհնագաց, սալակը յառաջ վազեց արագութեամբ:

— Կանգնիր, կանգնիր, լսուեց ինձ շատ ծանօթ մի ձայն և ես տեսայ մեր հանդէպ վազելով եկող Սավելիչին: Պուգաչեվը հրամայեց կանգ առնել:

— Տէր իմ, Պետր Անդրեյիչ, կանչում էր դաստիարակս. մի թողնիր խեղճ ծերուկիս այս աւագակների մէջ:

— Ան, ծեր քաւթառ, ասաց նրան Պուգաչեվը. կրկին Աստուած մեզ իբար հանդիպեցրեց: Իէ, նստիր կառապանի մօտ:

— Ենորհակալ եմ, թագաւոր, շնորհակալ եմ, տէր իմ, ասում էր Սավելիչը. Աստուած արեւդ պահէ, որ ինձ, ծերուկիս, խղճացիր ու հանգստացրիր: Քեզ համար Աստուծոյ անդադար աղօթք պիտ անեմ, իսկ նապաստակի մորթուց կարած մուշտակի մասին այսուհետև ամենեւին էլ չիշելու չեմ:

Այդ մուշտակի յիշատակութիւնը կարող էր վերջապէս օրինաւոր կերպով զայրացնել Պուգաչեվին: Բարեբաղբաբար ինքնակոչը կամ չլսեց, կամ արհամարանքով վերաբերուեց զէպի այդ անտեղի ակնարկը:

Ձիերը արշաւում էին: Ժողովուրդը փողոցներում կանգ էր առնում ու խոր գլուխ էր տալիս: Պուգաչեվը գլխի թեթեւ շարժումով բարևում էր այս ու այն կողմ: Մի րոպէից յետոյ մենք դուրս եկանք աւանից և սրացանք

Հարթ ճանապարհով:

Հեշտ է պատկերացնել, թէ ինչ էի զգում ես նոյն րոպէին: Մի քանի ժամից յետոյ ես պիտի տեսնուէի նրա հետ, որին ինձ համար արդէն կորած էի համարում: Ես պատկերացնում էի ինձ մեր տեսութեան առաջին րոպէն...: Ես մտածում էի նաև այն մարդու մասին, որի ձեռքում գտնուում էր իմ բաղբը և որը, դէպքերի օտարտի յարակցութեամբ, խորհրդաւոր կերպով կապուած էր ինձ հետ: Ես չիշում էի անմիտ խստարտութիւնը և արիւնկալ սովորութիւններն այն մարդու, որ ինքն իւր կամքով ուզում էր իմ սիրելուս փրկողը լինել: Պուգաչեվը չգիտէր, որ նա կապիտան Միրօնովի աղջիկն էր: Չարացած Շվաբրինը կարող էր ամեն ինչ յայտնել նրան: Պուգաչեվը մի որևէ այլ ճանապարհով ևս կարող էր ճշմարտութեանը իրագեկ լինել... Այն ժամանակ քնչ կլինի Մարիա Իվանովնայի դրութիւնը: Այս բաները մտածելիս իմ ողջ մարմինս սարսուռում էր և մազերս բիզ-բիզ կանգնում էին գլխիս վրայ:

Յանկարծ Պուգաչեվը ընդմիջեց իմ խորհրդածութիւնները, հարցնելով.

— Ի՞նչ բանի մասին է բարեհաճում միտք անել Ձեր ազնուութիւնը:

— Ի՞նչպէս միտք չանեմ, պատասխանեցի նրան. ես մի սպայ եմ և ազնուական, դեռ երեկ կուռում էի քո դէմ, իսկ այսօր քեզ հետ մի սալակում նստած ճանապարհորդում եմ, և իմ ողջ կեանքիս երջանկը-թիւնը քեզնից է կախուած:

— Ուրեմն վախենում ես դու, հարցրեց Պուգաչեվը:

Ես պատասխանեցի, որ մի անգամ արդէն նրանից ներումն ու ազատութիւն ստացած լինելով, ես յոյս ունէի, որ ոչ միայն նա ինձ կխնայէ, այլ և կ'օգնէ:

— Եւ դու չես սխալուում, վկայ է Աստուած, որ չես սխալուում, ասաց ինքնակոչը: Դու տեսար, որ իմ մարդիկ

քեզ վրայ ծուռ էին նայում: Իսկ ծերունին այսօր էլ պընդում էր, որ դու լրտես ես և որ հարկաւոր է քեզ տանջանքի ենթարկել ու կախել: Բայց ես չհամաձայնեցի, աւելացրեց նա, ձայնը ցածրացնելով, որպէս զի Սովետիչն ու թաթարը չլսեն. էս չհամաձայնեցի, լիշելով քո ինձ տուած մի բաժակ գինին և մուշտակը: Դու տեսնում ես, որ ես այնքան էլ արիւնարբու չեմ, որքան ասում են իմ մասին ձերայինները:

Յիշողութեանս մէջ զարթնեց Բելոգորսկայա բերդի առումը, բայց ես հարկաւոր չհամարեցի հակաճառել նրան և ոչ մի խօսք չպատասխանեցի:

— Ի՞նչ են խօսում իմ մասին Օրենբուրգում, քիչ լուռ մնալուց յետոյ հարցրեց Պուգաչեվը:

— Ի՞նչ պիտի խօսին. ասում են, որ քեզ հետ գլուխ ելնելը դժուար է: Խօսք չունի, լաւ ես անուն տարածել:

Ինքնակոչի դէմքը բաւականութիւն առած ինքնասիրութեան արտայայտութիւն ստացաւ:

— Այո՛, ուրախ դէմքով ասաց նա: Տեսնուած կա՛յ արդեօք ինձ նման քաջ պատերազմող: Լսել են Օրենբուրգում Իւզեեվի մօտ տեղի ունեցած ճակատամարտի մասին: Քառասուն եներալներ սպանուեցան, երկու գնդեր գերի բռնուեցան: Ի՞նչ ևս կարծում. կկարողանա՞ր Պրուսիայի թագաւորը ինձ հետ գլուխ ելնել:

Աւազակի պարծենկոտութիւնը շատ զուարճալի թւաց ինձ:

— Դու քնչ ես կարծում, ասացի ես. կկարողանալ՞իր Փրիդրիկոսի հետ գլուխ ելնել:

— Փեօքր Փեօդորովիչի հետ. քնչ ասել կուզէ: Ձեր եներալների հետ խօսելու ելնում եմ, իսկ նոքա նրան շատ անգամ են յաղթել: Մինչև հիմայ իմ գէնքը բաղդաւոր է եղել: Դեռ սպասիր, այդպիսի բաներ կանեմ, երբ կերթամ Մոսկուայի վրայ:

— Միթէ Մոսկուայի վրայ էլ մտադիր ես երթալ:

Ինքնակոչը քիչ մտասուզուեց ու ասաց.

— Աստուած գիտէ, ճանապարհս նեղ է ու կամքս կաշկանդուած: Իմ մարդիկս շատ են սիրում խելք թափել: Նոքա գողեր են: Ես պէտք է շատ զգուշ լինիմ. հէնց առաջին անյաջողութեան դէպքում, իմ գլխի գնով նոքա իւրեանց կաշին կազատեն:

— Տեսնում ես, պատասխանեցի ես. լաւ չէ ինքդ վաղորօք հեռանաս նոցանից և թագուհու գթութեանը ասպաւինիս: :

Պուգաչեվը ժպտաց դառն ժպիտով:

— Ոչ, պատասխանեց նա. զղջալու ժամանակն անցել է, ինձ այլ ևս ներում չի լինիլ: Վշարունակեմ, ինչպէս սկսել եմ: Ո՞վ գիտէ, գուցէ և յաջողուի: Միթէ Մոսկուայում չթագաւորէ՞յ Գրիշկա Օտրեպեվը:

— Բայց գիտէս, ինչ եղաւ նրա վերջը: Նրան դուրս ձգեցին լուսամուտից, խողխողեցին, այրեցին, աճիւնը լցրին թնդանօթի մէջ ու կրակեցին:

— Լսիր, ասաց Պուգաչեվը մի տեսակ վայրենի ոգևորութեամբ քեզ մի առակ ասեմ, որ մանկութեանս ժամանակ պատմել է ինձ մի կալմիկ պառաւ: Մի անգամ արծիւը հարցնում է ագռաւին. «Ասա՛ ինձ, ագռաւ-թռչուն, ինչո՞ւ աշխարհում դու ապրում ես 300 տարի, իսկ ես միմիայն 33 տարի:» — «Այն պատճառով, տէր-արծիւ, պատասխանում է նրան ագռաւը, որ դու խմում ես կենդանի արիւն, իսկ ես կերակրում եմ գէշով:» Արծիւն էլ մտածեց. արի՛ փորձենք մենք էլ գէշով կերակրուիլ: Լաւ: Արծիւն ու ագռաւը թռան միասին: Ահա տեսնում են ձիու մի գէշ, իջնում են ու նստում: Ագռաւը սկսեց կոցելով ուտել ու գովաբանել: Արծիւը մէկ կոցեց, միւս կոցեց, թռեւրը թափահարեց ու ասաց ագռաւին. «Ոչ, ագռաւ եղբայր, փոխանակ 300 տարի ասրելու ու գէշով

կերակրուելու, լաւ է մի անգամ կուշտ խմել կենդանի արիւն, իսկ այնուհետեւ ինչ կլինի, լինի: Ի՞նչպէս է կալմիկներին առակը:

— Առակը իմաստալից է, պատասխանեցի ես. բայց սպանութեամբ ու սաստատակութեամբ պարապել, իմ կարծիքով, կնշանակէ գէշերով կերակրուիլ:

Պուգաչեվը զարմացած ինձ վրայ նայեց ու ոչինչ չպատասխանեց: Երկուսս էլ լռեցինք, մեր մտածութիւնների մէջ խորասուզուած: Թաթարը սկսեց մի վհատական երգ: Սովեթիչը նիրհում ու օրօրում էր սայլիտի վրայ: Սայլակը սրանում էր ձմերային հարթ ճանապարհով: Յանկարծ Եսիկի թեք ափի վրայ ես տեսայ փոքրիկ մի գիւղ, ցանկապատով ու զանգակատնով, և մի քառորդ ժամից լետոյ մենք մտանք Բելոգորսկայա բերդը:



XII

|| | |

Մեր խնձորենին չունի տերևներ,
 Տերևներ չունի, չունի ճիւղիկներ:
 Մեր իշխանա-հին չունի ծնողներ,
 Ծնողներ չունի, չունի հայր և մայր:
 Ոչ որ կայ նրան զուգէ, զարգարէ,
 Ոչ որ կայ նրան զգուհ ու օրհնէ:

Հարստեաց երգ:

Սալակը կանգ առաւ բերդապետի տան պատշգամբի առաջ: Ժողովուրդը ճանաչելով Պուգաչեվի զանգակի զընդ- զնդոցը, խմբերով վազում էր մեր ետեւից: Շվաբրինը ինքնակոչին զիմաւորեց պատշգամբի վրայ: Նա հազած էր կողակի հագուստ և մօշուք էր թողել: Գաւազանը օգնեց Պուգաչեվին սալակից իջնելու, անարգ ու ցած խօսքերով արտայայտելով իւր ուրախութիւնն ու եռանդը: Ինձ որ տեսաւ, շփոթուեց, բայց շուտով ինքն իրան ժողովեց ու ձեռքն ինձ երկարացնելով՝ ասաց. «Գու էլ մերն ես: Վա- ղուց պէտք էիր այդ արած:» Ես շուռ տուի երեսս նրա- նից և ոչինչ չպատասխանեցի:

Սիրտս տրորուեց, երբ մենք մտանք ինձ վաղուց ծանօթ սենեակը, ուր պատի վրայ, որպէս անցեալի դամբանադիր, դեռ կախուած մնացել էր հանգուցեալ բերդապետի

մրցանակագիրը: Պուգաչեվը նստեց այն բազմոցին, որի վրայ, իւր ամուսնու բանդագուշանքներով քնաբերած, նիրհում էր Իվան Կուզմիչը: Շվաբրինը անձամբ օղի տուեց Պուգաչեվին: Պուգաչեվը խմեց մի բաժակ ու ինձ ցոյց տալով, ասաց. «Նորին ազնուութեանն էլ հրամցուր:» Շվաբ- րինը մօտեցաւ ինձ իւր սկուտեղով, բայց ես երկրորդ ան- գամ շուռ եկայ նրանից: Նա գլուխը կորցրած էր երևում: Իւր սովորական սրամտութեամբ նա, իհարկէ, հասկացաւ, որ Պուգաչեվը զժգոհ էր նրանից: Նա վախենում էր Պու- գաչեվից, իսկ ինձ վրայ նայում էր կասկածանքով: Պու- գաչեվը տեղեկացաւ բերդի գրուութեան, թշնամու զօրքերի վերաբերութեամբ եղած լուրերի և այլ նման բաների մասին և լանկարձ անսպասելի կերպով հարցրեց.

— Ասա տեսնեմ, եղբայր, այդ քնչ աղջիկ է, որ դու բանդ- արկութեան մէջ ես պահում: Յոյց տուր ինձ այդ աղ- ջիկը:

Շվաբրինը դիակի նման դունաթափուեց:

— Թագաւոր, ասաց նա դողդոջուն ձայնով ... Թագաւոր, նա բանդարկութեան մէջ չէ... նա հիւանդ է. նա պառ- կած է սենեակում:»

— Տար ինձ նրա մօտ, ասաց ինքնակոչը, տեղից վեր կենալով:

Մերժելն անհնարին էր: Շվաբրինը առաջնորդեց Պու- գաչեվին դէպի Մարիա Իվանովնայի սենեակը: Ես հետևե- ցի նոցա: Շվաբրինը կանգ առաւ սանդուխքի վրայ:

— Թագաւոր, ասաց նա. դուք իշխանութիւն ունիք պահանջել ինձնից, ինչ կամենաք, բայց մի թույլ տաք մի կողմնակի մարդու մտնել իմ կնոջ սենեակը:

Ես դողդողացի:

— Ուրեմն դու ամուսնացար նրա հետ, ասացի ես Շվաբրինին, պատրաստ լինելով նրան կտոր կտոր անել:

— Հանգիստ, ընդմիջեց ինձ Պուգաչեվը. այդ իմ գործն

է: Իսկ դու, ասաց նա Շվաբրինին գառնալով, խելք մի թափիր ու մի կոտրաուիր: Քո կինն է նա, թէ ոչ, ես կտանեմ նրա մօտ նրան, ում ուզենամ: Հետևեցէք ինձ, Զերդ ազնուութիւն:

Սենեակի դռան առաջ Շվաբրինը կրկին կանգնեց ու ընդհատ ձայնով ասաց.

— Թագաւոր, նախագգուշացնում եմ Զեզ, որ նա բռնուած է չարատենդով և երրորդ օրն է, ինչ անդադար զառանցում է:

— Բաց արձ, ասաց Պուգաչեվը:

Շվաբրինը գրպանների մէջ որոնեց որոնեց ու ասաց. որ բանալին իւր հետ չէ վերցրել: Պուգաչեվը ոտքով հրեց դուռը: Փականքը թռաւ, դուռը բացուեց և մենք ներս մտանք:

Ես նայեցի ու սարսափեցի: Յատակի վրայ գունատ ու նիհար, խճճուած մազերով, գեղջկուհու պատառոտած շորերը հագին, նստած էր Մարիա Իվանովնան: Նրա առաջ դրուած էր մի պնակ ջուր և մի պատառ հաց: Ինձ որ տեսաւ, նա սարսուեց ու ճչաց: Թէ թնչ էր իմ դրութիւնն այն ժամանակ, չեմ յիշում:

Պուգաչեվը նայեց Շվաբրինի վրայ ու գառն ժպիտն երեսին՝ ասաց.

— Գեղեցիկ հիւանդանոց ես պահում: Յետոյ մօտենալով Մարիա Իվանովնային, ասաց. «Ասա, սիրելիս, ինչու է պատժել քեզ քո ամուսինը, թնչ է քո լանցանքը:»

— Իմ ամուսինը, կրկնեց Մարիա Իվանովնան. նա իմ ամուսինը չէ: Ես երբէք չիներու չեմ նրա կինը: Ես վճռել եմ աւելի շուտ մեռնել և կմեռնեմ, եթէ ինձ չփրկեն:

Պուգաչեվը ահարկու հայեացքով նայեց Շվաբրինի վրայ:

— Եւ դու համարձակուեցիր խաբել ինձ, ասաց նա. գիտես, անպիտան, թէ թնչ բանի ես արժանի:

Շվաբրինը ընկաւ Պուգաչեվի ոտքերը: Նոյն րոպէին

արհամարանքը խեղդեց իմ մէջ բարկութեան ու ատելութեան զգացումները: Գարշելով ես նայում էի ազնուականի վրայ, որ մի փախստական կողակի ոտքերն էր ընկել: Պուգաչեվի սիրտը կակղեց:

— Ներում եմ քեզ այս անգամ, ասաց նա Շվաբրինին. բայց իմացիր, որ առաջին նոր լանցանքիդ հետ, այս էլ ի հաշիւ կառնուի:

Յետոյ նա դարձաւ Մարիա Իվանովնային և քաղցրութեամբ ասաց. «Դուրս եկ, գեղեցիկ աղջիկ, ազատութիւն եմ շնորհում քեզ: Ես թագաւորն եմ:»

Մարիա Իվանովնան արագութեամբ նայեց նրա վրայ և հասկացաւ, որ առաջը կանգնած է իւր ծնողների դահիճը: Երկու ձեռքերով նա փակեց երեսը ու վայր ընկաւ ուշաթափ: Ես վրայ հասայ նրան օգնելու, բայց նոյն րոպէին չափազանց վստահութեամբ ներս մտաւ իմ հին ծանօթ Պալաշան և սկսեց հոգ տանել իւր տիրուհու վրայ: Պուգաչեվը դուրս եկաւ սենեակից և մենք երեքս էլ իջանք հիւրասենեակը:

— Է, Զերդ ազնուութիւն, ասաց Պուգաչեվը ծիծաղելով. ազատեցինք գեղանի աղջկան: Ի՞նչ ես կարծում, չուղարկեմ տէր-տէրի ետևեց և չհրամայեմ նրան իւր կնոջ եղբոր-աղջիկը պսակել քեզ հետ: Ես կլինիմ Զեզ կնքահայր, Շվաբրինը ազապ-պետ, լաւ քէֆ կանենք, կխմենք ու գործերիս կնայենք:

Ինչից որ վախենում էի, այն էլ պատահեց: Պուգաչեվի առաջարկութիւնը լսելով, Շվաբրինը կատաղեց բարկութիւնից:

— Թագաւոր, գոչեց նա մոլեգնաբար. ես սուտ խօսեցի Զեր առաջ, բայց Գրինեվն էլ խաբում է Զեզ: Այս աղջիկը այստեղի քահանային ազգական չէ: Նա Իվան Միրօնովի այջիկն է, որ այստեղի բերդի առման ժամանակ կախուեց:

Պուգաչեվը ուզողեց ինձ վրայ իւր հրացայտ աչքերը:

— Այս ինչ կնշանակէ, հարցրեց նա տարակուսած:

— Շվաբրինը քեզ ճշմարիտն ասաց, պատասխանեցի ես հաստատուն ձայնով:

— Ի՞նչ այդ բանը ինձ չէիր տեսել, նկատեց Պուգաչեվը, որի երեսը մռայլում էր:

— Ինքզ դատիր, պատասխանեցի ես, կարելի էր քո մարդկանց մօտ լայանել, որ Միրոնովի աղջիկը կենդանի է: Չէ որ նրան պատառ պատառ կանէին: Ոչինչ բան չէր կարող նրան ազատել:

— Այդ էլ ճշմարիտ է, ծիծաղելով ասաց Պուգաչեվը. իմ արբշիւ մարդիկ չէին խնայիլ թշուառ աղջկան: Սանամայր իրիցկինը լաւ արեց, որ խաբեց նոցա:

— Լսիր, շարունակեցի ես՝ նրա բարի տրամադրութիւնը նկատելով. ով ես դու, չգիտեմ և գիտնալ չեմ էլ ուզում, բայց Աստուած գիտէ, որ կեանքս չէի խնայիլ քեզ որպէս վարձատրութիւն այն բանի, որ դու արիր ինձ համար: Միայն մի պահանջիր ինձնից այն, ինչ որ հակառակ է պատուիս և խղճմտանքիս: Ի՞նչ իմ բարերարն ես: Վերջացրու, ինչպէս սկսեցիր: Թող ինձ այս խեղճ որբի հետ գնանք, ուր որ Աստուած տայ: Իսկ մենք, որտեղ էլ լինիս դու, ինչ էլ պատահի քեզ, ամեն օր Աստուծուն աղօթք պիտ անենք քո մեղաւոր հոգուդ փրկութեան համար:

Պուգաչեվի դժնեալ հոգին կարծես զգածուեց:

— Թող քո ասածիդ պէս լինի, ասաց նա: Պատժելիս պատժել, ներելիս—ներել. այս է իմ սովորութիւնս: Վերջրու քո գեղեցկուհուն, տանք նրան ուր կամենաս և թող Աստուած ձեզ սէր տայ ու միաբանութիւն:

Ապա նա դարձաւ Շվաբրինին և հրամայեց իրան ենթակալ բոլոր բերդերի ու փակուղիների (заства) համար անցագիր տալ ինձ: Շվաբրինը հողի հետ հաւասարած,

քարացածի նման կանգնել մնացել էր: Պուգաչեվը գնաց բերդը աչքէ անցնելու: Շվաբրինը ուղեկցում էր նրան, իսկ ես ճանապարհի պատրաստութիւն տեսնելու պատրուակով մնացի: Ես վազեցի Մարիա Իվանովնայի սենեակը: Ի՞նչերը կողպած էին: Թակեցի:

— Այդ ո՞վ է, հարցրեց Պալաշան:

Ես տուի իմ անունս: Ի՞նչերի ետեւից հնչեց Մարիա Իվանովնայի սիրունիկ ձայնը. «Սպասեցէք, Պետր Անդրեյիչ, ես շորերս եմ փոխում: Գնացէք Ակուլինա Պանֆիլովնայի մօտ, ես իսկոյն կգամ այնտեղ:»

Ես հնազանդուեցի և գնացի հայր Գերասիմի տունը: Նա էլ, իրիցկինն էլ դուրս վազեցին իմ հանդէպ: Սավելիչը արդէն նոցա նստապէս հաղորդել էր իմ գալը:

— Բարով եկաք, Պետր Անդրեյիչ, ասում էր իրիցկինը. Աստուած կրկին տեսութեան արժանացրեց: Ի՞նչպէս էք: Մենք ամեն օր լիշում էինք Ձեզ: Իսկ իմ սիրունիկ Մարիա Իվանովնան ինչե՞ր չքաշեց առանց Ձեզ... Բայց մի ասացէք, այ՛ որդի, այդ թնչպէս էք Պուգաչեվի հետ այդպէս բարեկամացել: Ի՞նչպէս որ նա Ձեր էլ աղունը չ'աղաց: Ե՛հ, շնորհակալութիւն չարագործին գոնէ դրա համար:

— Հերիք է, այ՛ պառաւ, կորեց հայր Գերասիմը. ամեն գիտցածը չեն դուրս տալ: Ոչ գոյ փրկութիւն ի շատախօսութեան: Իմ սիրելի Պետր Անդրեյիչ, խնդրում եմ ներս համեցէք: Վաղճւց, վաղուց է չենք տեսնուել:

Իրիցկինը սկսեց մեծարել ինձ այն ամենով, ինչ որ Աստուած տուել էր, և միևնոյն ժամանակ խօսում էր անդադրիլ: Նա պատմեց, թէ ինչպէս Շվաբրինը ստիպել էր նոցա՝ իրան տալ Մարիա Իվանովնային, ինչպէս Մարիա Իվանովնան լալիս է եղել և չէ ուզեցել բաժանուիլ նոցանից, ինչպէս նոքա մշտական յարաբերութիւն են ունեցել Պալաշայի միջնորդութեամբ (մի կրակ աղջիկ, որ ուրեագնիկին էլ խաղաց-

նում է իւր ձեռքի մէջ), ինչպէս նա խորհուրդ է տուել Մարիա Իվանովնային գրել ինձ և այլն .. Ես էլ համառօտ պատմեցի իմ գլխից անցածը: Տէրտէրն ու իրիցկինը խաչակնքուեցին, երբ լսեցին, որ Պուզաչեվը գիտէ նոցա խաբէութիւնը: «Սուրբ խաչի զօրութիւնը մեզ հետ լինի, ասում էր Ակուլինա Պանֆիլովնան. Տէր Աստուած, դու այս փորձանքից էլ սօգատես: Ապրիս, Ալեքսէյ Իվանիչ. տեսար դու մարդը:» Հէնց նոյն րոպէին դուռը բացուեց և ներս մտաւ Մարիա Իվանովնան, որի գունատ դէմքի վրայ խաղում էր ժպիտը: Նա վայր էր ձգել իւր զեղջկական հագուստը և հագել էր առաջուայ նման պարզ և սիրունիկ: Ես բռնեցի նրա ձեռքը և երկար ժամանակ չէի կարողանում մի խօսք անգամ արտասանել: Զգացմունքներիս յորդութիւնից մենք երկուսս էլ լռել էինք: Մեր տանուտէրերը զգացին, որ մենք նրանց կարօտութիւն չունինք և թողին մեզ: Մենք մնացինք միայնակ, և ամեն ինչ մոռացանք: Մենք խօսում և չէինք կշտանում խօսելուց: Մարիա Իվանովնան պատմեց ինձ այն բոլորը, ինչ որ պատահել էր նրան բերդի առման օրից սկսած. նկարագրեց իւր սարսափալից դրութիւնը, բոլոր այն տանջանքները, որոնց ենթարկել էր նրան վատշուէր Շվաբրինը: Մենք լիշում էինք նաև անցեալ երջանիկ ժամանակը... Երկուսս էլ լալիս էինք... Վերջապէս ես սկսեցի բացատրել նրան իմ ենթադրեալ գիտաւորութիւնները: Նրան անկարելի էր մնալ Պուզաչեվին ենթարկուած ու Շվաբրինի կառավարութեան տակ գտնուած բերդում: Օրենբուրգ գնալու մասին մտածել չէր կարելի, որովհետև նա ենթարկուած էր պաշարուած քաղաքի ամեն թշուառութիւններին: Ես նրան առաջարկեցի գնալ գիւղ, իմ ծնողների մօտ: Սկիզբը նա տատամսում էր. հօրս արդէն յայտնի անբարեհաճութիւնը վախեցնում էր նրան: Ես նրան հանգստացրի: Ես գիտէի, որ հայրս իրան բաղբաւոր, նաև պարտական կհամարէ իւր

տունն ընդունելու հայրենիքի համար մեռած մի արժանաւոր զինուորի աղջկան: «Սիրելի Մարիա Իվանովնա, ասացի ես վերջապէս. ես քեզ համարում եմ իմ կինս: Հրաշալի հանգամանքներ մեզ կապեցին անբակտելի կապերով: Աշխարհում էլ ոչինչ չէ կարող բաժանել մեզ միմեանցից:» Մարիա Իվանովնան լսեց ինձ պարզօրէն, առանց խորահնար պատճառաբանութիւնների, առանց շինծու ամօթխածութեան: Նա զգում էր, որ իւր բաղբը կապուած էր իմ բաղբի հետ: Բայց նա կրկին կրկնեց, որ միմիայն իմ ծնողների համաձայնութեամբ կամուսնանայ ինձ հետ: Ես այդ մասին նրան չէի էլ հակաճառում: Մենք ջերմաջերմ ու անկեղծ սրտով համբուրուեցինք և այդպիսով մեր մէջ ամեն ինչ վճռուեց:

Մի ժամից յետոյ ուրեաղնիկը բերեց ինձ իմ անցագիրը՝ Պուզաչեվի մարզակներով ստորագրուած, և ինձ կանչեց նրա մօտ: Պուզաչեվը արդէն պատրաստուել էր ճանապարհ ընկնելու: Չեմ կարող արտայայտել, թէ ինչ էի զգում, երբ բաժանուում էի այս ահարկու մարդուց, որ չարագործ ու անգութ էր ամենքի, բայց ոչ ինձ համար: Ինչո՞ւ չյայտնեմ ճշմարտութիւնը. նոյն րոպէին համակրութեան մի ուժգին զգացում ձգում էր ինձ դէպի նրան: Ես սրտով ցանկանում էի կորզել նրան այն ոճրագործների շրջանից, որոնց նա առաջնորդում էր, և ազատել նրա գլուխը, քանի դեռ ժամանակ կար: Շվաբրինը և մեր շուրջը խռնուող ժողովուրդը արգելք եղան ինձ յայանելու նրան այն, ինչով որ լցուած էր սիրտս:

Մենք բարեկամաբար բաժանուեցինք: Ամբոխի մէջ Ակուլինա Պանֆիլովնային տեսնելով, Պուզաչեվը մատը շարժեց նրա վրայ և խորհրդաւոր կերպով աչքը բլթթեց: Յետոյ նստեց սալակը, հրամայեց Բերգա գնալ և երբ ձիերը լառաջ կաղացին, նա մի անգամ էլ սալակից դուրս նայեց և գոչեց ինձ, «Մնաք բարով, Զերգ ազնուութիւն, գուցէ

երբ և իցէ կրկին տեսնուինք:»

Իրաւ, մենք տեսնուեցինք, բայց ի՞նչ հանգամանք-
ներում:

Պուգաչեվը գնաց: Ես երկար ժամանակ նայում էի գէ-
պի սպիտակ դաշտավայրը, որի վրայով սրանում էր նրա
սալակը: Ժողովուրդը ցրուեց: Շվաբրինը անյայտացաւ: Ես
դարձաւ քահանայի տունը: Մեր դուրս դալու համար ամեն
բան պատրաստ էր: Ես չէի ուզում այլ ևս լետանալ: Մեր
բոլոր իրերը դարսուած էին բերդապետի հին սալի մէջ:
Կառապանները մի ընդհանուր լծեցին ձիերը: Մարիա Իվա-
նովնան գնաց վերջին մնաս բարովն ասելու եկեղեցու ե-
տեը թաղուած իւր ծնողների գերեզմաններին: Ես ուզում
էի ուղեկցել նրան, բայց նա խնդրեց իրան մենակ թողնել:
Մի քանի ընդհանր լետուի նա վերադարձաւ, լռիկ արցունք-
ներ թափելով: Սալակը պատրաստ էր: Հայր Գերասիմը և
իւր կինը դուրս եկան պատշգամբի վրայ: Սալի մէջ նրս-
տանք երեքով: Մարիա Իվանովնան Պալաշայի հետ և ես:
Սովետիչը բարձրացաւ սալիտի վրայ: «Գնաս բարով, Մա-
րիա Իվանովնա, իմ հոգեակս գնաք բարով, Պետար Անդ-
րեյիչ, իմ աչքիս լոյս, ասում էր բարի իրիցկինը: Բարի
ճանապարհ, Աստուած ձեզ բաղաւոր անէ:»

Մենք ճանապարհ ընկանք: Բերդապետի տան լուսամու-
տում կանգնած էր Շվաբրինը: Նրա գէմքը արտայայտում
էր մաւղ սիտակալութիւն: Ես չէի ուզում ոչնչացած թըշ-
նամու առաջ պարծենալ իմ յաղթանակով, ուստի աչքերս
դարձրի ուրիշ կողմ:

Վերջապէս մենք դուրս եկանք բերդի դռներից և առ
միշտ թողինք Բելոգորսկայա բերդը:

XIII

ՉԵՐԲԵՎԵԼՈՒՄՆ

Մի լարիանաք, պարոն, պաշտօնեց ստիպուած,
ես պարաւոր եմ հէնց խնայն և եթ

Ձեզ բանդ ուղարկել:

— Համեցէք, պարոն, բայց ես այս ունիմ,

Որ թոյլ կտաք ինձ դործը նախապէս

Ձեզ բացատրել:

Կնէմին

Այսպէս անսպասելի կերպով միանալով այն սիրելի աղ-
ջկայ հետ, որի համար դեռ առաւօտեան այնպիսի տան-
ջալից անհանգստութիւն էի կրում, ես ինքս ինձ չէի հա-
ւատում և կարծում էի, թէ բոլոր ինձ պատահած դէպ-
քերը մի սնտի երազ էր: Մարիա Իվանովնան մտախոհ
նայում էր երբեմն ինձ, երբեմն ճանապարհին, և ըստ ե-
րևույթին դեռ չէր կարողացել ուշք ու միտքը հաւաքել:
Մենք լուռ էինք: Մեր սրտերը չափից դուրս լողնել էին:
Երկու ժամից լետուի անզգալի կերպով հասանք մօտակայ
բերդը, որ նոյնպէս գտնուում էր Պուգաչեվի իշխանու-
թեան տակ: Այստեղ մենք փոխեցինք ձիերը: Ձիերի արա-
դապէս լծելը և Պուգաչեվից բերդապետ նշանակուած մօ-
րուքաւոր կողակի փութալի ծառայակատարութիւնը ինձ
համոզեցին, որ, ի շնորհս մեր կառապանի շատախօսու-

թեան, այստեղ ինձ ընդունում էին որպէս նոյն ժամանա-
կի պալատական գորեղ անձն:

Մենք շարունակեցինք լառաջ գնալ: Մթնում էր: Մենք մօտենում էինք մի փոքրիկ քաղաքի, որտեղ, մօրու-
քաւոր բերդապետի ասելով, գտնուում էր ինքնակոչին միա-
նալու գնացող մի ուժեղ գորախումբ: Քաղաքի մօտ մեզ
կանգնեցրին պահնորդները: «Ո՞վ է գալիս», հարցրին նո-
քա: Մեր սալլորդը բարձրաձայն պատասխանեց. «Թա-
գաւորի քաւորը, իւր տիկինի հետ:» Յանկարծ հուսարնե-
րի մի խումբ շրջապատեց մեզ, սարսափելի հայտնաբներ
թափելով: «Դ՛ուրս արի, սատանի՛ քաւոր, ասաց ինձ պեխ-
տախ (УСАТЫЙ) վախճիստորը: Սպասիր, տաք բաղանիք կըն-
դունես դու քո տիրուհու հետ:»

Ես դուրս եկալ սալլաից և պահանջեցի, որ ինձ տա-
նեն իւրեանց գլխաւորի մօտ: Սպալ լինելս տեսնելով՝ զի-
նուորները գաղաբեցին հայտնելուց: Վախճիստորը տարաւ
ինձ մայեօրի մօտ: Սովելիչը չէր հեռանում ինձնից, և
ինքն իրան ասում էր. «Ա՛յ քեզ թագաւորի քաւոր: Կրա-
կից բոցն ընկանք... Տէր Աստուած, ինչո՞վ կվերջանայ այս
ամենը:» Սալլակը քալ առ քալ գալիս էր մեր ետեկից:

Հինգ րոպէից յետոյ մենք հասանք պայծառ լուսաւո-
րուած մի տնակ: Վախճիստորը թողեց ինձ պահապանի հսկո-
թեան տակ և գնաց իմ մասին զեկուցանելու: Նա իսկոյն
վերադարձաւ և յայտնեց, որ նորին բարձր ազնուութիւնը
ժամանակ չունի ինձ ընդունելու, այլ հրամայեց ինձ բանդ
տանել, իսկ տիրուհուն բերել իւր մօտ:

— Ի՛նչ կնշանակէ այդ, կատաղած գոչեցի ես. խելա-
գարուել է ինչ է նա:

— Չգիտեմ, Ձերդ ազնուութիւն, պատասխանեց վախ-
միստորը. միայն նորին բարձր ազնուութիւնը հրամայեց Ձեր
ազնուութեան բանդ տանել և նորին ազնուութեան տիրու-
հուն տանել իւր բարձր ազնուութեան մօտ, Ձերդ ազ-

նուութիւն:

Ես վազեցի դէպի պատշգամբը: Պահակները ինձ չար-
գելեցին և ես ուղիղ ներս վազեցի մի սենեակ, որտեղ վեց
հուսար սպաներ «բանկ» էին խաղում: Մայեօրը բաժանում
էր խաղաթղթերը: Ո՛րքան մէծ եղաւ իմ զարմանքը, երբ
ես, նրան նայելով ճանաչեցի Օրենբուրգի պանդուկում
ինձ տանող Իվան Իվանիչ Չուրինին:

— Մթթէ կարելի բան է, գոչեցի ես. Իվան Իվանիչ,
այդ դ՛ու ես:

— Պա՛, պա՛, պա՛, Պետր Անդրեյիչ, այս թնչպէս է պա-
տահել, որտեղից: Բարով, եղբայր, բարով: Ձե՛ս ուզում
մի թուղթ վերցնել:

— Ենորհակալ եմ, աւելի լաւ է հրամայիր ինձ մի
բնակարան տալ:

- Բնակարանն ինչե՞ր է պէտք, կաց ինձ մօտ:
- Ձե՛մ կարող, մենակ չեմ:
- Ի՛նչ անենք, ընկերիդ էլ այստեղ բեր:
- Հետինս ընկեր չէ, այլ մի... օրիորդ:
- Օրիորդ: Այդ որտեղ ես ճանկել: Ե՛հէ, եղբայր:

Սոյն խօսքերն արտասանելիս Չուրինը այնպէս ար-
տայայտիչ կերպով սուլեց, որ բոլորը քրքուացին, իսկ ես
շփոթուեցի:

— Ի՛էհ, շարունակեց Չուրինը. թող այդպէս լինի,
քեզ բնակարան կտանք: Բայց ափսոս... Մի լաւ ու-
րախութիւն կանէինք առաջուայ նման. : Էյ, տղան, այս
ինչո՞ւ չեն բերում Պուգաչեվի քաւորկնոջը: Չլինի՞ նա
յամառում է: Ասացէք, որ չվախենայ, որ պարոնը գեղե-
ցիկ մարդ է, ոչինչ չի անիլ, ու վզին էլ մի լաւ հասցրէք:

— Ի՛նչ ես խօսում, ասացի ես Չուրինին. թնչ Պուգա-
չեվի քաւորկին: Նա հանգուցեալ կապիտան Միրօնովի աղ-
ջիկն է: Ես նրան գերութիւնից ազատեցի և այժմ տա-
նում եմ մեր գիւղը, որտեղ և կթողնեմ նրան:

— Ի՞նչպէս, այդ քո՞ մասին էին նոր ինձ զեկուցանում: Տէր Աստուած, այս թնջ կնշանակէ:

— Յետոյ ամեն բան կպատմեմ: Իսկ այժմ, ի սէր Աստծոյ, հանգստացրու խեղճ աղջկան, որին քո հուսարները վախեցրին:

Զուրինը իսկոյն հարկաւոր կարգադրութիւններն արաւ: Նա ինքը դուրս եկաւ փողոց ակամայ թիւրիմացութեան համար Մարիա Իվանովնայից ներողութիւն խնդրելու և վախճիտորին հրամայեց տանել նրան քաղաքի ամենալաւ բնակարանը: Ես մնացի նրա մօտ գիշերելու:

Մենք ընթրեցինք և երբ միայն երկուսս մնացինք, ես պատմեցի նրան իմ արկածները: Զուրինը լսում էր ինձ մեծ հետաքրքրութեամբ: Երբ վերջացրի, նա գլուխը թօթուեց ու ասաց. «Այդ ամենը լաւ, եղբայր, միայն մի բան լաւ չէ. ո՞ր սատանան գրգեց քեզ ամուսնանալ: Ես, մի ազնիւ սպայ, չեմ ուզում քեզ խաբել: Հաւատան դու ինձ, որ ամուսնութիւնը մի չիմարութիւն է: Ախր քո թնջ բանն է կնոջ ետեւից քաշ գալ և երեխաների հետ գլուխ ցաւեցնել: Արի ինձ լսիր. բաժանուէր կապիտանի աղջկանից: Սիմբիրսկի ճանապարհը ես մաքրել եմ խռովարարներից ու ապահովեցրել: Հէնց վաղը նրան միայնակ ուղարկիր քո ծնողների մօտ, իսկ դու կաց իմ զօրախմբի մէջ: Օրենբուրգ վերադառնալու պէտք չունիս: Ելի կընկնես խռովարարների ձեռքը և հազիւ թէ կրկին պրծնիս: Այդպիսով սիրային ցնորքը կանցնի ու ամեն բան կարգի կ'ընկնի:»

Թէև ես ո՛չ բոլորովին համաձայն էի նրա հետ, բայց զգում էի, որ ես պարտաւոր էի ներկայ գտնուիլ կայսրուհու գօրքի մէջ: Ես վճռեցի հետևել Զուրինի խորհրդին, այն է, Մարիա Իվանովնային գիւղ ուղարկել և մնալ զօրախմբի մէջ:

Սովեւիչը եկաւ ինձ հանուկեցնելու: Ես նրան յայտնե-

ցի, որ հետևեալ օրը պատրաստ լինի Մարիա Իվանովնայի հետ ճանապարհ ընկնելու: Նա քիչ յամառել սկսեց: «Ի՞նչ ես ասում, պարոն, ինչպէս թողնեմ քեզ: Ո՞վ պէտք է քեզ վրայ հոգ տանի: Ի՞նչ կասեն ծնողներդ:»

Դաստիարակիս յամառութիւնը գիտնալով, ես միտքս դրի փայփայանքով ու անկեղծութեամբ նրան համոզել:

— Բարեկամդ իմ, Արխիպ Սովեւիչ, ասացի նրան. մի մերժիր խնդիրս. դրանով դու ինձ բարերար եղած կլինիս: Ծառայի նեղութիւն ես չեմ քաշիլ, բայց ես հանգիստ չեմ լինիլ, եթէ Մարիա Իվանովնան առանց քեզ ճանապարհ գնայ: Նրան ծառայելով, դու ինձ ծառայած կլինիս, որովհետև հաստատապէս վճռել եմ, հէնց որ հանգամանքները թող տան, ամուսնանալ նրա հետ:

Սովեւիչը աննկարագրելի զարմանքով ձեռքերն իրար խփեց:

— Ամուսնանալ, կրկնեց նա. երեխան ամուսնանալ է ուզում: Իսկ թնջ կասէ հայրդ, հապա մայրդ թնջ կասէ:

— Կհամաձայնի՞ն, երևի կհամաձայնի՞ն, երբ ճանաչեն Մարիա Իվանովնային, պատասխանեցի ես: Ես քո օգնութեան վրայ էլ յոյս ունիմ. հայրս ու մայրս քեզ հաւատում են. դու մեզ բարեխօս-միջնորդ կլինիս, այնպէս չէ:

Ծերունին զգացուեց:

— Օ՛խ, իմ սիրելի Պետր Անդրեյիչ, պատասխանեց նա. թէև քիչ վաղ ես միտդ դրել ամուսնանալ, բայց Մարիա Իվանովնան այնպիսի բարի աղջիկ է, որ դէպքից չ'օգտուէլը մեղք է: Թող քո ասածդ լինի: Կ'ուղեկցեմ նրան, Աստծոյ հրեշտակին, և ամենախոնարհաբար կյայտնեմ քո ծնողներին, որ այդպիսի աղջկան օժիտ էլ հարկաւոր չէ:

Ես շնորհակալ եղայ Սովեւիչից և քնելու պառկեցի Զուրինի հետ մի սենեակում: Տաքացած ու յուզուած լինելով, ես սկսեցի աւելորդ շատախօսութիւն: Սկզբում Զուրինը սիրով խօսակցում էր ինձ հետ, բայց կամաց կամաց

նրա խօսքերը ընդհատ ու անկապ էին դառնում: Վերջապէս, որպէս պատասխան իմ տուած ինչ որ հարցին, նա Ֆրսֆսաց ու խրքմփաց: Ես լռեցի և շուտով հետևեցի նրա օրինակին:

Միւս օր առաւօտեան ես գնացի Մարիա Իվանովնայի մօտ և յայտնեցի նրան իմ մտադրութիւնները: Նա նրանց խելացի համարեց և իսկոյն համաձայնուեց ինձ հետ: Զուրինի զօրախումբը հէնց նոյն օրը պէտք է դուրս գար քաղաքից: Դանդաղելու կարիք չկար: Ես հէնց այդ ժամանակ բաժանուեցի Մարիա Իվանովնայից, նրան Սովելիչին յանձնելով և մի նամակ ևս տուի նրան իմ ծնողների վրայ: Մարիա Իվանովնան լացեց: «Մնաք բարով, Պետօր Անդրեիչ, հանդարտ ձայնով ասաց նա. կտեսնուի՞նք կրկին, թէ ոչ, Աստուած գիտէ. բայց յաւիտեան չեմ մոռանալ Զեզ և մինչև գերեզման իջնելս միայն դու կմնաս սրտիս մէջ:» Ես չկարողացայ ոչինչ պատասխանել: Մարդիկ շրջապատել էին մեզ: Ես չուզեցի նոցա առաջ անձնատուր լինել ինձ ալէկոծող զգացմունքներին: Վերջապէս նա գնաց: Տխուր ու լռակեաց ես վերադարձայ Զուրինի մօտ: Նա ուզում էր ինձ ուրախացնել, ես մտածում էի ցրել մտքերս: Այն օրը մենք անցրինք աղմկայույզ ու մոլեգին և երեկոյեան դուրս եկանք քաղաքից:

Փետրուարի վերջերն էր: Պատերազմական կարգադրութիւնների իրագործումը գժուարացնող ձմեռային եղանակը անցնում էր և մեր զեներալները պատրաստուում էին միահամուռ գործողութեան: Պուզաչեվը դեռ բանակած էր էր Օրենբուրգի մօտ: Նոյն ժամանակ նրա շուրջը զօրախմբերը միանում էին և ամեն կողմերից մօտենում էին չարագործի բանակին:

Խուճապույզ գիւղերը, մեր զօրքերին տեսնելով, հնազանդուում էին, աւազակների հրօսակները ամեն տեղ փախչում էին մեզնից և ամեն ինչ խոստանում էր բարելաջող

ու շուտափոյթ վաղձան:

Շուտով իշխան Գալիցինը, Տատիշչեվ բերդի մօտ, ջարդեց Պուզաչեվին, ցրուեց նրա ամբոխը, ազատեց Օրենբուրգը և թուում էր, թէ վերջին ու վճռական հարուած հասցրեց ապստամբութեան: Նոյն ժամանակ Զուրինը ուղարկուեց բաշկիրների մի հրօսակի գէմ, որը ցիր ու ցան եղաւ, նախ քան մեր նրան տեսնելը: Գարունը վրայ հասաւ և փակեց մեզ մի թաթարական գիւղում: Գետակները հեղեղուեցին և ճանապարհները անանցանելի դարձան: Մեր անգործութեան մէջ միեթարուում էինք մի մաքով միայն, որ աւազակների ու վայրենիների հետ մեր վարած տաղտկալի ու չնչին պատերազմը շուտով կվերջանայ:

Բայց Պուզաչեվը բռնուած չէր: Նա փախաւ Սիբիրիայի գործարանները, այնտեղ նոր հրօսակներ ժողովեց և կրկին սկսեց իւր չարագործութիւնները: Կրկին լուրեր տարածուեցին նրա յաջողութիւնների և Սիբիրիայի բերդերի աւերման մասին:

Շուտով Ղազանի առման և ինքնակոչի Մոսկուայի վրայ արշաւելու լուրը խռովեց զօրքերի հրամանատարներին, որ անփոյթ նիրհում էին, անգոտնելի խռովարարի թուլութեան վրայ լուս գնելով: Զուրինը հրաման ստացաւ անցնել Ղուզան և շտապել Սիմբիրսկ, որտեղ արդէն բռնկուած էր հրդէհի բոցը: Այն միտքը, որ գուցէ ինձ կյաջողուի գնալ մեր գիւղը, գրկել ծնողներս և տեսնուիլ Մարիա Իվանովնայի հետ, ոգևորում էր ինձ: Ես երեխայի նման թուչկոտում ու Զուրինին գրկախառնելով կրկնում էի. «Սիմբիրսկ, Սիմբիրսկ:» Զուրինը հառաչում և ուսերը շարժելով ասում էր.

— Զէ, քո բանը բուրդ է. կամուսնանաս, գուր տղը կկորչես:

Մենք մօտենում էինք Ղուզայի ափերին: Մեր զօրախումբը հասաւ ***գիւղը և այնտեղ մնաց գիշերելու:

նականը սկիզբը բաւական կուպիտ կերպով ընդունեց ինձ, բայց իմ առաջնորդը նրան կամացուկ մի քան խօսք ասաց և նրա խստութիւնը իսկոյն փութալի ծառայակատարութեան փոխուեց: Մի րոպէից սալակը պատրաստ էր: Ես նստայ նրա մէջ և հրամայեցի գնալ մեր գիւղը:

Ես սրանում էի մեծ պողոտայով, քնի մէջ ընկղմուած գիւղերի մօտից անցնելով: Ես վախենում էի մի բանից, թէ մի գուցէ ճանապարհին արդելուիմ: Եթէ Վոլգայի վրայի գիշերային հանդիպումս ապացուցանում էր խռովարարների ներկայութիւնը այդ կողմերում, նա ապացոյց էր նաև զօրեղ ընդգրկմագրութեան կառավարութեան կողմից: Յամենայն դէպս ես գրպանումս ունէի Պուգաչեվի տուած անցագիրը և գնդապետ Զուրինի հրամանագիրը: Բայց ինձ ոչ ոք չպատահեց և առաւօտեան դէմ ես տեսայ գետը և եղևնի պուրակը, որի ետև գտնուում էր մեր գիւղը: Սալորդը մտրակեց ձիերին և մի քառորդ ժամից յետոյ ես մտայ ***գիւղը: Մեր տունը գտնուում էր գիւղի միւս ծայրում: Զիերը սրնթաց յառաջ էին վազում: Յանկարծ փողոցի մէջ տեղում սալորդը սկսեց նոցա սանձահարել:

— Ի՞նչ կայ, հարցրի ես անհամբերութեամբ:

— Փակուղի է, պարոն, ասաց սալորդը, գժուարութեամբ կանգնեցնելով ամենհացած ձիերին:

Յիրաւի, ես տեսայ փողոցի լայնութեամբ երկարացրած մի գերան և մի պահնորդ՝ մահակը ձեռքին: Պահնորդ գիւղացին մօտեցաւ ինձ, հանեց գլխարկը և ուզեց իմ անցագիրը:

— Այս թնչ կնշանակէ, հարցրի ես նրան. ինչի՞ համար է է այստեղ այս գերանը, թնչ պահպանութիւն ես անում դու այստեղ:

— Մենք, իմ պարոն, ապստամբութիւն ենք անում, պատասխանեց նա քերուելով:

Իսկ որտեղ են ձեր պարոնները, նուազող սրտով հարցրի ես:

— Մեր պարոնները, կրկնեց գիւղացին մեր պարոնները ցորենի ամբարի մէջ են:

— Ի՞նչպէս թէ ամբարի մէջ:

— Հրամել ես, գրագիր Անդրիւխան նոցա կալանավորել է և ուզում է տանել հայր-թագաւորի մօտ:

— Աստուած իմ. յետ տար գերանը, տխմար, թնչ ես բերանդ բաց արել:

Պահնորդը դանդաղում էր կատարել հրամանս: Ես դուրս թռայ սալից, մի լաւ կպցրի ականջին (ներողութիւն) և ինքս յետ քաշեցի գերանը: Գիւղացիս անմիտ տարակուսանքով նայում էր ինձ վրայ: Ես կրկին սալ նըստայ և հրամայեցի քշել գէպի մեր տունը: Հացի շտեմարանը գտնուում էր սրահում: Փակուած դռների առաջ, մահակները ձեռքերին, կանգնել էին երկու գիւղացիներ: Սալակը կանգնեց ուղիղ նոցա առաջ: Ես դուրս թռայ և յարձակուեցի նոցա վրայ: «Բաց արէք դուռը», ասացի ես նոցա: Երևի իմ տեսքը սարսափելի էր. գոնէ երկուսն էլ մահակները ձգեցին ու փախան: Ես փորձեցի փականքը պոկել կամ կտորել, բայց դռները կաղնեայ էին, իսկ ահագին փականքը անխորտակելի: Նոյն րոպէին ծառայախորժիթից դուրս եկաւ մի երիտասարդ գիւղացի և գոռոզ կերպարանքով հարցրեց, թէ ինչպէս եմ համարձակուում անկարգութիւններ անել:

— Ո՛ւր է գրագիր Անդրիւշկան, բղաւեցի ես. կանչել նրան ինձ մօտ:

— Ես ինքս եմ Անդրեյ Աֆանասեվիչը և ոչ Անդրիւշկան. պատասխանեց նա, գոռոզաբար ձեռքերը կողքերին դնելով. թնչ ես ուզում:

Պատասխանի տեղ, ես բռնեցի նրա օձիքից և քաշ տալով շտեմարանի մօտ, հրամայեցի բանալ դուռը:

Գրագիրը սկիզբը յամառում էր, բայց օրհնեալ ծեծը նրա վրայ էլ ազդեց: Նա հանեց բանալին ու դուռը բացեց: Ես ներս վազեցի և առաստաղի վրայ արած մի նեղ անցքից թափանցող աղօտ լուսով լուսաւորուած մթին անկիւնում տեսայ հօրս և մօրս: Նոցա ձեռքերը կապկապուած էին և ոտքերը ամրացուած էին կռճղերի մէջ: Ես վազեցի գրկախառնեցի նոցա և չկարողացայ ոչ մի խօսք արտասանել: Երկուսն էլ նայում էին ինձ վրայ մեծ զարմանքով. գինուորական կեանքիս երեք տարիները այնպէս էին փոխել ինձ, որ նոքա չկարողացան ճանաչել ինձ:

Յանկարծ ես լսեցի մի սիրելի, ծանօթ ձայն. «Պետր Անդրեյիչ, այդ Գո՛ւք էք:» Ես յետ նայեցի և միւս անկիւնում, նոյնպէս կապկապուած, տեսայ Մարիա Իվանովնային: Ես մնացի սառած: Հայրս նայում էր ինձ վրայ լուռթեամբ, չհամարձակուելով հաւատալ ինքն իրան: Ուրախութիւնը փայլում էր նրա երեսին: «Բարով, բարով, Պիտրուշա, ինձ իւր կրծքին սեղմելով ասում էր նա. փո՛ւք Աստճօյ, վերջապէս եկար:» Մայրս մի հառաչանք արձակեց և լաց եղաւ: «Պետրուշա, իմ սիրասուն, քնչպէս եկար այստեղ: Ողջ առճղջ ես:»

Ես շտապեցի սրովս կտրատել նոցա կաշկանդող պարանների հանգուցները և դուրս բերել նոցա բանդից: Բայց դռան մօտենալով, ես տեսայ, որ նա կրկին փակուած է:

— Անդրիւշկա, բո՛ց արա, գոչեցի ես:

— Ի՛նչպէս չէ, դռան ետեւից պատասխանեց գրագիրը դեռ սպասիր, քեզ ցոյց կտանք, թէ քնչ կնշանակէ անկարգութիւններ անել և թագաւորի աստիճանաւորներին օձիքներից քաշ տալ:

Ես սկսեցի գննել շտեմարանը, որոնելով դուրս գալու մի միջոց: «Նեղութիւն մի քաշիր, ասաց հայրս. ես այն տանուտէրերից չեմ, որ իմ շտեմարանները գաղտագողի ծակերով մտնել ու ելնել կարելի լինի:» Մայրս, որ մի բո-

պէ ուրախացել էր իմ գալուս վրայ, նորից յուսահատութեան մէջ ընկաւ, տեսնելով, որ ես էլ պիտի մասնակից լինիմ մեր բոլոր ընտանիքի կորստեան: Բայց ես նոցա և Մարիա Իվանովնայի հետ աւելի հանգիստ էի: Հետս ունէի մի սուր և երկու ատրճանակ. ես դեռ կարող էի դիմադրել պաշարման: Զուրինը պէտք է որ երեկոյեան հասնէր ու ազատէր մեզ: Ես այս ամենը հաղորդեցի ծնողներին և կարողացայ մօրս և Մարիա Իվանովնային հանգստացնել: Նոքա բոլորովին անձնատուր եղան տեսակցութեան ուրախութիւններին և մի քանի ժամեր խնդալի կերպով անցան փոխադարձ գգուանքների ու անընդհատ խօսակցութիւնների մէջ:

— Նու, Պետր, ասաց ինձ հայրս. բաւական ստահակութիւններ արիր և ես լաւ բարկացած էի քեզ վրայ: Բայց անցեալը լիշելու կարիք չկայ: Յոյս ունիմ, որ այժմ ուղղուել ու զելուել ես: Գիտեմ, որ դու ծառայել ես որպէս մի ազնիւ սպայ: Ապրիս, միտիթարեցիր ծերունուս: Եթէ այստեղից ազատուելովս էլ քեզ պարտական լինիմ, այն ժամանակ կեանքը ինձ կրկնապատիկ հաճելի կլինի:

Ես, արտասուալից աչքերով, համբուրում էի նրա ձեռքը և նայում էի Մարիա Իվանովնային, որը այնքան էր ուրախացել իմ ներկայութեամբ, որ բոլորովին երջանիկ ու հանգիստ էր երևում:

Կէսօրին մօտ մենք լսեցինք անսովոր աղմուկ ու աղաղակներ: «Այս քնչ բան է, ասաց հայրս. չլինի՞ քո զնգապետը եկաւ-հասաւ:» — «Անկարելի է, պատասխանեցի ես. նա երեկոյից առաջ այստեղ չի լինիլ:» Աղմուկը սաստկանում էր, շփոթայոյզ կերպով թմբկահարում էին: Սրահում արշաւում էին ձիաւոր մարդիկ: Նոյն ըրպէին պատի մէջ բացած նեղ ճեղքուածքից երևեց Սավելիչի սպիտակահեր գլուխը և խեղճ դաստիարակս ցաւագին ձայնով արտասանեց. «Անդրե՛յ Պետրովիչ, ողորմած տէր իմ, Պետր

Անդրեյիչ, Մարիա Իվանովնա, բանը վատ է գնում. չարագործները դիւղ մտան: Եւ գիտեա, Պետր Անդրեյիչ, ով է նոցա բերել. Եվարրինչ, Ալեքսէյ Իվանիչը, գրողը տանի Կրան:»

Այդ ատելի անունը լսելով, Մարիա Իվանովնան ձեռքերն իրար խփեց և մնաց անշարժ: «Լսիր, ասացի ես Սովեթիչին. մի որ և է մարդ ուղարկիր գետանցը, հուսարների գնդին ընդ յառաջ, և հրամայիր իմաց տալ գնդապետին մեր վտանգաւոր դրութեան մասին:»

— Բայց ում ուղարկեմ, պարոն, բոլոր երեխաները ապտամբած են, բոլոր ձիերը խլուած: Վայժէ, ահա արգէն սրահում են: Իէպի շտեմարանն են դիմում:

Այս ժամանակ գրսից մի քանի ձայներ լսուեցին: Ես մօրս ու Մարիա Իվանովնային նշան տուի անկիւնը հեռանալ, մերկացրի սուրս և պատնի վեր կանգնեցի դռան մօտ: Հայրս վեր առաւ ատրճանակները, երկուսի էլ շնիկները բարձրացրեց և կանգնեց ինձ մօտ: Փականքը դրդաց, դուռը բացուեց և երևեց գրագրի գլուխը: Ես սրով խփեցի նրա գլխին: Նա ընկաւ և իւր մարմնով խափանեց անցքը: Մեզ պաշարող ամբոխը անէծք թափելով փախաւ: Ես շէմքի վրայից հեռացրի վերաւորումս և դուռը փակեցի:

Սրահը լի էր գինուդուած մարդկանցով: Նոցա մէջ էս ճանաչեցի Եվարրինին: «Մի փախենաք, ասացի ես մօրս և Մարիա Իվանովնային. գեռ յոյս կայ: Իսկ Դուք, հայր իմ, այլ ևս մի արձակէք: Պահէնք վերջին փամփուշտը:»

Մայրս լռելեայն աղօթում էր Աստծուն: Մարիա Իվանովնան, նրա մօտ կանգնած, հրեշտակային հանդարտութեամբ սպասում էր իւր բաղդի որոշման: Դրսից լսում էին սպառնալիքներ, հայտնաք, ու անէծքներ: Ես կանգնած էի իմ տեղս, պատրաստ խոզխոզելու առաջին յանգուզն մարդուն: Յանկարճ չարագործները լռեցին: Ես լսեցի Եվար-

րինի ձայնը, որ, անունս տալով, կանչում էր ինձ:

— Այստեղ եմ, թնչ ես ուզում:

— Անձնատուր եղիր, Գրինեվ, դիմագրել անկարելի է: Քո ծերունիներին խղճա: Յամառութեամբ քեզ չես ապատիր: Ինչպէս և իցէ ձեռք կձգեմ ձեզ:

— Ապա փորձիր, զաւանճան:

— Ոչ ինքս վրայ կմտնեմ և ոչ իմ մարդկանց կփչացնեմ, այլ կհրամայեմ շտեմարանը կրակ տալ, այն ժամանակ տեսնենք ինչ պիտի անես, Բելոգորսկու Իօն-Քիշտա: Հիմայ ճաշելու ժամանակ է: Առ այժմ նստիր ու, քանի պարապ ես, մտածիր: Յիրկին տեսութիւն: Մարիա Իվանովնա, Ձեզնից ներողութիւն չեմ խնդրում. հաւանական է, որ այդ մթութեան մէջ Ձեր ասպետի հետ տաղտուութիւն չգրաք:

Եվարրինը, շտեմարանի մօտ պահակներ թողնելով, հեռացաւ: Մենք լուռ էինք: Մեզանից իւրաքանչիւրը խորհում էր ինքն իրան, չհամարձակուելով իւր մտքերը յայտնել ուրիշին: Ես ինձ ու ինձ երեւակայում էի այն ամենը, ինչ որ կարող էր նիւթել չարացած Եվարրինը: Իմ մասին էս համարեա չէի էլ հոգում: Խոստովանեմ արգետօք. ծնողներես դրութիւնն էլ այնքան չէր սարսափեցնում ինձ, որքան Մարիա Իվանովնայի վիճակը: Ես գիտէի, որ գիւղացիներն ու ծառաները պաշտելու չափ սիրում էին մօրս: Հայրս էլ, չնայած իւր խոտապահանջ բնաւորութեան, նոյնպէս սիրուած էր, որովհետեւ արգարախոհ էր և գիտէր իւր իշխանութեան տակ գանուած մարդկանց իսկական կարիքները: Նոցա խռովութիւնը մի մոլորութիւն էր, բուլեական մի արբեցութիւն, և ոչ նոցա զայրոյթի արտայայտութիւն: Ուրեմն հաւանական էր, որ ծնողներին ձեռք չտային: Բայց Մարիա Իվանովնան: Ինչպիսի վիճակ էր պատրաստում նրա համար անխիղճ ու անբարոյական Եվարրինը: Ես չէի կարողանում կանգ առնել այս մտքերի վրայ և

պատրաստուում էի աւելի շուտ սպանել Մարիա Իվանովնային, քան երկրորդ անգամ տեսնել նրան անգուլթ թըշնամու ձեռքում:

Անցաւ էլի մօտ մի ժամ: Գիւղի մէջ հնչում էին հարբեցողների երգերը: Մեր պահակները նախանձում էին նոցա և զայրացած մեր վրայ, հայտնում և տանջանքների ու մահուան սպառնալիքներով վախեցնում էին մեզ: Մենք սպասում էինք Շվաբրինի սպառնալիքների հետևանքին: Վերջապէս սրահում մեծ իրարանցում սկսուեց և մենք կրկին լսեցինք Շվաբրինի ձայնը:

— Է, լաւ մտածեցիք. անձնատուր լինում էք ինձ կամաւորապէս:

Ոչ ոք չպատասխանեց:

Քիչ էլ սպասելուց յետոյ, Շվաբրինը հրամայեց յարդբերել: Մի քանի ըոպէից յետոյ կրակը բռնկեց և լուսաւորեց միջին շտեմարանը: Ծուխը շէմքի տակ եղած ճեղքերից սկսեց ներս լցուիլ:

Այն ժամանակ Մարիա Իվանովնան մօտեցաւ ինձ և ձեռքս բռնելով, հանդարտութեամբ ասաց. «Բուական է, Պետար Անդրեյիչ, ինձ համար կորստի մի մտանք է թէ Զեզ և թէ Զեր ծնողներին: Շվաբրինը ինձ կ'լսէ: Դուրս թողէք ինձ:»

— Երբէք, գոչեցի ես զայրացած. գիտէք, թէ ինչ է սպասում Զեզ:

— Աւելի շուտ կ'մեռնիմ, պատասխանեց նա հանդարտութեամբ, քան թէ կենթարկուիմ որ և է անպաւառութեան: Բայց թերևս ես փրկեմ քեզ, իմ ազատչին, և այն ընտանիքը, որ այնպիսի մեծահոգութեամբ խնամեց խղճալի որբիս: Մնաք բարով, Անդրեյ Պետրովիչ: Մնաք բարով Աւզոտիա Վասիլեվնա: Դուք ինձ համար աւելի քան բարերար եղաք: Օրհնեցէք ինձ: Մնաք բարով և Դուք, Պետար Անդրեյիչ, հաւատացած եղէք որ .. որ ես...» Նա

լացեց և երեսը ծածկեց ձեռքերով: Ես խելագարուածի նման էի: Մայրս լալիս էր:

— Հերիք է դատարկ խօսիս, Մարիա Իվանովնա, ասաց հայրս. ո՞վ կ'թողնի քեզ միայնակ գնալ աւազակների մօտ: Կնոջ այտեղ ու լուր: Թէ մեռնելու ենք, մեռնինք միասին: Լսի՛ր էլի թնչ են ասում այնտեղ:

— Անձնատուր լինում էք թէ ոչ, գոչում էր Շվաբրինը: Տեսնում էք, հինգ ըոպէից յետոյ ձեզ կ'իտրովեն:

— Անձնատուր չենք լինում, չարագործ դու, պինդ ձայնով պատասխանեց հայրս: Նրա խորշոմներով պատած առուցք երեսը զարմանալի կերպով կենդանութիւն էր ստացել: Սպիտակած յոնքերի տակից պսպղում էին աչքերը: Դառնալով դէպի ինձ, նա ասաց. «Այժմ ժամանակն է:»

Նա բացեց դռները: Կրակը ներս սողաց և բռնկեց չոր մամուռով ճեղքերը լցուած գերանները: Հայրս արձակեց ատրճանակը, անցաւ բոցավառ շէմքից և գոչեց. «Յառաջ, հետևեցէք ինձ:» Ես բռնեցի մօրս ու Մարիա Իվանովնայի ձեռքերը և դուրս տարայ նոցա բաց օդի մէջ: Շէմքի մօտ, հօրս զառամեալ ձեռքով գնդակահար, ընկած էր Շվաբրինը: Աւազակների խումբը, որ մեր անսպասելի կերպով դուրս գալու ժամանակ փախել էր, իսկոյն սիրտ առաւ և սկսեց շրջապատել մեզ: Ես կարողացայ դեռ էլի մի քանի հարուածներ հասցնել, բայց յաջողակ ձգուած մի աղիւս դիպաւ ուղիղ կրծքիս: Ես վայր ընկայ և մի ըոպէ ուշաթափ եղայ: Ինձ շրջապատեցին ու զինաթափ արին: Երբ ուշքի եկայ, տեսայ Շվաբրինին՝ արիւնոտ խոտի վրայ նստած և նրա առաջ մեր ընտանիքը:

Ինձ պահում էն թևերս բռնած: Գիւղացիների, կողակների ու բաշկիրների մի ամբոխ շրջապատում էր մեզ: Շվաբրինը չափազանց գունատուած էր: Նա մի ձեռքով սեղմում էր վիրաւոր կողքը: Նրա գէմքը տանջանք ու սեղմում էր վիրաւոր կողքը: Նրա կամաց բարձրացրեց խակալութիւն էր արտայայտում: Նա կամաց բարձրացրեց

տայ նրա մօտ և բացառացէս նրանով էի զբաղուած: Թուում էր ինձ, թէ ծնողներս յօժարամիտ նայում էին մեր յարաբերութիւնների քնքոյշ բնաւորութեան վրայ: Մինչ այժմ էլ այդ երեկոն կենդանի է իմ լիշողութեան մէջ: Ես երջանիկ, կատարելապէս երջանիկ էի... Շատ այգալիսի բուսակներ կան մարդկային թշուառ կեանքի մէջ...

Միւս օրը հօրս իմաց տուին, որ գիւղացիները եկել են ներումն խնդրելու: Հայրս դուրս եկաւ պատշգամբը: Գիւղացիները նրան տեսնելու պէս չօքեցին:

— Ե՛, ի՞նչ էք ասում, լիմարներ, ասաց նա. ինչո՞ւ էիք խռովութիւն բարձրացնում:

— Մեղաւոր ենք, ողորմած տէր մեր, միաբերան պատապախանեցին նոքա:

— Հը, մեղաւոր ենք: Անկարգութիւն կանեն ու յետոյ իրանք էլ ուրախ չեն իւրեանց արածին: Ներում եմ ձեզ այն ուրախութեան առիթով, որ Աստուած արժանացրեց ինձ իմ որդի Պետր Սնդրեյիչի տեսութեան: Դէ, լաւ. զրգրացող գլուխը սուրն էլ չի կտրիլ:

— Մեղաւոր ենք, իհարկէ մեղաւոր ենք:

— Աստուած պարզ եղանակ է տուել: Ժամանակ էր խոտը հնձելու, իսկ դուք, լիմարագլուխներ, ի՞նչ արիք ամբողջ երեք օր: Գիւղացապետ, բոլորին էլ, առանց բացառութեան խոտքաղի ուղարկիր, և տես, շէկ անիծուած, շուտով բոլոր խոտը գէգերի դարսուած լինի: Կորէք, գնացէք:

Գիւղացիները գլուխ տուին և գնացին իւրեանց տիրոջ գործերը կատարելու, որպէս թէ ոչինչ էլ չէր պատահել:

Շվաբրինի վերքը մահացու չէր: Նրան պահակներով ուղարկեցին Ղազան: Ես տեսայ լուսամուտից, թէ ինչպէս տեղաւորեցին նրան սայլի մէջ: Մեր հայեացքները իրար հանդիպեցին: Նա կախ ձգեց գլուխը, իսկ ես շտապով հե-

ռացայ լուսամուտից. ես վախենում էի թշնամուս ստորացման ու անբաղդութեան ժամին իմ յաղթանակով պարծենցող երևիլ:

Զուրինը պէտք է շարունակէր լառաջ երթալ: Զնայելով մեր ընտանիքի մէջ էլի մի քանի օր մնալու ցանկութեանս, ես վճռեցի հետևել նրան: Ծանապարհ դուրս գալուս նախընթաց օրը ես գնացի ծնողներիս մօտ, այն ժամանակուայ սովորութեան համաձայն խորը գլուխ տուի, և խնդրեցի նոցա օրհնութիւնն ու համաձայնութիւնը Մարիա Բվանովնայի հետ ամուսնանալուս համար: Ծերունիները ինձ օտի կանգնեցրին և ուրախութեան արցունքներ թափելով, յայտնեցին իւրեանց համաձայնութիւնը: Ես բեղեցի: Թէ ի՞նչ էի զգում, այն էլ չեմ նկարագրիլ: Ով եղել է իմ գրութեան մէջ, նա առանց դրան էլ կհասկանայ: Ով չէ եղել, ես կարող եմ միայն խղճալ նրա վրայ և խորհուրդ տալ, քանի դեռ ժամանակը չէ անցել, սիրահարուիլ և ծնողների օրհնութիւնն ստանալ:

Միւս օրը զօրագունդը պատրաստուեց դուրս գալու: Զուրինը մնաս բարով ասաց մեր ընտանիքին: Մենք բոլորս էլ հաւատացած էինք, որ պատերազմական գործողութիւնները շուտով կդադարին: Ես յոյս ունէի մի ամսից յետոյ ամուսին լինել: Գնաս բարով ասելիս Մարիա Բվանան բոլորի առաջ ինձ համբուրեց: Ես նստայ սայլակը: Սավելիչը կրկին եկաւ ինձ հետ: Զօրագունդը դուրս եկաւ: Երկար ժամանակ ես նայում էի մեր գիւղական տան վրայ, որին կրկին թողնում հեռանում էի: Տխրագին մի նախաորին կրկին թողնում հեռանում էի: Տխրագին մի նախաորին կրկին թողնում էր ինձ: Կարծես ականջիս շրջնում էին, զգացում վրդովում էր ինձ: Կարծես ականջիս շրջնում էին, որ դեռ ո՛չ բոլոր դժբաղդութիւնները անցել են ինձ համար: Սիրտս մի նօր փոթորկի նախազգացում ունէր:

Հարկաւոր չեմ համարում նկարագրել մեր արշաւանքը և Պուգաչեվի հետ վարած պատերազմի վերջը: Մենք անց-

նում էինք Պուգաչեվի քարուքանդ արած գիւղերով և խեղճ բնակիչներից ակամայ վերցնում էինք այն, ինչ որ թողել էին աւազակները:

Ժողովուրդը չգիտէր, ում հնազանդուէր: Կառավարչութիւնը ամեն տեղ դադարած էր: Կալուածատէրերը թագնւում էին անտառներում: Աւազակների հրոսակները ամեն կողմ ոճիրներ էին գործում: Առանձին զօրախումբերի հրամանատարները, որոնք ուղարկուած էին այդ ժամանակ արդէն գէպի Հաշտարխան փախչող Պուգաչեվի ետեւից, ինքնիշխան պատժում էին թէ մեղաւորներին և թէ անմեղներին: Սարսափելի էր այդ բոլոր կողմերի դրութիւնը, ուր կատաղի կերպով տարածւում էր հրդէհը: Աստուած մի արասցէ տեսնել ռուսական խռովութիւն, անմիտ ու անագորոյն: Նոքա, որոնք խորհում են մեզնում անհնարին յեղաշրջումներ նիւթել, կամ երիտասարդ են և չեն ճանաչում մեր ժողովրդին, կամ խստասիրտ մարդիկ են, իւրեանց գլխից անցած և ուրիշների կեանքի հետ խաղ անող:

Պուգաչեվը փախչում էր, հալածուած Իվան Իվանիչ Միխելսոնից: Շուտով մենք լսեցինք նրա կատարեալ պարտութեան մասին: Վերջապէս Զուրիւնը լուր ստացաւ ինքնակոչի բռնուելու մասին և հրամայն իւր արշաւանքը դադարեցնելու: Պատերազմը վերջացած էր: Վերջապէս ես կկարողանայի գնալ իմ ծնողներին մօտ: Նոցա գրկախառնելու և Մարիա Իվանովնային (որի մասին ոչ մի լուր չունէի) տեսնելու միտքը բերկրութեամբ ոգևորում էր ինձ: Ուրախութիւնից ես թռչկոտում էի երեխայի նման: Զուրիւնը ծիծաղում և ուսերը շարժելով ասում էր. «Ձէ, քո բանը բուրդ է. կամուսնանաս, գուր տեղը կկորչիս:»

Մինչդեռ՝ օտարոտի մի զգացում թունաւորում էր իմ ուրախութիւնը: Ես մտածում էի այնքան անմեղ զոհերի արիւնով շաղախուած չարագործի և նրան սպասող սար-

սափելի պատժի մասին, և այս միտքը ինձ լուզում, անհանգստացնում էր: «Էմելիա, Էմելիա, ցաւելով մտածում էի ես. ինչու դու սուլինի բաժին չեղար, կամ ինչու մանրագունդը չչօշտեց քեզ. առաւել լաւ մահ դու գտնել չէիր կարող:» Ի՞նչ կհրամայէք. Պուգաչեվի մասին մտածելիս, անմիջապէս իմ մէջ զարթնում էր նրա կեանքի սարսափելի ըոպէներից մէկում ինձ ցոյց տուած պաշտպանութեան, և վատշուէր Շվաբրինից իմ նշանածին փրկելու միտքն, և այս երկու մտքերը միշտ անբաժան էին իրարից:

Զուրիւնը ինձ արձակուրդ տուեց: Մի քանի օրից լետոյ ես կրկին պիտի լինէի իմ ընտանիքի մէջ, կրկին պիտի տեսնէի Մարիա Իվանովնային... Յանկարծ մի անսպասելի դժբաղդութիւն սարսափահար արաւ ինձ:

Դուրս գալուս համար նշանակուած օրը, նոյն իսկ րուպէին, երբ ես պատրաստուում էի ճանապարհ ընկնել, ձեռքում մի թուղթ բռնած, չափազանց մտահոգ կերպարանքով, խրճիթս մտաւ Զուրիւնը: Կարծես մի ինչ որ ծակեց սիւրս: Ես վախեցայ, ինքս էլ չիմանալով, թէ ինչ բանից: Զուրիւնը դուրս ուղարկեց իմ ծառային և յայտնեց, որ ինձ հետ գործ ունի:

— Ի՞նչ կայ, հարցրի ես անհանգստութեամբ:

— Մի փոքրիկ անհաճօյութիւն, ասաց նա թուղթը ինձ տալով. կարգն, հէնց նոր եմ ստացել:


Ես սկսեցի կարգալ: Դա ամեն մի հրամանատարի առանձին ուղղուած մի գաղտնի հրաման էր ձերբակալելու ինձ, որտեղ և լինիմ, և պահակներով ուղարկելու Ղազան, Պուգաչեվի գործի համար հաստատուած քննիչ մասնաժողովին:

Քիչ մնաց թուղթը վայր էր ընկնում իմ ձեռքերից:

— Էլ ի՞նչ արած, ասաց Զուրիւնը. իմ պարտքն է հնազանդուել հրամանին: Երևի Պուգաչեվի հետ կատարած բարեկամական ճանապարհորդութիւններից լուրը ինչպէս և

իցէ հասել է կառավարութեան ականջը: Յոյս ունիմ, որ այս գործը ոչինչ վատ հետեանք չի ունենալ և որ դու կարդարանաս մասնաժողովի առաջ: Մի վհատիր ու գնա: Իմ խիղճս մաքուր էր, դատից ես չէ վախենում, բայց քաղցրիկ տեսութեան, գուցէ մի քանի ամիսներով, լետաձգուելու միտքը սարսափեցնում էր ինձ: Սալլակը պատրաստ էր: Զուրինը բարեկամաբար հրաժեշտ տուեց:

Ինձ նստեցրին սալլակը: Երկու հուսարներ սուսերամերկ նստան ինձ հետ և սալլակը լառաջ վազեց մեծ պողոտայով:



XIV

Պ Ա Տ

Мирская молва.
Морская волна.
Առաժ

Ես հաւատացած էի, որ այս ամենի պատճառը Օրենբուրգից իմ ինքնակամ հեռանալս էր: Զիարշաւ ասպատակութիւնը ոչ միայն երբէք չէր արգելուած, այլ և ամեն կերպ քաջալերում էր: Ինձ կարող էին մեղադրել անւերորդ գիւրագրգռութեան՝ և ոչ անհնազանդութեան մէջ: Բայց շատ վկաների ցուցումներով կարելի էր Պուզաչեվի

հետ ունեցածս բարեկամական յարաբերութիւնները հաստատել և այս բանը կարող էր գոնէ չափազանց կասկածաւոր երևել: Ամբողջ ճանապարհին ես խորհում էի ինձ հետ կատարուելիք հարցուփորձի մասին, մտածում էի տալիք պատասխաններիս վրայ: Ես վճռեցի դատաւորների առաջ լայտնել զուտ ճշմարտութիւնը, արգարանալու այս ձևը ամենապարզ և ամենայուսալի համարելով:

Ես հասայ ամայացած ու հրկիզուած Ղազան: Տների տեղ, փողոցներում դիզուած էին ածուխի կոյտեր և ցցուել էին սևացած պատերը առանց տանիքի ու լուսամուտների: Ահա թէ Խնչպիսի հետք էր թողել Պուզաչեվը: Ինձ տարան բերդը, որ անվնաս էր մնացել հրաճարակ եղած քաղաքում: Հուսարները ինձ լանձնեցին պահնորդ սպային: Նա հրամայեց կանչել դարբնին: Իմ ոտքերս կապեցին շղթաներով, որոնց ամրապէս կուցին: Յետոյ ինձ բանդ տարան ու մենակ թողին մի նեղլիկ, մթին, մերկ մերկ պատերով ու երկաթեայ վանդակապատ լուսամուտով սենեակի մէջ:

Սոյնատեսակ սկիզբը ինձ ոչինչ բարի բան չէր նախագուշակում: Սակայն ես ոչ արիութիւնս, ոչ յուս չէի կորցնում: Ես դիմեցի բոլոր վշտացեալների միխթարութեան և առաջին տնգամ ճաշակելով մաքուր, բայց քրքրուած սրտից բղխած աղօթքի քաղցրութիւնը, հանգիստ քնեցի, գլխիս վաղուան գալիքի մասին չհոգալով:

Միւս օրը բանդի պահապանը ինձ զարթեցրեց և լայտնեց, որ ինձ պահանջում են մասնաժողովում: Երկու զինուորներ սրահով տարան ինձ բերդապետի տունը, իրանք մնացին նախասենեակը և ինձ միայնակ ներս մտցրին ներքին սենեակները:

Ես մտայ բաւականին ընդարձակ մի դահլիճ: Թղթերով ծածկուած սեղանի շուրջը նստած էին երկու մարդիկ. մի հասակաւոր գեներալ, սառն ու խիստ կերպարանքով, և մի

երիտասարդ, շուրջ քսան և ութը տարեկան, գվարդիայի կապիտան, շատ հաճելի կերպարանքով, ճարպիկ ու ազատ վարուկեցողութեամբ: Լուսամուտին կից, սուանձին սեղանի մօտ, գրիչը ականջի ետևը խրած ու թղթի վրայ խոնարհած, նստել էր քարտուղարը, պատրաստ իմ ցուցումներս արձանագրելու: Սկսուեց դատական հարցուփորձը: Հարցրին իմ անունս և կոչումս: Գեներալը հարցրեց տեղեկացաւ, թէ արդեօք Անդրեյ Պետրովիչ Գրինեվի որդին չեմ ես: Իմ դրական պատասխանիս վրայ, նա խստութեամբ ասաց. «Սիսոս, որ այնպիսի յարգելի մարդը այսպիսի անարժան որդի ունի:» Ես հանդարտութեամբ պատասխանեցի, որ ինչ տեսակ և լինին ինձ վրայ ծանրացող մեղադրանքները, ես յոյս ունիմ ճշմարտութեան անկեղծ խոստովանութեամբ ցրել նոցա: Իմ վստահութիւնս նրան դուր չեկաւ:

— Դու, եղբայր, շատ ճարպիկն ես երևում, ասաց նա՝ երեսը թթուեցնելով. բայց մենք քեզ նմաներն ենք տեսել:

Այն ժամանակ երիտասարդ կապիտանը հարցրեց ինձ, թէ թնջ առիթով և երբ եմ մտել ես Պուգաչեվի ծառայութեան և թնջ յանձնարարութիւնների համար եմ գործադրուել:

Ես դժգոհութեամբ պատասխանեցի, որ, որպէս սպայ և ազնուական, Պուգաչեվի մօտ ոչ մի ծառայութեան մտնել և ոչինչ յանձնարարութիւն նրանից ընդունել չէի կարող:

— Հապա թնջպէս է պատահել, վրայ բերեց իմ քննիչը, որ ինքնակոչը խնայել է միայն ազնուականին և սպային. մինչդեռ նրա բոլոր ընկերները չարագործութեամբ սպանուած են: Ի՞նչպէս այդ միևնոյն ազնուականը և սպան բարեկամաբար խրախճանում է խռովարարների հետ, գըլխաւոր չարագործից ընծայ է ընդունում մուշտակ, ձի և յիսուն կոպէկ: Ինչքն է յառաջացել այսպիսի տարօրինակ մի բարեկամութիւն և թնջ բան կարող էր ծառայել նրան որպէս հիմք, եթէ ոչ դաւաճանութիւնը կամ գոնէ ստոր

ու եղեւնական փոքրհոգութիւնը:

Ես խորին կերպով վերաւորուեցի գվարդիայի սպայի խօսքերից և եռանդով սկսեցի իմ արդարացումը: Ես պատմեցի, թէ ինչպէս հարթավայրում, բուքի ժամանակ, ըս կսուեց իմ ծանօթութիւնը Պուգաչեվի հետ, ինչպէս Բելոգորսկայա բերդի առման ժամանակ նա ինձ ճանաչեց և խնայեց: Ես ասացի, որ ինքնակոչից, իրաւ, չամաչեցի ընդունել մուշտակը և ձին, բայց Բելեգորսկայա բերդը չարագործից պաշտպանել եմ հնարաւորութեան մինչև վերջին ծայր: Վերջապէս ես անուանեցի և իմ գեներալին, որը կարող էր վկայել իմ եռանդը Օրենբուրգի դժբաղդ պաշարման ժամանակ:

Խստադէմ գեներալը սեղանի վրայից վերցրեց մի բաց նամակ և սկսեց բարձր կարգալ:

«Ի պատասխանի Ձերդ Գերազանցութեան գրութեան պրայպորշչիկ Գրինեվի վերաբերութեամբ, որը որպէս թէ մասնակցութիւն է ունեցել ներկայ խռովութեան մէջ և չարագործի հետ մտել է ծառայութեամբ չթողատրուած և երգման պարտեաց հակառակ յարաբերութեանց մէջ, պատիւ ունիմ յայտնելու. լիշեալ պրայպորշչիկ Գրենեվը Օրենբուրգում ծառայութեան մէջ գտնուում էր անցեալ 1773 թւի հոկտեմբերի սկզբից մինչև ներկայ թւի փետրուարի 27-ը: Սոյն օրը նա քաղաքից հեռացել և իմ զօրախմբի մէջ այլ ևս չէ վերադարձել: Իսկ փախստականներից իմանում էինք, որ նա եղել է մօտաւոր աւանում Պուգաչեվի մօտ, նրա հետ միասին գնացել է Բելոգորսկայա բերդը, որտեղ նա առաջ ծառայում էր: Ինչ որ վերաբերում է նրա վարքին, ես կարող եմ... Այստեղ նա ընդհատեց ընթերցումը և խստօրէն ասաց. «Այժմ թնջ կ'ասես քեզ արգարացնելու համար:»

Ես ուզում էի շարունակել, ինչպէս սկսեցի, և նոյնպէս անկեղծ, ինչպէս մնացած ամենը, բացատրել իմ յարաբե-

րութիւնները Մարիա Իվանովնայի հետ, բայց լանկարձ զգացի մի անյաղթելի զգուանք: Ես մտածեցի, որ եթէ նրա անունը տամ, մասնաժողովը նրան հարցուփորձի կը կանչէ. իսկ նրա անունը գարշելի եղեռնագործների զրպարտանքների մէջ խառնելու և նոցա հետ երես առ երես խօսակցութեան բերելու միտքը այնպէս սարսափեցրեց ինձ, որ լեզուս բռնուեց և շփոթուեցի:

Իմ գատաւորներս, որոնք, ըստ երևոյթին, սկսել էին պատասխաններին բարեմտութեամբ ականջ դնել, շփոթուելու տեսնելով, կրկին նախապաշարուեցին իմ դէմ: Գվարդիայի սպան պահանջեց, որ ինձ դնեն երես առ երես գլխաւոր մատնչի հետ: Գեներալը հրամայեց կանչել «երեկուայ չարագործին»: Ես արագութեամբ դարձայ դէպի դուռը, ըստ պատելով ինձ մեղադրողին: Մի քանի րոպէից յետոյ շղթաները շունջեցին, դռները բացուեցին և ներս մտաւ Եվաբրինը: Ես գարմացայ նրա կրած փոփոխութեան վրայ: Նա սարսափելի նիհար էր ու գունատ, նրա դեռ քիչ առաջ խէժի նման սև մազերը սպիտակել էին: Երկար մօրուքը խճճուած էր: Նա կրկնեց իւր մեղադրանքները թույլ, բայց վստահ ձայնով: Նրա խօսքերով, ես լրտես էի զրկուած Օրենքուրգ՝ Պուգաչեփի կողմից, ամեն օր դուրս էի գալիս հրահրոցին, որպէս զի քաղաքում կատարուող ամեն մի բանի մասին գրաւոր տեղեկութիւններ տամ. վերջապէս ես բացարձակ անցել էի ինքնակոչի կողմը, նրա հետ բերդից բերդ էի ման գալիս, ամեն կերպ աշխատելով ոչնչացնել իմ գաւաճան ընկերներին, նոցա տեղերը ձեռք ձգելու և ինքնակոչի պարգևներով օգտուելու համար: Ես լռութեամբ լսեցի նրան և գոհ էի մի բանից. զգուելի չարագործը չարտասանեց Մարիա Իվանովնայի անունը, արդեօք այ պատճառով, որ նրա ինքնասիրութիւնը մորմօքում էր, ինչպէս շէլով Մարիա Իվանովնային, որը արհամարանքով մերժեց նրան, թէ նրա սրտում էլ թագնուում էր մի կայծ այնպէս:

զգացմունքի, որը ինձ էլ լռել ստիպեց: Ինչպէս էլ լինի, Բելոգորսկայա բերդի հրամանատարի աղջկայ անունը մասնաժողովի առաջ չարտասանուեց: Ես աւելի ևս հաստատուեցի իմ դիտաւորութեան մէջ և երբ գատաւորներն ինձ հարցրին, թէ ինչով կարող եմ ջրել Եվաբրինի ցուցումները, ես պատասխանեցի, որ մնում եմ իմ առաջուկ բացատրութեան վրայ և ինձ արդարացնելու համար ուրիշ ոչինչ ասել չեմ կարող: Գեներալը հրամայեց դուրս տանել մեզ: Մենք դուրս եկանք միասին: Ես հանդարտ նայեցի Եվաբրինին, բայց ոչ մի խօսք չասացի: Նա ժպտաց չարաբաստ ժպիտով և շղթաները բարձրացնելով ինձնից յառաջ անցաւ ու քայլերն արագացրեց: Ինձ կրկին բանդ տարան և այնուհետև այլ ևս հարցուփորձի չկանչեցին:

Ես ականատես չեմ եղել այն ամենին, ինչ որ մնում է ինձ հազորդել ընթերցողին: Բայց ես այնքան յաճախ լսել եմ նոցա պատմութիւնը, որ ամենափոքր մանրամասնութիւնները խորը տպաւորուել են յիշողութեաւս մէջ, և ինձ այնպէս է թւում, կարծես ես աներևոյթ կերպով ներկայ էի կատարուած դէպքերին:

Ծնողներս Մարիա Իվանովնային ընդունեցին այն անկեղծ, սիրալիւր քաղցրութեամբ, որ այնպէս յատուկ էր անցեալ դարու մարդկանց: Նոքա Աստծոյ շնորհ և ողորմութիւն էին տեսնում այն բանի մէջ, որ իրանց վիճակուեց ապաստանել ու զգուել խղճալի որբին: Եուտով նոքա անկեղծօրեն սիրեցին Մարիա Իվանովնային, որովհետև անկարելի էր նրան ճանաչել ու չսիրել: Իմ սէրը հօրս այլ ևս չէր թւում որպէս մի դատարկ ցնորք, իսկ մայրս միայն այն էր ցանկանում, որ իւր Պետրուշան շուտով ապաստանայ կապիտանի սիրուն աղջկայ հետ:

Իմ ձերբակալուելուս լուրը սարսափեցրեց մեր ընտանիքին: Մարիա Իվանովնան այնպիսի պարզութեամբ էր պատմում իմ ծանօթութիւնը Պուգաչեփի հետ, որ ծնող-

ներս ոչ միայն անհանգիստ չէին լինում այդ մասին, այլ և յաճախ ի բոլոր սրտէ ծիծաղում էին: Հայրս հաւատալ չէր ուզում, որ ես կ'կարողանայի խառնուած լինել այն գար շեղի խռովութեան մէջ, որի նպատակն էր գահի կործանումը և ազնուական տոհմերի ոչնչացումը: Նա խիստ հարցուփորձի է ենթարկում Սովեղիչին: Դաստիարակս չէ պահում, որ պարոնը (այսինքն ես) հիւր է գնացած եղել էմիլիա Պուգաչեվի մօտ և որ չարագործը ինչ որ առանձնապէս սիրում էր նրան, բայց երգում է, որ դաւաճանութեան մասին ոչինչ չէ լսել: Ծերունիները հանգստանում են և սպասում են բարեյաջող լուրերի: Մարիա Իվանովնան սաստիկ յուզւում է, բայց լուռ է մնում, որովհետև օժտուած էր վերին աստիճանի հեգութեամբ և ըզգուշամտութեամբ:

Անցնում է մի քանի շաբաթ... Յանկարծ Պետերբուրգից հայրս ստանում է մի նամակ մեր ազգակից իշխան Բ.-ից: Իշխանը գրում էր իմ մասին: Սովորական լաւաշաբանից յետոյ նա յայտնում էր, որ խռովարարների մտադրութիւններին մասնակից լինելու մասին եղած կասկածները դժբաղդաբար չափազանց հիմնաւոր դուրս եկան, որ ես իսկապէս պէտք է օրինակելի մահուան պատժի ենթարկուէի, բայց թագուհին, յարգելով հօրս մատուցած ծառայութիւնները և նրա գաւառեայ հասակը, վճռեց ողորմիլ յանցապարտ որդուս և ազատելով ամօթալի մահուան պատժից, հրամայեց աքսորել Սիբիրիայի հեռաւոր մասերը, մշտական բնակութիւն:

Այս անսպասելի հարուածը քիչ մնաց պէտք է մահացնէր հօրս: Նա զրկուեց իւր սովորական պնդութիւնից և նրա վիշտը, (որ սովորաբար անխօս էր) այժմ արտայայտւում էր դառն գանգատներով: «Ի՛նչպէս, կրկնում էր նա ինքն իրան կորցրած. իմ որդիս մասնակցել է Պուգաչեվի չար գիտաւորութիւնների մէջ: Ողորմած Աստուած, այս

ի՛նչ օրուայ հասայ: Թագուհին ազատում է նրան մահուան պատժից: Միթէ այդ բանը թեթեւացնում է իմ վիշտը: Մահուան պատիժը չէ ինձ սարսափեցնողը: Իմ նախորդներից մէկը մեռաւ կառափնարանի վրայ, պաշտպանելով այն, ինչ որ համարում էր իւր խղճի սրբութիւնը. հայրս տանջանքի ենթարկուեց Վալինսկու և Խրուչչեվի հետ: Բայց, ազնուականը դժէ իւր երգումը, միանայ աւազակների, մարգասպանների, փախստական ստրուկների հետ... Ամօթ և նախատինք մեր տոհմին:» Մայրս, նրա յուսահատութիւնից վախեցած, չէր համարձակուում լաց լինել և աշխատում էր նրա արիութիւնը վերականգնել, խօսելով համբաւի անճշտութեան և մարդկային կարծիքների անկայունութեան մասին, բայց հայրս ոչնչով չէր սփոփւում:

Մարիա Իվանովնան տանջւում էր ամենից աւելի: Հաւատացած լինելով, որ ես, եթէ ուզենայի, կկարողանայի արգարանալ, և ճշմարտութեան վերահասու լինելով, նա իրան յանցաւոր էր համարում իմ դժբաղդութեան մէջ: Նա ամենից թագցնում էր իւր արտասուքներն ու վիշտը և միևնույն ժամանակ չէր դադարում մտածելուց, թէ ի՛նչ միջոցով կարելի էր ինձ ազատել:

Մի երեկոյ հայրս, բազմոցի վրայ նստած, թերթում էր պալատական օրացոյցի թղթերը, բայց նրա միտքը հեռու տեղ էր և ընթերցումը նրա վրայ սովորական ներգործութիւնը չէր անում: Նա շուռացնում էր մի հին քայլերգ: Մայրս լուութեամբ գործում էր բրդեայ կրկնաշապիկ, որի վրայ երբեմն ընկնում էին արտասուքի կաթիլներ: Յանկարծ Մարիա Իվանովնան, որ նույն տեղը գործի էր նստած, յայտնեց, որ իրան անհրաժեշտ է Պետերբուրգ գնալ և խնդրեց միջոց տալ ճանապարհ ընկնելու: Մայրս շատ վշտագնեց: «Ինչի՞ք է պէտք Պետերբուրգ գնալ, ասաց նա. միթէ, Մարիա Իվանովնա, դու էլ ուզում ես մեզնից հեռանալ:» Մարիա Իվանովնան պատասխանեց, որ իւր ամբողջ

ապագայի բաղդը կախուած է այդ ճանապարհորդութիւնից, որ ինքը գնում է ազգեցիկ մարդկանց պաշտպանութեան և օգնութեան դիմելու, որպէս՝ իւր հաւատարմութեան գոհ գնացած մի մարդու աղջիկ:

Հայրս գլուխը կախ ձգեց: Ամեն մի խօսք, որ յիշեցնում էր որդու գործած կարծեցեալ ոճիրը, ծանր էր նրան և թւում էր որպէս մի դառն յանդիմանութիւն: «Գնա, աղջիկս, ասաց նա հառաչելով. քո երջանկութեան արգելք դառնալ չենք ուզում: Տայ Աստուած քեզ մի բարի փեսացու և ոչ թէ մի անարգ դաւաճան:» Նա վեր կացաւ ու դուրս եկաւ սենեակից:

Մօրս հետ միայնակ մնալով, Մարիա Իվանովնան մասամբ յայտնեց նրան իւր մտադրութիւնները: Մայրս արտասուքն աչքերին գրկեց նրան և խնդրեց Աստծուց, որ մտադրուած գործին բարեջաջող էլք տայ: Մարիա Իվանովնային պատրաստեցին և մի քանի օրից յետոյ նա ճանապարհ ընկաւ հաւատարիմ Պալաշայի ու Սավելիչի հետ, որը, բռնի ինձնից անջատուելով, մխիթարուում էր գոնէ այն մտքով, որ ծառայում է իմ խօսեցեալ հարսին:

Մարիա Իվանովնան ողջ առօրջ հասաւ Պետերբուրգ և տեղեկանալով, որ արքունիքը Յարսկոյէ-Սելոյումն է, վճռեց այդտեղ էլ մնալ: Նրան տուին մի անկիւն իջևանում, միջնորմի ետևը: Աւերատեսչի կիներ իսկոյն խօսք բացեց նրա հետ, յայտնեց, որ ինքը արքունի վառարանապետի քրոջ աղջիկն է և բաց արաւ նրան արքունի կեանքի բոլոր գաղտնիքները: Նա պատմեց, թէ թագուհին սովորաբար ո՞ր ժամին է զարթնում, երբ է սուրճ անուշ անում, երբ է զբօսնում, թէ նոյն ժամանակ թնջ իշխաններ են գտնուում նրա մօտ, թէ նա թնջ է բարեհաճել ասել երեկ սեղանի վրայ, ո՞ւմ է ընդունել երեկոյեան... Մի խօսքով, Աննա Վլասեվնայի խօսակցութիւնը արժէր պատմական գրութեան մի քանի երեսներ և շատ թանկագին կլինէր

ապագայ սերնդի համար: Մարիա Իվանովնան լսում էր նրան ուշադրութեամբ: Նոքա գնացին պարտէզ: Աննա Վլասեվնան պատմում էր ամեն մի ծառուղու, ամեն մի կամուրջի պատմութիւնը: Լաւ զբօսելուց յետոյ, նոքա վերադարձան իջևանը, բոլորովին գոհ միմեանցից:

Միւս օրը վաղ առաւօտեան Մարիա Իվանովնան զարթնեց, հագաւ շորերը ու լուիկ մնջիկ գնաց պարտէզ: Առաւօտը գեղեցիկ էր, արեգակը լուսաւորում էր լորենիների կատարները, որսնք արգէն դեղնել էին աշնան զով շնչից: Լայնարձակ լիճը պսպղում էր անդեղև: Ափի վրայ հովանի ձգող թփերի տակից ծանրամեծար դուրս էին լողում զարթնած կարապները: Մարիա Իվանովնան գնաց գեղատեսիլ մարգագետնի մօտով, որի վրայ դեռ նոր էր կանգնեցրած մի յուշարձան ի պատիւ Պետր Ալեքսանդրովիչ Բուճեանցեվի նորագոյն յաղթութիւնների: Յանկարծ անգլիական մի սպիտակ շնիկ հաչեց և վազեց նրա հանդէպ: Մարիա Իվանովնան վախեցաւ ու կանգ առաւ: Հէնց նոյն ըուպէին հնչեց կանացի մի հաճոյական ձայն: «Մի վախենաք, նա չի կծիլ:» Մարիա Իվանովնան տեսաւ մի կին, յուշարձանի դէմ նստարանի վրայ նստած: Տիկինը անթարթ աչքերով նայում էր նրա վրայ: Մարիա Իվանովնան մի քանի կողմնակի հայեացքներ ձգելով, կարողացաւ զննել նրան ոտից մինչև գլուխ: Նա հագած էր սպիտակ, առաւօտուայ շրջագգեստ և գլխին ունէր գիշերային չամչուկ: Հասակով նա թւում էր մօտ քառասուն տարեկան: Նրա լիքն ու կարմիր երեսը արտայայտում էր վսեմութիւն ու հանդարտութիւն, իսկ կապտաւուն աչքերն ու թեթևախաղ ժպիտը ունէին անպատմելի մի չքնաղութիւն: Տիկինը առաջինը խոցեց լուսութիւնը:

— Դուք երևի այստեղացի չէք, ասաց նա:

— Հրամել էք, ես երեկ միայն եկայ գաւառից:

— Դուք Ձեր ծնողների հետ էք եկել:

— Այ, ես միայնակ եմ եկել:

— Միայնակ. բայց Դուք զեռ այնպէս նորատի էք:

— Ես ոչ հայր ունիմ և ոչ մայր:

— Դուք, իհարկէ, այստեղ եկել էք որևէ գործով:

— Հրամե՛լ էք: Ես եկել եմ թագուհուն խնդիր տալու:

— Դուք որք էք. երևի Դուք գանգատուում էք Ձեր կրած անարդարութիւնների ու վերաւորանքների վրայ:

— Ոչ, ես եկել եմ շնորհ խնդրելու և ո՛չ արդարադատութիւն:

— Ներեցէք հարցնել, Դուք ո՞վ էք:

— Ես կապիտան Միրօնովի աղջիկն եմ:

— Կապիտան Միրօնովի: Նրա՞ արդեօք, որ բերգասելտ էր Օրենբուրգի բերդերից մէկում:

— Հրամե՛լ էք:

Տիկինը կարծես զգածուեց:

— Ներեցէք ինձ, ասաց նա, աւելի ևս քաղցրհամբոյր ձայնով, որ ես խառնուում եմ Ձեր գործերի մէջ. բայց ես երբեմն լինում եմ արքունիքում: Բացատրեցէք ինձ ինչո՞ւմ է կալանում Ձեր խնդիրը, և գուցէ ինձ յաջողուի Ձեզ օգնել:

Մարիա Իվանովնան վեր կացաւ և յարգանք շնորհակալ եղաւ նրանից: Անձանօթ տիկնոջ վրայ ամենայն ինչ ակամայ գրաւում էր մարդու սիրտը և հաւատք էր ներշնչում:

Մարիա Իվանովնան գրպանից հանեց ծալած մի թուղթ և տուեց իւր անձանօթ պաշտպանուհուն, որը սկսեց մըտաբի մէջ կարգալ:

Սկիզբը նա կարգում էր ուշադիր ու բարեհաճ գէմքով, բայց յանկարծ նրա կերպարանքը փոխուեց և Մարիա Իվանովնան, որ աչքով հետևում էր նրա ամեն մի շարժման, վախեցաւ նրա՝ մի ըոպէ առաջ այնպիսի հաճոյական ու հանդարտ գէմքի խստին արտայայտութիւնից:

— Դուք Գրինեվի համար էք խնդրում, սառն գէմքով ասաց տիկինը: Կայսրուհին չէ կարող ներել նրան: Նա ինքնակուշին յարեց ոչ տգիտութիւնից ու թեթեւամտութիւնից, այլ որպէս մի անբարոյական ու վնասակար սրիկայ:

— Ա՛խ, այդ ուղիղ չէ, բացականչեց Մարիա Իվանովնան:

— Ի՛նչպէս, ուղիղ չէ՞, կտրեց տիկինը բորբոքուելով:

— Ուղիղ չէ, վկայ է Աստուած, ուղիղ չէ: Ես գիտեմ բոլորը, ես կպատմեմ Ձեզ ամեն բան: Նա միմիակ ինձ համար ենթարկուեց իւր գլխի բոլոր եկածներին: Եւ եթէ նա դատաստանի առաջ չարդարացաւ, այդ միայն այն պատճառով, որ չկամեցաւ ինձ գործի մէջ խառնել:

Այնուհետև ազդու լեզուով նա պատմեց այն ամենը, ինչ որ արդէն յայտնի է ընթերցողին:

Տիկինը ուշադրութեամբ լսեց նրան:

— Ո՛ւր էք իջել, հարցրեց նա չետոյ, և լսելով, որ Աննա Վլասեվնայի մօտ, ժպտալով աւելացրեց. «Աս, գիտեմ: Մնաք բարով. ոչ ոքի մի ասէք մեր հանդիպումի մասին: Ես յոյս ունիմ, որ Ձեր գրութեան պատասխանին երկար չէք սպասիլ:»

Այս խօսքերն ասելով, նա մտաւ ծածկուած ծառուղին, իսկ Մարիա Իվանովնան, բերկրառիթ յոյսերով լի, վերագործաւ Աննա Վլասեվնայի մօտ:

Աննա Վլասեվնան յանդիմանեց նրան աշնանային կանուխ զբօսանքի համար, որ նրա ասելով, վնասակար է նորատի աղջիկների առողջութեան: Նա բերեց ինքնատեղ և թէյի բաժակը ձեռքին, այն է, սկսել էր իւր անվերջ պատմութիւնները արքունիքի մասին, երբ յանկարծ պատահական կառքը կանգնեց պատշգամբի առաջ և արքունի սպասաւորը սերս մտնելով յայտնեց, որ թագուհին շնորհ է անում իւր մօտ կանչել Միրօնովա օրիորդին:

Աննա Վլասեվնան ապշեց ու իրար խառնուեց:

— Վայմէ, Տէր Աստուած, բացականչեց նա. թագուհին պահանջում է Ձեզ արքունիք գնալ: Այդ թնչպէս նա քո մասին տեղեկութիւն առաւ: Բայց, քոյրիկս, թնչպէ պիտի ներկայանաք կայսրուհուն: Իո՞ւք, ես կարծում եմ, արքունի քայլով քայլել էլ չէք իմանում: Ես ինքս արդեօք չառաջնորդեմ Ձեզ: Այնուամենայնիւ մի բանի մէջ էլ է կարող եմ Ձեզ նախագգուշացնել: Եւ թնչպէս պիտի գնաք ճանապարհի հագուստով: Զուգարկէնք արդեօք մէկին դայակի մօտ, նրա դեղին բոբրոնը բերելու:

Արքունի սպասաւորը յայտնեց, թէ թագուհին ցանկանում է, որ Մարիա Իվանովնան միայնակ ոչ իւր վրայ եղած հագուստով գնայ: Ել ինչ արած: Մարիա Իվանովնան կառք նստաւ և գնաց պալատը, Աննա Վլասեփնայի խորհուրդներով ու օրհնութիւններով ուղեկցուած:

Մարիա Իվանովնան նախագգում էր մեր բաղբի որոշումը: Նրա սիրտը սաստիկ բաբախում էր ու նուազում: Մի քանի րոպէից լետոյ կառքը կանգնեց պալատի մօտ: Մարիա Իվանովնան դողդողալով սկսեց բարձրանալ սանդուխքը: Ի՞նչերը լայն բացուեցին նրա առաջ: Նա անցաւ մի երկար շարք հոյակապ ու դատարկ սենեակների միջով. արքունի սպասաւորը ցոյց էր տալիս նրան ճանապարհը: Վերջապէս մի փակ դրան մօտենալով սպասաւորը յայտնեց, որ իսկոյն նրա մասին կզեկուցանէ և նրան թողեց միայնակ: Կայսրուհու հետ երես առ երես տեսնուելու միտքը այնպէս զարհուրեցրեց նրան, որ նա դժուարութեամբ կարողանում էր ոտքի վրայ կանգնել: Մի րոպէից լետոյ դուռը բացուեց և նա ներս մտաւ թագուհու զգեստասենեակը:

Կայսրուհին նստած էր իւր զարգասեղանի առաջ: Մի քանի պալատականներ, որ շրջապատել էին նրան, յարգանք ճանապարհ տուին Մարիա Իվանովնային: Թագուհին քաղցրալիր կերպով զարձաւ դէպի նա և Մարիա Իվանովնան ճանաչեց այն տիկնոջը, որին մի քանի րոպէ յառաջ

այնպիսի պարզութեամբ յայտնում էր իւր ցաւը: Թագուհին մօտ կանչեց նրան ու ժպտալով ասաց.

— Ես ուրախ եմ, որ կարողացայ խօսքս պահել և կատարել Ձեր խնդիրը: Ձեր գործը վերջացած է: Ես համոզուած եմ Ձեր նշանածի անմեղութեան մէջ: Ահա մի նամակ, որ ինքներդ նեղութիւն քաշեցէք հասցնել Ձեր ապագայ սկեսրայրին:

Մարիա Իվանովնան դողդոջուն ձեռքով առաւ նամակը և լալով ընկաւ կայսրուհու ոտքերը: Կայսրուհին բարձրացրեց նրան, համբուրեց և սկսեց խօսակցել նրա հետ:

— Գիտեմ, որ Իո՞ւք հարուստ չէք, ասաց նա. բայց ես պարտական եմ կապիտան Միրօնովի աղջկան: Ապագայի մասին անհանգիստ մի լինիք: Ես ինձ վրայ եմ առնում Ձեզ նիւթապէս ապահովեցնելու հոգսը:

Թագուհին խեղճ որբին փայփայելուց լետոյ արձակեց: Մարիա Իվանովնան լետ դարձաւ նոյն պալատական կառքով: Աննա Վլասեփնան, որ անհամբեր սպասում էր նրան, հարցեր էր, որ թափում էր իրար ետևից, որոնց Մարիա Իվանովնան պատասխանում էր մի կերպ: Թէև Աննա Վլասեփնան դժգոհ էր նրա մոռացկոտութիւնից, բայց սոյն պակասութիւնը գաւառական ամօթխածութեան վերագրեց և մեծահոգութեամբ ներեց նրան: Հէնց նոյն օրը Մարիա Իվանովնան, Պետերբուրգը տեսնելու մտքից չհրապուրուելով, ճանապարհ ընկաւ դէպի Գիւրգու...

Վ. Ե. Ր. Զ.



[Faint, mirrored text, likely bleed-through from the reverse side of the page. The text is illegible due to fading and the texture of the paper.]

2931



2
1
2

4444

2013

20

178